Ивлоп
470.

ՎԵՆԵՏԻԿՈՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

ԱՆԱՆՈՒՆ

պարսաշագրին դէմ

Վենետիկ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1852

ՀՍՍՀ-ՍՍՌ
ПУБЛ. БИБЛИОТЕКА
Ն. ՍՍՀՄԻՈՒԹՅԱՆ ԳԻՏ.

ՎԵՆԵՏԻԿՈՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ա. ՆԱՆՈՒՆ

ՊԱՐՍԱՒԱԳՐԻՆ ԴԷՄ

Մատենադարան Պոլսոյ Սրբոյ Աստուածածնայ

Այս տարեւոյս (1852) Մայիսի մէջ անանուն տըպուած պարսաւագիր մը ելաւ իտալերէն, Ճակատը գըրուած Վենետիկու առուրբ Ղազարու Միխիթարեանը։ Թէպէտ և տպարանի ալ անուն չկայ, և սուտ ձեւացած է որպէս թէ Ամիկուռնա տպած, ուր տպագրութեան ազատութիւն չկայ, բայց շատ բանէ ալ յայտնի եղաւ և արքունի Քննութեան գրոց պաշտօնեայէն ալ բըրնուեցաւ և վկայուեցաւ որ հոս Ստամբոլ Փերշէմպէ փազարը տպուեր է Քոռոմկլեային տպարանը։ Ուստի աս աներես գիրքը առջի Ճակտէն կը խոստանայ ու կը սկսի սուտ խօսելու։ Ինչպէս սուտ է նաև գրքին Ճակատը միւս դրածն ու մէջն ալ ձեւացուցածը, որպէս թէ Մխիթարեանց Ազատագրութիւն ըսուած համառօտ երկու թերթ գրուածին և Քափէլլէթի լատին քահանային դէմ կը գրէ։ Ուշադրութեամբ կարդալով և յետոյ ուրիշ վկայութեամբ ալ յայտնի եղաւ, որ առաջուց պատրաստուած է եղեր աս գէշ գիրքը, հոքէն մէկալ կտորները մէջն ագուցիկ յաւելուած է։ Դրողն ալ թէպէտ և իր անունը ծածկեր է՝ Ճանչնալով հարկաւ իր գրած գրքին գերազանց աղուորութիւնը, բայց տեսնալով ալ յայտնապէս որ ցուցցուած հոգին, գրուցած խօսքերը, և բանեցուցած ոճը պիտի յայտնէն գինքը, վախէն որ չըլլայ թէ գինքը բերան

տան՝ պալմասէի օրէնքէն կը սկսի գիրքը, թէ դիմակաւոր մարդը անունովը բարեւել՝ քաղաքավարութիւն չէ. բայց գիտնայ որ իր երեսինը՝ դիմակ չէ, հապա Պէռթօլտօ՝ Պէռթօլտինօ՝ Բաքասէնսայի մաղն է։ Ստոյգ կ'ըսուի աւ որ հրատարակելէն ետեւ՝ առեր քաղեր է Ստամպօլէն՝ հռոմայեցի կամ եւրուբացի հաւահմայից ձախ կողմը։ Այս թէպէտ բոլոր աշխարհք կը խօսի և կը գրուցէ ատ դժոխային գրքին գրողը ով ըլլալը, բայց մենք դեռ չենք ուզեր գիտնալ, որ առանց նկատման կարենանք գրելու համարձակ պէտք եղած ճշմարտութիւնները։ Իրաւ ատ անիծից արմատ և խռովութեանց սերմ անանուն գիրքը չգիտեմ ո՞ր դժոխային սրտէ մը դուրս ելլալուն հետեւեալ օրը՝ Ֆռէնկ քահանայի մը անուն դուրս ելաւ իբրև գրքին շարադրողը. բայց ան՝ որ գրքին ճակատը չէ դրած իր անունը, օր մը ետքը անանկ համարձակ իր անունը տալուն պատճառը ինչ կրնայ ըլլալ, բայց եթէ բուն գրողին ով ըլլալը չյայտնուի և դիմակը չվերնայ. անոր համար մենք աւ իր տուած պալմասէին օրէնքին վրայ կենալով առանց անուան գրողին պատասխանը կու տանք. կարդացողները որուն կ'ուզեն նէ թող տան։

Այդ՝ ատ գրուածքը մենք աւ առինք կարդացինք ամենեին անխռովաբար, որ նայինք ինչ և որպիսի բան է։ Ցեսանք որ ուղղափառութեան ջատագով եղեր է, բայց մեղք որ ատ գրողը ոչ եթէ ուղղափառութեան, այլ մէկ կոյր նախանձու մը, կողմի մը և մարդու մը չափ դուրս կուսակից ու բարեկամ կը ցուցընէ զինքը ծայրէ 'ի ծայր, անանկ որ բաց 'ի իր անձնէն՝ բնաւ մարդ մարդու այնչափ բարեկամ եղած չէ և չկրնար ըլլալ։ Այս կարծես թէ նախանձու և ատելութեան և անձնական վրէժխնդրութեան հոգւով ոչ միայն լեցուած է, այլ և սատռուած ճաթած ընդդէմ Ա՝խիթարեանց, և իբրև թէ շարժեալ անոնց տպած Ջ՝ատագովութեան տեսարակէն անձանց պաշտպանութեան համար, նորէն դուրս քաշեր հաներ է քանի մը անոնց վրայ եղած հին ծթռած ամբաստանութիւնները, որոնց շատ ան գամ յաղթող պատասխաններ տրուեր է, բայց ատ Եռքի անդամն աւ ահա հարկ կ'ըլլայ տալ։ Օ՝ինք պաշտպանելը միշտ օրինաւոր է՝ գիտէինք, իսկ ուրիշի վնաս

սել՝ ոչ երբէք, բայց եթէ հարկ ըլլայ նոյնպէս անձին պաշտպանութեան համար, որպէս եթէ թշնամիդ քեզ մեռցնել ուզենայ, ինչպէս անանունը Մ՝խիթարեան-ները։

Ա՛ռ գրողը ինչպիսի մարդ և ինչ հոգւոյ տէր ըլլալը՝ մենք չենք ըսեր հիմայ հոս. կարդալէն ետքը պիտի հասկըցուի. բայց ինքն ալ բաւական կը զրուցէ յառաջաբանութեանը մէջ քիչ և ազգու խօսքով, որ կարդացողը յայտնի կ՝իմանայ։ Ա՛ն ենեթիկու հարիւր յիսուն տարեկան Մ՝խիթարեան միաբանութիւնը և սուրբ Ղ՝ազարու վանքը կործանելու՝ ջնջելու՝ փոշի ընելու և յաղս ցնդելու համար ելեր եմ՝, կըսէ. և աս բանիս պէտք էր, կ՝ըսէ (էջ VI), մեծահոգի մարդ մը, որ մարդկային ակնածութիւն և բնաւ որ և իցէ երկիւղ չգիտնայ բռնական միջոցներ ալ բանեցընելու որ իր վախճանին համար։ Այ՛ աս կարիճը ինքն է եղեր. որ մեր սուրբ աւետարանին լեզուովը յայտնապէս ըսել կ՝ըլլայ "յաստուծոյ չերկնչող և 'ի մարդկանէ չամաչող". և աս խոստումը զրբին մէջ ծայրէ 'ի ծայր հաւատարմաբար կը պահէ։ Այ՛ ոչ որ՝ ե՞նչ երկիւղ ըսելը կը հասկըցուի որ և ոչ գէթ մեծազօր արքայական տերութենէն վախ ունի եղեր ատ մարդդ, թէպէտ և Ղ՝րանը հպատակն է, կամ ուրիշ տերութեան մը, և հարկաւ եկեղեցական իշխանութեան մը։ Այ՛ աս ան մարդն է որ սօթթըւեր է Մ՝խիթարեանները և ազգին կէսը Ղ՝րան ապրստամբ զրպարտելու։

Ա՛ռ խրոխտ յանդգնութիւնը թէպէտ բաւական է խելաց պակասութիւնը ցուցընելու և զինքը դատապարտելու, բայց քանի մը կտոր բան միայն ըսենք հանուռ տիւ կարճ կարճ, առանց անանունին խորունկ աստուածաբանութեանը և խաբեբայ ճարտասանութեանը, պաշտպանողական զէնք միայն բանեցընելով և ոչ վնասողական։ Այ՛ իրեն անձնուն ճառատանքներին ցուցընենք միայն քանի մը անմիտ հակասութիւնը, ստասաց և խարդախ անիրաւութիւնը և կատաղի յանդգնութիւնը։ Այ՛ ասոնք ցուցընենք՝ չէ թէ անանկ քանի մը ծակէ ծուկէ փոշոտած ու ծխոտած անյայտ և անծանօթ և շինծու թղթեր և զրուածներ մամուկներուն տնէն դուրս հանելով, խաբէութիւն հիւսելով, այլ ա-

մենուն աչքին առջին տեսնուելու և ձեռքով բռնուելու բաներ մէջ բերելով և շատ տեղ զինքը իր խօսքովը բռնելով, և ոչ դրսէ դուրս վկաներով։ Ճշմարտութեան ուժով խօսքը՝ երկան տեսարանները և ռամիկը խաբելու պտոյտ մէջէ մէջ փարիզնթազիզներով շատխօսութիւն ջուլեր. մէկ, բայց սաստիկ և լուսաւոր կայծակի մը պէս մարդուն գլխուն կը զարնէ կը լլմնցնէ։ Այս ըսողը՝ խելք ունի նէ՝ մէկալ մնացածին համար (թէ որ դուրս բան մնացեր է նէ), անոր վրայ առնելու է առակն որ կ'ըսէ,

Ըստախօսին տունն է երեր,
Պոռացեր՝ մարդ չէ հաւատացեր։

Այս որովհետև անանունը Մ՝խիթարեանները կեղծաւոր կը բամբասէ, մենք ալ անկեղծ համարձակախօսութիւն մը ձեռք առնենք հոս։ Այս թէ որ խօսքերնուս անօրէն ապստամբ հարկը զմեզ ստիպէ՝ մէկ կամ մէկալ կողմին դպչելու բան մը ըսել, հիմկուց ներում կը խնդրենք, և անով մտերիմ՝ բարեկամութիւնիս չենք աւրեր։

Լսէս աս կ'ըսենք որ ատ բնաւ մէկ որ և իցէ վախ չգիտցող մարդը՝ ինչու ատանկ վախցեր ու ոչ միայն իր անունը չէ դրեր դրքին Ճակատը, այլ և ոչ տպարանինը։ Թէ որ կտրիճ՝ էր և գրածին Ճշմարտութեանը վրստահ, ինչու իր անունովը բաց երեսով մէյտան չէ ելեր։ Աչ մէկ պզտիկ հակասութիւն մըն է իր խոստացած մեծահոդի բարուցը, բայց շատ պատիւ չբներ իրեն՝ ալ՝ իրենները ալ և ոչ դատերնուն արդարութեանը։

Դանք բուն խնդրոյն վրայ եղած մեծ և այլանդակ խենթ հակասութեանը։ Մ՝խիթարեանները ջնջելու է, կ'ըսէ աշխարհքիս, վասն զի արմատէն ու աղբիւրէն ապականեալ՝ ոչ միայն հերձուածող են, այլ և հերետիկոս։ Գրեանքներով ու թղթերով կ'աշխատի ցուցընելու որ բուն իսկ ինքն Մ՝խիթար աբբան հերետիկոսապետ էր, հերետիկոս վանք մը և հերետիկոսութեան վարդապետներ հանեց. որպէս թէ կը պակսեր կոր աշխարհքիս վրայ, և Մ՝խիթարայ մնացեր էր։

Թէ որ ուրթսունվեց տարուան առաքինի Հռովմայեցին "Դանն բան է, ըսաւ, ուրիշ մարդկանց մէջ ա-

պրիչ, և ուրիշներուն առջին ինք զինքն արդարացնել,, , հապա որչափ ևս առաւել Հարիւր յիսուն տարեկան միաբանութեան մը՝ իր և իր մեռած դացածներուն հա մար դատաստան քաշուիլ ու պատասխան տալ։ Այց համբերութեամբ տեսնենք ատ անանունին ըսածին ա պացոյցը ինչ կ'ըլլայ կոր։ Մտիկ ըրէ աղուոր խելք, ա ղեւոր տրամաբանութիւն և արդարութիւն։ Կը գանէ կոր եղեր անանունը՝ որ Մխիթար տասը կանոն տուեր է եղեր գրով իր աշկերտներուն, բոլորն ալ անխելք և ուղղափառութեան դէմ։ Այս ամենուն ծանօթ է, կ'ըսէ, որ Մխիթարեանք աս տարիքս են եկեր քնաւ մէկին ալ չիտեն, չեն լսած։ Աս խենթ գրուածը՝ ոչ Մխի թարայ օրը կ'ելլէ կոր դուրս, այլ մեռնելէն երսուն տա րի ետքը։ Սուրբ Յովհաննէսը տեսածին պէս՝ կը գրէ կը խաւրէ կոր Մելգոնեան երկրորդ աբբային, թէ ինչ է աս, գիտէք մի։

Աբբահայրը՝ բոլոր միաբանից ստորագրութեամբ կը գրէ սուրբ Յովհաննին, որ քաւ լիցի ասանկ խենթ ա սանկ մոլար բան Մխիթարայ մնքէն ալ, սրտէն ալ, բերնէն ու գրչէն ալ՝ ոչ լսեր ենք, ոչ տեսեր, և ոչ ալ կը ճանչնանք։ Թշնամւոյ գործ է, որ կամ՝ աղտ նետել ուզեր է Մխիթարայ վրայ, կամ իր խենթ խելքին հա մաձայն ցուցընել զանի։ Այս աս խօսքերէն ետքը՝ ամէն մէկ կանոնն ալ մէկիկ մէկիկ կը շարէ ու կը հերքէ, կը մերժէ, կը դատապարտէ ծանր ծանր դատակնիքներով։ Աս պատասխանը կը դնէ կը խաւրէ սուրբ Յովհաննին, որ կարդալով իր խմաստութեամբը և արդարութեամբը՝ կը համոզուի ու ալ ձայն չհաներ։ Աստիկայ ասանկ ան անունին գրքին մէջն է։

Այս սակայն ինքն անանունը՝ քան զսուրբ Յովհան ու քան զսուրբ Աթոռը միւս ևս գերագոյն ժողով և աթոռ, չընդունիր աս պատասխանը, չհաւանիր։ Իշ խանաբար առանց ցուցման սուտ է, կը ստէ կոր, սուտ զրուց և խաբեբայ է Մելգոնեանը՝ կը պոռայ։ Ի՞նչ գիւրին ճամբայ։ սուտ է ըսելով մերժել ամենայն արդարացուցմունք։ փուչ տեղը կը յոգնին այնչափ արդա րութեան ատեաններ և Կիկերոններ և Ղիմոթեենեներ։

Անանունին մէկ ուրիշ աղուոր տրամաբանութիւնն ալ

կայ հոս։ Մխիթարայ հերետիկոսաց հետ անխտիր ըլլալն ու հետերիկոսապետ ըլլալն աս տասը կանոնով կը ցուցընէ, և կանոններուն ճշմարիտ Մխիթարայ գործք ըլլալը՝ իրեն անխտիր հերետիկոսաց հետ հաղորդակցութիւն ընելէն կը ցուցընէ։ Մխիթար հերետիկոսապետ էր, վասն զի ասանկ կանոններ տուեր է։ Մխիթար ստոյգ ասանկ կանոններ տուած է, վասն զի անխտիր հաղորդ էր հերետիկոսաց հետ։ Ուրիշ տրամաբանութիւն մը գտնէք նէ, մենք ալ մարդ չըլլանք, թող թէ ուղղափառ։ Այս սակայն նոյն ինքը (էջ 38) յայտնապէս կը խոստովանի՝ որ ան հերետիկոս Մխիթարը իրեն ան տասը կանոնովը՝ հերձուածողք Ստամբոլէն հալածեցին ու քշեցին։ Մտիկ ըրէ տրամաբանութիւն և հետևութիւն։

Խնտալու անմտութիւնը ան չէ, հապա ան՝ որ եթէ այն կանոններն իրաւ ըլլար՝ Մխիթար աբբան չէ թէ հերետիկոս, այլ կապելու խենթ կ'ըլլար։ Հերիք է լսել եօթներորդ, ութերորդ և իններորդ կանոնները. ինչ կ'ըսեն կոր ասոնք. լսէ. 7. "Պապը և Բրոբականտայի սուրբ Յողովը աստիճանէն ձգեր են Դեր. Որամենդոսը Ստամպօլու առաքելական և պատրիարքական Աթոռը, վասն զի յայսմ ('ի հաղորդակցութեան յաստուածայինս ընդ հետերիկոս) Մխիթար Աբբայն հակառակ էր։ — 8. Պապը և Բրոբականտայի սուրբ Յողովը դրին Մխիթար հայրը երբև պատուար և հովիւ որ պահէ և պահպանէ հայ կաթոլիկ ազգը, որ նոյն Աբբայն կանոններուն և խրատներուն միայն պէտք է հետևի. և ուրիշ ամէնուն իրաւասութիւնը նոյն ազգին վրայէն կ'առնեն կը վերցընեն։ — 9. Ուղղափառները այնպէս պարտական են հնազանդելու Աբբահօրը և իր աշակերտներուն, ինչպէս պարտական են հնազանդելու սուրբ Եկեղեցւոյ"։ Որ խենթանոցը տեսեր էք ասանկ խենթ մը՝ որ վանքի մը գլուխ ըլլայ, և չըկապեն զինքը։ Այս սակայն, անանունին կէօրէ, ատ է Մխիթար աբբան։ Որ յոյծ ցուցանէ, ոչինչ ցուցանէ, կ'ըսեն փիլիսոփաները։

Բայց եկու աս ամէնը կըլլէնք. դնենք որ սուտ է Մելգոնեանը, սխալեր խաբուեր է սուրբ Յողովը, և իրաւունքի հերետիկոսապետ ալ է եղեր աս խենթ Մը-

խիթարը։ Խիստ աղէկ, ատանկ ըլլայ։ Իսկ արդ՝ ինչպէս հասպա ետքը կը դառնայ անանունը երկու հեղ կ'ըսէ (էջ 28, 50) որ Մեռած գացած մարդուն հիմայ կը ներեմ բան չեմ ըսեր, կը յուսամ որ ան յունարենական դրկուելեան հանգիսաւոր հասեր է աստուծոյ ողորմութեամբը։ Վասն զի կ'աւտամ որ 'ի ծոց սուրբ հաւատքին եկեղեցւոյ մեռեր է։ Հանի տեղ ան տետրակին մէջ Աստուծոյ և սուրբ եկեղեցւոյ դատաստանը չէ յափշտակեր ատ գրողը։ Հոս ալ ինչ կ'ըլլար անանկ ըսեր՝ ըսեր թէ կորեր է, դժոխքին տակն է։ Պիտի ըսէ թերևս, որ ես բառերս կշռեր եմ կը յուսամ, կ'աւտամ, կ'ըսեմ կոր, և թէ ասպուծոյ ողորմութեամբը։ Որ ուղղափառ մեռնողին ատկէ եւել կ'ըսենք, ոչ ասպաքէն կը յուսանք, կ'աւտանք է, ան ալ միշտ Աստուծոյ ողորմութեամբը։ արդեօք անանունը առանց Աստուծոյ ողորմութեանը ստիպ անշուշտ պիտի փրկուի։ Ասէ հիմայ իր տրամաբանութեան հետևութիւնը։ Մ'խիթար աբբան հերետիկոսապետ, իր վանքը ուր որ մեռաւ՝ հերետիկոս, 'ի կէտ մնհուան քովը գտնուող իր վարդապետները բոլորը հերետիկոս, ինքը անոնցմէ արձակում և թոշակ և վերջին խորհուրդ առաւ մեռաւ հերետիկոս։ Վասն զի ոչ մէկ տեղ գրուած կամ լսուած չկայ՝ որ Վենետիկու լատին քահանայ մը կամ Պատրիարքը կանչեր, դարձի եկեր, արձակում առեր՝ անանկ մեռեր է։ Իսկ արդ, ինչպէս ասանկ մեռնողը փրկութեան կը հասնի և 'ի ծոց սուրբ եկեղեցւոյ մեռած կըլլայ, կը հարցընենք։

Տեսար որ ատ անանուն գրողն ինքն է հերետիկոս։ Վասն զի ուրիշ մէկը չկրնար ատ բանդ ըսել։ Ինքն ու իր խելքին կողմնակիցներն են շատոնց հերետիկոս։ Մէյ մը ատ խօսքին հասնիր, մէյ մ'ալ որ Հռոմայ սուրբ Աթոռին՝ իր ուղղափառ որդի Հանչցածներուն՝ և այսչափ առաքելական վիքարներու և իրեք աղգային Կաթողիկոս եպիսկոպոսապետներու ընդունած և հոգևոր իշխանութիւն տուած վարդապետներուն՝ մէկը հերետիկոս որ ըսէ նէ, կը հարցընենք դարձեալ՝ ովվ կ'ըլլայ հերետիկոս, ըսողը մի, չէ նէ ըսուողները։

Մենք ասանկ գիտենք, որ մինչև սուրբ Աթոռը չվճռէ մէկը հերետիկոս, միայն անանուն գրողը չէ որ,

իրեն պէս հաղարներ հաղար տարի պոռան Ճաթին նէ, ոչինչ է. իրենց հոգին կը յայտնեն, և մաքուր կլոր գիրերով հերետիկոս են։ Այլ սուրբ Աթոռին ուղղափառ Ճանչցած՝ ընդունած և վՃիռներով արդարացուցածներուն հերետիկոս ըսելը՝ էն մեծ հերետիկոսութիւնն է։ Այսն զի իրենց ըսածէն աս կը հետևի որ եթէ Մխիթարեանք իսկզբանէ հետէ հերետիկոս էն եղեր նէ, ուրեմն սուրբ Աթոռը դար ու կէս խաբուեր սխալեր է, և ինչպէս սուրբ և անսխալ առաքելական Այր եկեղեցւոյ աթոռ կ'ըլլայ. էջ, սուրբ Աթոռը չսխալիր նէ, Մխիթարեանք հերետիկոս չէն, հապա անանուն գիրքն է անօրէն հերետիկոս։

Բայց գիտէս ինչ է Մխիթար աբբան արքայութիւն խոթելը. հիմայ ըսենք։ Թէ որ բոլոր Մխիթարեանք ամէնքը մէկէն մէկ օրուան մէջ իր բաղձանքին կէօրէ՝ մեռնելու վերնալու ըլլան նէ, ամենուն ալ սիրով ողորմիս կը հանէ անանուն Ցօն Կասպառոն, փառաւոր պաշտօն պատարագ մը ալ կ'ընէ, հոգոյն ալ կ'ըսէ, ինչպէս ըրած ալ ունի ոմանց վենետիկցի հերետիկոսաց համար, մանաւանդ Ճոխ պատարագուց մ՝ որ տրուելու ըլլայ. և փութով ալ կը թաղէ, որ չըլլայ թէ ողջընայ ելլէ։ Պնա մեռիր, եկու սիրեմ է անոր բանը։

Այսպիսի հերետիկոսապետ Մխիթարը՝ Մխիթարեանք ինքիր գլխընուն սրբացուցեր ու մասունքն ալ կը բաժնեն կոր եղեր (էջ 50)։ Անիրաւ զրպարտութիւն։ Հապա ինչ է շիտակը։ Լսէ։ Սուրբ Աթոռին կանոնները՝ համաձայն Վենետիկու պատրիարք կարդինալը և աստուածաբանից ատեանը՝ Մխիթարայ բոլոր կեանքը՝ վարքը և գրքերուն վարդապետութիւնը տարինեռով քննելէն ետև, աս անձը երանացընելու ուրիշ բան չի պակսիր և չի փնտռուիր ալ, բայց միայն մէկ երկու հրաշք, ըսեր է այն ատեանը։ Այլ ըստ իւրեանց օրինաց հրամայն տուեր են՝ որ Մխիթարայ այլ և այլ բաներէն տրուի բարեպաշտ հաւատացելոց, պարզ վկայականով մը՝ թէ աս տրուածս՝ Մխիթարայ մէկ կտոր բանն է, ոչ թէ սրբոյ մասունք եպիսկոպոսի վկայութեամբ սուրբ խորան դրուելու, ու հրապարակաւ ժողովրդոց յարգութեան և պաղնելու հանելու։ Որպէս զի թէ որ հաՃի Աստուած և բարեպաշտ Ջերմեռանդից

աղաչանացը լսելով հրաշք մը ընել տայ, սրբութիւնը յայտնուի։

Ազնանունն որ Թովրեանց Հ. Ռափայէլին խրատ կուտայ Բենեդիկտոսի ԺԴ. սրբազան քահանայապետին քառահատոր միածալ սրբոց երանացուցման վրայի գիրքը կարդալու, կ'երևայ թէ ինքը անունը միայն լսած պիտի ըլլայ այն գրքին, կամ շատ շատ դուրսէն մէյմը տեսած. վասն զի չենք կարծեր որ այն հատորներէն քանի մը երես ալ կարդացած ըլլայ. չէ նէ մէկէն կ'իմանար որ այն գրքին վարդապետութիւններէն դուրս բան մը եղած չէ Մխիթար Աբբահօրը երանացուցման վրայօք։ Եւ այն լատիներէն վկայականն որ չի հաւնիր ինքը, բուն Ծիսից ըսուած սուրբ Յողովքին փաստաբանութիւնէն մէկուն գրուածքն է. այս փաստաբանին ձեռքն է մինչև հիմակ և հիմակու Մխիթար Աբբահօր վարուցը դատաստանին վրայ եղած ամէն գրուածքը։ Բայց ինչ կը զարմանաս. Սրբազան Պապերու խօսքերուն չի հաւատացող անանունը, Ծիսից սուրբ Յողովքին փաստաբանի մը խօսքին պիտի հաւնի։ Եւ ինչպէս ամէն տեղ ստութեան հետ խարդախութիւն ալ կ'աւելցընէ, հոս ալ չէ մոռցած իր ատ բարի սովորութիւնը. վկայականին մէջն որ տպած է S. D. P. Mechitar որ է Servi Dei Patris Mechitar ծառային Աստուծոյ Հօրն Մխիթարայ ինքը կը փոխէ ու կ'ընէ S. P. D. Mechitar ու 'ի հարկէ կը կարդայ Sancti Patris Divi Mechitar Սրբոյ Հօրն աստուածայնոյն Մխիթարայ։ Պոնէ վկայականը տպած չըլլար ու ձեռագիր ըլլար նէ՝ աս խարդախութիւնը կարելի է ծածուկ մնար. բայց տպած օրինակները անանունին խայտառակութիւնը արևելք արևմուտք յայտնի կ'ընեն։ Իսկ Տրապիզոնի պատմած խեղկատակութիւնները իրեն պէս անկրօն սրտի ու մտայ վայելուչ բաներ են. վասն զի Տրապիզոն մարդ չի կայ որ Մխիթարայ ու Մխիթարեանց անունը լսած չըլլայ. անոնցմէ եօթանասուն ֆամիլիայի ստորագրութեամբ թուղթ կայ քովերնիս որ Մխիթարայ վանքին քահանայ կ'ուզէն, ու Մխիթարայ անունը լսած չէն եղեր։ Դաղծը այս է, իսկ բոլոր գրքին մէջ զրպարտութիւն և անվայել ծաղրաբանութիւն ասանկ անձին մը վրայ՝ որչափ որ չես կրնար հաւատալ, և որչափ Լիկուր-

գոսի լակոնական կրթութիւնն ալ չի կրնար տանիլ։

Աղուոր մին ալ կայ (էջ 39)։ Յիսուսեան կրօնաւորները, որոնց հետ տեսնուեր է Մխիթարը, երեն վանական՝ խորամանկ և ուղղափառութիւնը տակն ու վրայ ընելու միտքը և վարդապետութիւնները տեսեր հասկըցեր են եղեր. և շատ բան որ այն արթուն և շատգէտ ուղղափառութեան ջատագով քարոզիչները՝ սուրբ Արթուին չեն իմացուցեր, ինչպէս պարտքերնին էր, որ արգելէ անոր յառաջադիմութիւնը. կամ թէ իմացուցեր են, և անփոյթ եղեր է։ Այս կտորս ալ թող աղէկ մտիկ ընէ Յիսուսեան մեծարոյ ընկերութիւնն ալ, որոնց Հ. Ընդրեաս Արթուրլնին Սուրբ Ղազարու վանքը կրթիչ և դաստիարակ կը խաւրէ անանուն երկրորդ պապը (էջ 241)։

Այսոր նման է մէկ ուրիշ պզտի հակասութիւնն ալ, որ կը պռռայ չորս դին՝ թէ Մխիթարեանք Հայոց հերձուածող չէն ըսեր, անխտիր ժամերնին կ'երթան, հաղորդակցութիւն կ'ընեն յաստուածայինս. որ ոչ երբէք տեսեր ենք կամ լսեր ապացուցաբար. զի զրպարտութիւնը ապացոյց ըլլար նէ, մէկ արդար մը չէր գտնուեր, և ոչ իսկ Բրիստոս։ Այս հակասութիւն ըսինք, վասն զի թէ որ իրաւ ըլլար նէ, Հռովմ դար ու կէս չէր քնանար և հիմայ արթննար, շատոնց ջնջած կ'ըլլար զիրենք։ Բրիսոին մոլորութիւնն իսկ այսչափ երկար չքշեց եկեղեցւոյ մէջ, և Հռովմ՝ իր ծեր Պատոնին ամենօրեայ զուրցելէն այնչափ անգամ չէ լսած՝ "Ջնջելու է Պարքեդոն", որչափ դար ու կէս այսպիսի անօրէն զրպարտիչներէն "Ջնջելու է սուրբ Ղազար"։

Այսկէ 'ի զատ, նոյն իսկ Հայերն ալ վկայ են, որ ատ հաղորդակցութիւնը եղած բան չէ. հարիւր տարեկան ծերերը չիյտեն։ Այս նոր այս տարի եղած ոմն Աղգասերին տեսարակը՝ բաւական ու բաւականէն աւել կ'արդարացնէ Մխիթարեանները, նախատելով զանոնք իբրև աղգէն հերձեալ և թշնամի և միշտ Հռովմայու դէն տաշող և որսացող. և ձեռքէն գայ՝ դգալ մը ջուրի մէջ կը խղդէ։ Հիմայ չիյտենք թէ ինչպէս կը միաբանին աս աղուոր անուններս անանունին հերետիկոսին հետ։ Աստուծոյ նախախնամութեանը մեռնինք. մինչդեռ անանունը իր ածականները կը տպէր քաղքիս մէջ

Մխիթարեանց վրայ, Ազգասէրն ալ իրենները կը տը-պէր. և գրեթէ երկու տետրակը 'ի նմին ժամանակի մէկ տեղ դուրս ելան մէկ մէկու հակառակ։

Աչ հերետիկոս և գառնաղգեաց գայլ Մխիթարեանները, (գրքին բառերն են), որ հերետիկոսաց հետ անիրա-տիր հաղորդակցութիւն կ'ընեն եղեր, միանգամայն ալ նոյն գրքին խօսքին կեօրէ (էջ 18), հերձուածողնե-ը ուղղափառութեան կը դարձընեն եղեր. բայց միայն կարճ ճամբան կը բռնեն եղեր։ Կը կարծենք որ թե-ւեւս ան պիտի ըլլայ կարճ ճամբայ ըսածը, որ մոլորու-թիւնը ուրացընելէն և ապաշխարել տալէն ետև, և ուղղափառ ճշմարտութիւնները մէկիկ մէկիկ ընդունել տալէն ետև, դարձողներուն չեն իտար յայտնապէս անէծք ու նզովք կարդալ և դժոխոց և գեհենի բաժին ըսել իրենց պապերուն, հօր, մօր, զաւկի, եղբօր, քրոջ. որ չիտենք թէ ո՞ր կանոն գրքի, ո՞ր աւետարանի մէջ գրած կայ։

Բայց Մխիթարը 1701 էն մինչև 1707 Խալաթիայի Լուսաւորչայ ժամը կ'երթայ կը քարոզէ եղեր։ Իրաւ է. սակայն այն առենը դեռ բոլոր Կաթոլիկները Հայոց ժամերը կ'երթային, և քօլէճի Ռաքելեան Խաչա-տուր վարդապետը Մխիթարին սրտակից ընկերը՝ Ստամպօլի Հայոց ժամը քարոզ կու տար, ինչպէս ժա-մանակակից անտարբեր պատմիչք և ինքն իսկ Խաչա-տուր վարդապետը կը գրէ Սանդ Ֆիլիցիօ ըսուած տուրբ Յոդովքին, թող Եւրոպայի քարոզիչները. և անա-նունը բնաւ աս բաներս չյիշեր։ Նոքը Ժողովուրդը հալածանքներէն խրտելով և իրաւամբ գայթակղեալ մէկ դի քաշուելով, և Հռոմ ալ անոնց այնուհետև հոգևոր վարանքը տեսնելով բոլորովին արգիլեց այն արտաքին հաղորդակցութիւնն ալ, և միայն ժողովրդա-պետական իրաւունքը թողուց մինչև ետքը. այսինքն մկրտութիւնը դրոշմին հետ մէկ տեղ, պսակը և թա-ղումը, որոնց համար մինչև քսան քսանուերկու տարի առաջ պէտք էր որ ուղղափառք Հայոց ժամերը եր-թային և ինքն իսկ անանունը հոն մկրտուեր է ու չու-զեր գիտնալ. թերևս քիչ մըն ալ ետքը ծնէր կամ նոքէն աշխարհք գալու ըլլար, իր ծնողքն ալ գինքն ալ հերե-տիկոս պիտոր ըսեր։

Այս հաղորդակցութիւնն ալ արդելեալ է ըստ նեռուն համար Մխիթար ըսեր է որ Տաճկի երկրին համար չէ, և արդելելը շատ ինաստակար և վտանգաւոր կ'ելլայ ուղղափառութեան։ Բա այն իրեք գլուխ հարցմունքները որ ուղածին պէս մէջ կը բերէ անանունը (էջ 24) ինքնիրենը չէ ըրած Մխիթար Աբբան և ոչ իրեն առաջարկութիւններն են. այլ որովհետև ան ատենները արևելքին ամէն կողմէն ամէն քարոզիչներէն ատ հարցմունքները կ'ելլային Բրոբականտային, ան ատենը սուրբ Յոհովքին նախարարը կարդինալ Սաքրիբանթէն անոնց պատասխան մը տալու համար առաջարկեր է Մխիթար Աբբային որ այն իրեք հարցմանցը վրայ իր կարծիքը գրէ ու տայ կարդինալաց ժողովքին որ դատեն. ինչպէս նոյն առաջարկութիւնը ըրեր է նաև Աբրահամեան Խաչատուր վարդապետին ալ որ ան ատենը Բրոբականտայի աշակերտ քաջ քարոզիչներէն մէկն էր, և անոր ալ գրով տուած կարծիքը՝ Մխիթարայ Աբբային տուածին ամենևին համաձայն՝ Բրոբականտային դիւանին մէջ, ուզեր նէ՝ կրնար գտնալ ատ չարամատեանը գրողը. բայց Մխիթարեանց դէմ գրուածները միայն փնտուելէն՝ անանկները չէ տեսած կամ ատեն չէ ունեցած տեսնելու։

Այս երկու երևելի հմուտ և ուղղափառութեան նախանձաւոր քարոզչաց կարծիքները կարդալով և բերած փաստերնին քննելով իմաստուն կարդինալաց ասուածը արեալ ժողովը տուեր է ան վճիռը (էջ 47), թէ "Այս բանիդ համար հարցընեն վարդապետաց, իմաստուն և գիտնական եկեղեցականաց՝ որ ան կողմերը շատ կեցած ըլլան, զգուշանալով բոլորովին մոլար դաւանութեան գործքերէ և գայթակղութեան և անկման առթէ". որով կ'իմացուի թէ սուրբ Յոհովը չարգիլեր իրը, այլ կը թողու իմաստուն և հմուտ վարդապետաց և քարոզչաց խոհեմութեանը, որ առանց վտանգի և գայթակղութեան ըլլայ։ Այսիկայ՝ անանունին կէսրէ՝ յայտնապէս կամ նենգութեամբ հաղորդակցութիւն կրնայ ըլլալ ըսել է եղեր, և սուրբ Աթոռէն խարդախութեամբ հրաման յափշտակել։ Զէկ միտ դիր, որ խարդախութեամբ սուրբ Աթոռէն հրաման մը յափշտակել կրնայ եղեր ըլլալ. անանունին միայն բերնին վայելելու խօսք.

բայց Մ՝խիթարեան չէ՝ միսա չի տար. Թէպէտ և ըստ Մ՝խիթարեանց խենթ է ատ յոյսն ալ, յուսացողն ալ։

Այն ատենը որ ատ խնդիրները կը շարժէր աղգին մէջ, և Մ՝խիթար ի Հռոմ տարակոյս տէր կ՝առաջարկէր սուրբ Յոռովքին, նոյն տարակոյսները Հ. Փիլիպպոսն ալ Ստամբոլ Մ՝աւրի առաքելական վիճարին առաջարկեր ու հարցուցեր է եղեր. և Մ՝աւրին Հռովմայու համաձայն լուծմունքները տուեր, և այս է ուղիղ վարդապետութիւնը տէր գրեր է Հ. Փիլիպպոսին։ Ի՞նանունը ատ բանը կը փոխէ, ու կը պառայ որչափ ձայն ունի նէ, թէ Մ՝աւրին զ՝Հ. Փիլիպպոսը իբրև մոլորամիտ հերետիկոս դատապարտեր է։ Ի՞ խիարին պատասխանին մէջ ատանկ բան կա՞ մի, կամ կ՝ելլէ՞ մի անկից, ըսէք. որ և ոչ Հ. Փիլիպպոս անունը կը յիշէ։

Իսկ երեսուն տարի առաջ հինգ հոգի որ Մ՝խիթարեանցմէ գացին Հայոց, անունք կորնչաբար ճշմարտութիւնը քարոզելու գացին, երբոր ան կողմին մէյտան կը կանչուէր ուղղափառաց, և ամէնքը սասանեալ պապանձեր էին. և նոյն ատենուան առաքելական Փոխանորդին առջև Մ՝խիթարեանց կ՝առաջարկէին որ երթան։ Բայց ան հինգ գացողները խաբուեցան՝ կարծելով որ քարոզած ուղղափառութիւننին ընդունուեցաւ այն եկեղեցիին, մանաւանդ երբոր Հրա՞էր սիրոյ տետրակն ալ տպուեցաւ եղաւ, ու նոյն ատենուան պատրիարքին ինքով հրատարակուեցաւ. և սխալեցան՝ ինքիր գլխընուն ապստամբօրէն առանց սուրբ Աթոռին բան ընել կարծելնուն. ատ ուրիշ խնդիր է, բայց ոչ թէ իրենց քարոզած վարդապետութիւնը հերետիկոսութիւն։ Սուրբ Աթոռն ալ մինչև հիմայ ան հինգին վրայ ատ կարծիքն է, և կը գովէ ան կորնչ քարոզութիւնը ճշմարտութեան, որուն մէջն էր նաև Աղերեան Ստեփան եպիսկոպոսը՝ և ուրիշ երկու Վրդեճցիք ալ, որոնց անունը միայն կը մոռնայ անանունը և երկու և այլնի կութինած կը ցաթկէ ան խրատը։ Այս դեռ ողջ է և անանունին բարեկամ, (ներէ մեզի ան անձը՝ գինքը անանկ մարդու բարեկամ ըսէնուս), դեռ ողջ է կ՝ըսեմ՝, ան կորնչ քարոզութիւնը հոն գտնուող լոզ ուղղափառ բարեպաշտ և երկիւղած անձ մը. թող ա՞նոր հարցնէ՝ ճշմարտութիւնը հասկնալ բանին ձեռք

կու տայ նէ։ Ուստի ան երկան խառնախօս գրուածը ան հինգին բերնէն (էջ 80—86), որով կը զրպարտէն աբ-բան և վանքը, թէ աս ըրածնիս անոնց կամքը և վար-դապետութիւնն էր, մեզ քշեցին առաջ և ետքը ուրա-ցան, սուտ է և շինծու. պատճառը հիմայ կը զրուցենք։

Այս երբոր Մխիթարեան միաբանութիւնը՝ ան հինգ հոգին, բաց ի քարոզութենէ՝ ան փուչ միաբանու-թեան սխալմունքն ալ որ ըրին ու կտրեց նէ իրմէն, չէ հերետիկոսութեան համար, հապա առանց սուրբ Աթոռին երթալ անոնց հետ միանալնուն և իրենց աբ-բային անհնազանդութեանը համար, որ յայտնի գրեր էր իրենց չխառնուիլ անանկ բանի մէջ և էրէնոյ դայն *էլբոր՝ Բօլէձցոյմէ զատ ինքնագլուխ բան չընել ու պէտք ըլլայ նէ ելլել փախչիլ Սամսօլէն, ասանկ վանքը զանունք կտրեց նէ, Բրոբականտայի նախարար կարդինալ Ֆօնթանան գրեր է աբբային, որ սուրբ Աթոռը քննած իմացած է, որ անունք ոչ եթէ իրաւցը-նէ գացին հերետիկոսացան, հապա խաբուեցան և ին-քիր գլխնուն բան ընել կարծեցին և հիմայ դարձան. ուստի մենք ներեցինք, դուք ալ ներեցէք ընդունեցէք զիրենք ձեր ուխտը։ Որուն պատասխան՝ ՀԸԼԼՈՐ՝ ՀԷՆ-ԷՐՆԵՐ ընել տրուեր է տէր գիտենք ստոյգ։ Աբբային ան հինգին գրած գրերն ալ և Ֆօնթանային հետ թղ-թակցութիւնն ալ կեցած են. և աբբային ատենին գրագիր քարտուղարն ալ դեռ ողջ է և հոս, կը վկայէ։ Ուստի բոլորովին սուտ կ'ըսէ անանունը որ աբբան սիրտ կու տայ եղեր անոնց յատուկ գրով այն անկանոն գոր-ծոցը և երազած միաբանութեանը։ Այնպէս բոլորովին սուտ զրպարտութիւն է ըսածը թէ աբբան գրած ըլ-լայ որ "Մէջը որ քիչուոր էք աստ գործքին մէջ, շատ-նալ նայեցէք.,. սուտ. աբբային թուղթը կ'ըսէ. "Դուք ալ գիտէք և շատ անգամ ալ գրուեցաւ ձեզի, որ քանի մը քիչուոր անձանց օրէն չէ այդպիսի մեծ և հասարակաց բանի ձեռք զարնել առանց մեծաւորաց գիտութեան և հաւանութեան... և աւելի ապօրինաւ-որ բան ըրած կ'ըլլաք, թէ որ բանիւ կամ գրով ուրիշ-ներն ալ գլխէ հանել ջանաք նէ.,։ Այնպէս թէ աբ-բային աս ուղիղ խրատը ինչ կը փոխէ կ'ընէ անանու-նը։ Աբբահայրը քանի մը երևելի աշխարհականաց

ալ գրեր յայտներ է ան ատենը իւր և վանքին տհա-
ճութիւնը, և ինքնագլուխ եղած գործքին և գործող-
ներուն դատապարտութիւնը։ Յիշուած Ֆօնթանային
գրին նման թուղթ մին ալ սուրբ Աթոռը Վրթանէսի
Ալիքարին գրեր է տէր գիտենք ստոյգ, որ ան եօթնին
արդարացուցմանը և վանքին անմեղութեանը համար
հրատարակէ Ստամպոլ ժամերուն մէջ. բայց թշնամիք
Հարկ չկայ, անոնք դարձան արդարացան՝ ըսելով, չէն
թողուցեր որ ընէ, և մինուոր աղթը եղեր է. սակայն
կայ կեցած է, և անանունն ալ գիտէ։ Թէ որ ան հինգ
վանքցիին բերնէն շինծու գիրը իրաւ ըլլար, ինչպէս
սուրբ Աթոռը ատ իրենց արդարացուցման թղթերը
Վրթանէսին ու աբբային կրնար գրել, և ոչ մանաւանդ
մենծ որոտում և դատաստան բանար վանքին գլուխը։
Իսկ ատ բանս եղած չունի, հապա մանաւանդ խաղաղու-
թիւն և լռութիւն, մանաւանդ ընդհակառակն յայտնի
վէճ ալ ըրեր է Մխիթարեանց ընկերութեան անմե-
ղութեանը, թէ ան հինգին յանցանքը չի կրնար բոլոր
վանքին տրուիլ, և թէ վանքը ամէն կասկածէ սուրբ է
(տես Ջ. ատաղ. էջ 30). անանկ է նէ բոլորը սուտ շին-
ծու հիւսուած է։ Բայց անանունը (էջ 79) կենդանի
պատմական վկայ մը գտեր է եղեր իր խելքին ճշմար-
տութեանը։ Մինք ըսենք ոմ է ասի. Ղեվանդիր-
ճեան Սերոբէ վարդապետն է, որուն ատորագրու-
թիւնն ալ կը բերէ անանունը։ Բայց աղէկ սորվեցուց
ինք մեզի ատ կենդանի վկան. արդ սա կեցեր է, և բա-
նիւ և գրով կը վկայէ՝ թէ ինչպէս ժամանակին Մխի-
թարեան միաբանութեան թշնամիները իրենք շիներ
են ան հինգին բերնէն այն սուտ թուղթը, և ինչպէս
բռնի ստորագրել տուեր են անոնց՝ խոստանալով անով
արդարացընել զիրենք, և թէ ինչպէս ետքը ատ բռնու-
թեանը դէմ փոխթէսթ գրեր են իրենք Հռոմ, և
յետոյ կոչում ըրեր են ան սուտ թղթին։ Այս ա-
նանց գիրը կեցած է նոյն ճշմարտասէր վարդապետին
քով, և արդէն 'ի լոյս ելաւ հանդերձ իւր գրով վկայու-
թեամբը և նոր փոխթէսթովը անանունին դէմ։

Մտիկ ըրէ դարձեալ ան հինգ հոգիին և բոլոր Մխի-
թարեանց հերետիկոսութեանը մէկ մեծ ու կտրուկ
ապացոյցն ալ։ 1828ին սաստիկ և աղետալի հալա-

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ծումն որ եղաւ ուղղափառաց, ան հինգ հերետիկոսապետներն ալ՝ բոլոր Մխիթարեանք ալ հետ մէկ տեղ՝ հալածուեցան և աքսորուեցան աս դիս ան դին ընդ ծով և ընդ ցամաք։ Նանուէնն որ դեռ տղայ էր, այլ բենդիմ կը կարդար, Մխիթարեանք աս բաներս կը քաշեին ուղղափառութեան համար։ Լու նոյն Մխիթարեանք անկից իրենց աքսորանքէն սաստիկ յանդիմանութեան թղթեր գրեցին Սատմպոլ, թէ իրենց և թէ ուրիշ քահանայից ժողովրդէն վախով Հայոց ժամ գացողներուն և հաղորդակցութիւն ընողներուն. և աս թղթերն ալ և անոնք ընդունող անձինքներուն շատն ալ դեռ ողջ կեցեր են, կը վկայեն։

Դաց ի աս վերը յիշած երսուն տարուան խղճալի մանաւանդ քան թէ հայհոյելի դիպուածէն, ալ ուրիշ երբ և ուր գացեր են Մխիթարեանք հերձուածողաց ժամը, թող գրուցեն ազգին ութսուն ինսուն տարեկան ծերերը։ Նանկ է նէ, ուր են ըրեր ան անանունին երազած հաղորդակցութիւնը, որ ի վեր և ի վայր կը պոռչայ ու կ'աշխատի ցուցընելու, ըսելով որ Սատմպոլի կամ Լեմիածնայ պատրիարքութեանը աչք ունին։ Ինչ հակառակն Մխիթարեանք Հայոց իրեք ամիրայի ձեռնագրով թուղթ ունին ձեռուընին, ուր բոլոր ազգին կողմանէ կը գանգրտին թէ հնութեանց և ձեռագրաց համար ալ Հայաստան կը պրտրտիք՝ մէջերնիս կու գաք նէ, կէնէ աս մեզմէ խորշումը և խտրութիւնը կ'ընէք. աս ինչ բան է. գոնէ ան ատեն ձեր շահուն համար մ'ընէք աս բանդ, և այն։ Զբլայ թէ Ա. յի Սատֆանա իր եղբարցը մէկը ըլլայ ան անանունին տեսածը կամ գիտցածը, որ գացեր Տէրտիրոջ պատարագին Ողբերգոյն ըսեր է. կամ չբլայ թէ քօլէնցի Տօն Սերաֆինոն ըլլայ, որ քսանըհինգ տարի մը առաջ Լեմիածին գնաց, միաբան և եպիսկոպոս եղաւ, կաթուղիկոսութեան ամենայն Հայոց աչքը տնկած ըլլալով։ Ա. մնաց կայ. ինքն իսկ անանունը աս մուրը Մխիթարեանց վրայ նետելէն ետքը, ինք իր վրայ կը խոստովանի որ ես գացեր եմ հերետիկոսաց ժամը քարոզ ըսեր եմ բան հասկընալու համար (էջ 43)։ Ա. բանս՝ ետքի իրեք տարուանս մէջ՝ ատենին մենք ալ ըսեր էինք, որ անանունը մի, իրեն պէս մէկը մի կամ իր շուքը մի մէկ

ուրիշ անանուն ընկերով մը Ս. յի Ստեփանա Հայոց մէկ մեծահայ կոչունքէն եղած, հոն ժամն ալ գացեր են աղօթք ըրեր ու Տէրտիրոջը հոգոյ մը ըսելու ժամուց մ'ալ տուեր են տէր, ըսեր էինք, էինք հաւատացեր. Թէպէտ և ձանձրնեցաւ ալ ան ատեն 'ի գայթակղութիւն ժողովրդեան՝ իբրև բուն տեղէն եղած, թէ ան հետ եղող ընկերը Թուղթ մ'ալ գրեր է ան կոչունքին տանտիրոջը՝ որ մաղը չծակէ. բայց հիմայ աս յայտնի խոստովանութենէն ետև՝ ալ տարակոյս չուզեր որ իրաւ է եղեր։ Մանաւանդ որ նոյն իսկ աղնուական հիւրամեծարը որ մինչև հիմա կը ծածկէ եղեր եղածը ազնուականութեամբ, հիմա տեսնալով այդ չարամտենին գայթակղական գրուածքը, կը պատմէ կոր համարձակ եղածը տեղն 'ի տեղը մեր չգիտցած հանգամանքներովն ալ։ Ուստի ուրիշ բան չմնար ըսելու՝ բայց եթէ կարելի է որ Մխիթարեան չըլլաղին ամէն բան արդար է և օրինաւոր։

Ատեն ունիս նէ աս ալ մտիկ ըրէ։ Մէկ Յիսուսեան կարգաւոր մը արևելեան Հնդկաստանէն դարձած 1826 էն ետքը կարդինալ Ռաբելլարիին գրով տեղեկութիւն մը տուեր է եղեր, որ Մխիթարեանք Հնդկաստանու առաքելութեան մէջ անհնարին յարուցին և ընտանութիւն ունին եղեր ազգային հերձուածողաց հետ։ Իրաւ է, սուտ է, քաղաքական կամ ուսումնական ընտանութիւն է, ան մէկ դի. եկուր նայէ որ Մխիթարեանք ան ատեն Հնդկաստան առաքելութեան մարդ չունէին. և ան տարիները իրենցմէ ուրիշ մարդ չկար հոն, բայց միայն Մատրաս մէկ հոգի մը իբրև տանտերեց, որ առանձին բարեպաշտ խաթունի մը տան մէջ նստած, Մուրատեան դպրոցին հոգերին աշխատանքներին դատաստաններէն՝ բնաւ այլ բանի մը երես նայելու ատեն չունէր, և բանը լրմնցածին պէս դարձաւ։ Շատակը կ'ուզես նէ, էինք ուզեր ըսէ՝ բայց ըսենք։ Ան Յիսուսեանը՝ չկրնան ինչ պատճառաւ, հաւանաբար՝ մարդ ըլլալուն պատճառաւ, հոն տեղի Ռաբուչիններուն հետ ուրուած է եղեր. և որովհետև ան Մխիթարեանը անոնց հետ խիստ բարեկամ ըլլալով իրեն անհաճոյ եղեր է, Հռոմ եկեր անոնք ալ աս ալ զրպարտեր է։ Բայց այն Թուականէն ետքը կար-

դինալ Բաբէլարին պապ եղաւ Գրիգոր ԺԶ. և իր մեծ սիրոյն և համարմանը նշան իր փառաւոր մարմնարեայ արձանը պարգևեաւրեց սուրբ Պաղարու վանքը։

Իսկ Հ. Կերսեսին վրայ զուրցուած Կարմիր վանքին զրպարտութիւնը, թէ հոն Հայոց հետ հաղորդու

ատ Հայոց ուղղափառութեան մէջ խիստ շատ գրտնուած խոհեմ և բանիբուն մարդ է, աս ալ իր բերտվը վկայեց մեզի, որ և ոչ Կաղզէնեան Հ. Ստեփանի անուն լսեր եմ ես ան կողմերը, Թող թէ խօսքը խօրաթան և խռովութիւնը, որ ըլլար նէ՝ անհնար էր որ ես չիմանայի, չգիտնայի։ Իսկ թէ Ղ.քտէրեան մը, եպիսկոպոս մարդ, ինչպէս ատ չար՝ բայց իր պատրիարքին և անանունին հաճոյ զրպարտութիւնը կը գրէ աս դիս, հիչ զարմանք չէ երբոր մէկը անանունին գիրքը կարդայ։

Ահա ինչ զարմանալի խենթութիւն է Մխիթարեանց ըրածը. բոլոր խելքերնին մոքերնին ազգը հերետիկոս ընել է եղեր, որ Ստամպօլի կամ Ղմիածնայ պատրիարքութեան հանին, և սակայն բոլոր ազգին մէջ՝ տպով և գրով տարածած գրքերնուն մէջը հերձուածոց դէմ կը խօսին՝ զանոնք լուսաւորելու, և հալածանք և աքսոր կը քաշեն, ու չեն երթար միանար անոնց հետ։ Եւ ոչ միայն ան կողմէն կը նախատուին, ինչպէս նոր վկայ մէն է դեռ հիմայ իրենց դէմ եղած ոմն Ազգասէրին տետրակը, այլ և որ անհաւատալին և անտանելի դառն է՝ իրենց սուտ եղբայրներէն ալ։ Անոնք Մխիթարեանց գրքերուն դէմ կը գրեն, ասոնք անոնց գրքերը կը չարախօսեն Հռոմ 1815ին, և տպարաններն գոցել կու տան, և սուրբ Յոդովը երկար քննութեամբ կ'արձրկէ վճռով գրքերն ալ, տպարանն ալ։ Տես Մխիթարեանց Ղ.ատագովութեան էջ 22—31։

Բայց դնենք ալ թէ մէկը թերևս սխալ խօսք մը կամ գործք մը ըրած ըլլայ. ուսկից յայտ է նախ՝ կամ ինչպէս ցուցուած, թէ իրաւցընէ անխտրութեան մտքով և սրտով ըրեր է, և ոչ թէ ուրիշ պատճառաւ մը, հետաքրքրութեամբ մը կամ մարդկային կրիւք մը։ Եւ երկրորդ, որ օրէնքին մէջ գրուած է՝ մանաւորի մը սխալմունքը բոլոր մէկ ընկերութեան մը սեպելը և դատապարտելը։ Այն իսկ սուրբ Յոդովը վերի ըսած հինգ Մխիթարեանց սխալմանը համար վճիռ չըրաւ մի որ բոլոր ընկերութեանը չկրնար համարուիլ և անիկայ ամէն կասկածէ ալ ազատ է (Տես Ղ.ատագ. էջ 30)։ Մխիթարեանք և սուրբ Յոդովը հազար հեղ հալածեր ցրուեր են ատ սուտ և անպատկառ զրպարտու-

թիւնները, և զրպարտիչները նորէն կու գան կը բղղան կը խածնեն։ Ինախօս փիլիսոփայից մէջ ինդիր կ'ըլլայ, թէ արդեօք Հանճէն լիրբ և յանդուգն կենդանի մը կայ մի, կրնայ մի ըլլալ. կայ եղեր. անանունն ու անանունութեանը. Հոմերոս մեր ատենն ըլլար, անոնք ալ օրինակ կը բերէր իր կատաղի քաջերուն։

Անանունն որ կ'երևնայ թէ Բրոբականտայի դիւանը բոլոր ձեռքն անցուցեր ու խառներ է, չիյտենք ինչպէս աս հիմա յիշած վէճերը, բարի վկայութիւնները, Ֆօնթանային վաւերական գրերը չէ տեսեր, չէ գտեր. որ կարծեմ պատիւ չըներ իր սուր աչքին և անկեղծութեանը։ Բայց մի զարմանաք. աստ միայն չէ. բանին ձեռք չտուած գրերուն վէճերուն հիչ մէկը չէ տեսեր։ Մէկը միայն ըսենք, որ մեր օրը եղաւ և շատերնիս գիտենք։ Լրսուն ու մէկ տարի մը առաջ (1821ին), իրեն պէս (թէ որ ուրիշին հաւասարիլ յանձ կ'առնէ կամ ուրիշին նախատինք չէ նէ), իրեն պէս Մխիթարեանց թշնամիները միաբանական գրով կատաղաբար բողոքեցին առ սուրբ Յողովն, որ կամ Մխիթարեանները կը ջնջէք, կամ զմեզ. ալ մէջ չկայ։ Սուրբ Յողովը սաստիկ բարկութեամբ դատապարտեց ան գրուածը, և ծանր յանդիմանութիւն գրեց. և մինչև հիմայ aut, aut, կամ, կամ անունով Հանչցուած է և կը յիշուի Հռոմ ան գիրը. որուն վրայ քանի մը դեռ ողջ մարդոց ստորագրութիւնը կայ, որոնք մէկ էն հիմայ ալ անանունին հետ։ Անոնց հիչ մէկը չտեսեր, հապա միայն քանի մը սուտ ամբաստանութիւնները կը բերէ, և անոնց դէմ արդարացուցման պատասխանները, վէճերը՝ չյիշեր. ու սուրբ Յողովին ընդունած և իրաւունք տալով հաւնած ջատագովութիւնները՝ ինք չընդունիր՝ չհաւնիր, ու սուրբ Աթոռին ալ խելք կը սորվեցընէ և ուղիղ դատաստան և ուղղափառութիւն։

Անանունը իր խմատուն գիրքը ձեռքը՝ նորէն մեզի դէմ կը կանչվռտէ, ու կը ցուցնէ 55 էջը։ Այնինք ինչ է։ Մելգոնեան աբբային առ տիարպեքիրցի Պապիպէտ բժիշկ մէկ թուղթը թարգմաներ գրեր է, որուն մէջ ինքը յայտնի հաղորդակցութեան հրաման տալ և տասը կանոնները հաստատել կը տեսնէ։ Բայց Մելգոնեանին ան թղթոյն օրինակը վանքին դիւանը

ընաւ չգտնուեցաւ. և չիյտենք թէ անանունը ատ 101 տարուան թուղթը ո՞ւր և ի՞նչպէս կրցեր է գտնել Ցիսաբ պէքիրէն, և գտածին պէս պահե՞ր է մի։ Թերեւս մէկ նոր Հանապարհորդ մը՝ որ Մելգոնեանը հերետիկոս ընել խիստ կ'ուզէ եղեր, անկից անցնելն ինի՝ բիւր կրակներէ և փորձանքներէ ազատած փողոցն ինկած գտեր՝ բերեր է իրեն. և ինքն ալ՝ ինչպէս մէկալ ամէն մէջ բերած թղթերը փոփոխուած ու խարդախած են, անոնց պէս ատ ալ ըրած ըլլայ։ Ուստի խիստ հաւանական է որ շինծու թղթեր բան ըլլայ. զի Մելգոնեանը այն սուտ անօրէն և խենթ կանոնները յայտնապէս մերժելէն ու դատապարտելէն ետքը սուրբ Յոգովին ատեանը, ատանկ թուղթ չէր կրնար գրել, առանց Մխիթարայ ետևէն նոյն խենթանոցը երթալու։ Սակայն նամակին մէջն ալ յայտնի բան մը չկայ որ խելքով մեկնութիւն մը չվերցրնէ։ Մարդուն խղճմտանքը շտկելու համար՝ Մխիթարայ մէկ գրուածը կը յիշէ ու ըստ այնմ՝ գնա կ'ըսէ։ Ո՞ւր է ան գրուածը, ինչ է, ո՞վ կայ գիտցող 101 տարուան բանը։ Ինանունը կ'ուզէ որ ան տասը կանոններն ըլլայ, և ասով անոնք ալ հաստատել կը նայի։ Բայց նախ՝ նամակը չըսեր պասը կանոն և ոչ կանոններ, հապա միայն կանոն, գրուածք։ Երկրորդ, պէտք է առաջ ան տասը կանոններն իրաւ ըլլան, որ ատ նամակն ալ իրաւ կարենայ ըլլալ և անոնց վրայ խօսիլ. իսկ արդ կանոններուն սուտ ըլլալը բաւական ցուցցինք, անանկ է նէ ատ թուղթն ալ սուտ է, կամ ան կանոններուն վրայ չէ։ Երրորդ այն կանոնը, կ'ըսէ, որ երբեմն ի գործածութեան էր. իսկ արդ այն խենթ ու խելաւ տասը կանոնները ոչ երբէք և ոչ ուրեք կրնային ի գործածութեան ըլլալ, ուրեմն յայտնի է որ ուրիշ գրուածք մը կ'իմանայ, և թէ ո՞րն է, ելլալու ընդհանուր Պատասխանատուութեանը մէջը կ'իմացուի։ Ինչ յայտնի սուտ շինծու թղթեր ատ գրքին մէջ կը բերուին կոր տէր հիմայ վերն ալ չտեսանք մի։ Պատրագուց տալու կամ չտալու խօսք մ'ալ կայ նամակին մէջ. բայց ան ալ յայտնի չէ, թէ հերետիկոսի, թէ ուրիշ խառնագնայ գայթակղական անարժան քահանայի։ Ուստի այսչափ յայտնի սուտ կամ գէթ երկբայելի անյայտ նամակ մը ի՞նչպէս համարձակ ան-

խիղճ վնիռ կը կորուի որ հերետիկոսաց հետ հաղորդակցութիւն կը հրամայէ Մելգոնեանն ալ, և կեղծաւոր խաբեբայ հերետիկոս է, և Մխիթարայ յայտնի գիտցած և ընդունած տասը կանոնը ստուգել և հաստատել է. մենք չենք կրնար կոր ըմբռնել աս տրամաբանութիւնը և ասանկ խելքին հետևութիւնը։

Բայց անանունը չի կենար. նորէն Մելգոնեանը սևցընելու համար ու բոլոր Մխիթարեանները հերետիկոս ցուցընելու՝ Ղեթեպցի Հ. Պէորգը մեռելակոչութեամբ գերեզմանէն կը հանէ, հերետիկոսի եաֆիթան ձակատը կը փակցնէ, երեսը կը թքնէ ու Հռոմ դատապարտել կու տայ. ան խեղճ ողորմելի մարդը՝ որ հաւանական է թէ տգիտութեամբ կամ կրիւք սխալմունք մը ըրած ըլլայ։ Ինչպէս քուն իսկ Պաղատիայէն գրուած քաղաքացւոց թղթերը պիտոյ վկայեն մեր մեծ Պատասխանատուութեանը մէջ։ Այ մէկ մարդը կայ՝ որուն վրայ միայն ծեր Մխիթարեանցմէ ալ լսեր ենք, կ'ըսէին թէ ինքնագլուխ մոլորեր է վանքին ճամբէն, ապուր է կերեր, Այսուայ շառագոյն ոսպնաթանը, և ամբաստանուեր կոչուեր է Հռոմ. որ խնացածին պէս Մելգոնեանը, գրեր է հոն, անանունն ալ կը վկայէ, որ անոր սխալմունքը մեր վանքին ուսումը և վարդապետութիւնը չէ, կը հալածենք մեզմէ անանկ ծուռ վարդապետութիւնը։ Հ. Պէորգն ալ հոն յետս կոչեր է իր մարդկօրէն սխալանքը, և տպով ալ հրատարակեր է վասն հնազանդութեան սուրբ Աթոռին և շինութեան ժողովրդեան։ Բայց Հ. Պէորգը Հռոմ խոստովաներ է ալ եղեր՝ որ Մխիթար աբբայէն և վանքը սորվեր է ան ուսումը. անանունն ալ հոն կեցեր լսեր է ու մեզ ալ կը գրէ ատ սուտ և խենթ խոստովանութիւնը. ուր է ատոր վաւերական գրով օրինակը. — չկայ. — անանկ է նէ չենք հաւատար քահանայի մը վրայ ատ սուտ վկայութիւնը։ Այ թէ որ իր սուրբ հաւատքին մէջ կրիւք մը կամ տգիտութեամբ անհաւատարիմ գտուեր է նէ Հ. Պէորգը, ատ վկայութեան մէջ ալ չի՛ կրնար անանկ գտնուած ըլլալ։ Բայց մեզ ատ բոլորն ալ անստոյգ է, և միայն ստոյգ է որ անանունը շատ սուտ զուրցած է իր գրքին մէջ։ Այ հոս ալ ինքնիրենը կ'ինայնայ. վասն զի կ'ընդունի և կը վկայէ (էջ 63) որ Ին-

թեպցին 1753 մայիսի 3ին վշտացած գրեր է Մ՝ելգոնեանին որ “Լաւ լաւ է որ մենք գիրք տպենք, քան թէ քարոզութիւն երթանք. վասն զի մեր քարոզիչները կը հալածուին կոր աբեղաներէն ալ, կրօնաւորներէն ալ և հերետիկոսներէն ալ. իսկ գրքերնիս պարծանք կ՝ըլլան մեր անուանը,, : Ուր երկու բան դիտէ, մէյմը որ հերետիկոսներն ալ կը հալածեն եղեր Հ. Գէորգը. և հերետիկոս զհերետիկոս չի հալածեր. մէյմ՝ ալ՝ որ գրքերն են եղեր բուն Մ՝խիթարեանց գործիք քարոզութեան. և գրքերնուն վրայ քնաւ ծուռ կարծիք չկար և չկայ, այլ մանաւանդ թէ անկէց և յանուանէ Մ՝խիթարայ Մ՝ատթէի մեկնութենէն՝ շատ հայ ուղղափառ կ՝ըլլային : Լաւ աս ամէն ըսածներնուս պսակ՝ աղէկ Մ՝խիթարեանց մէջէն ան մէկ ամենէն կասկածաւոր երեւցածն ալ՝ վանքէն կորուելէն ետքը առեր է Հռոմ՝ ու Պրոբականտան գրոց քննիչ և հայ տղոց դասատու ըրեր է, ասով ամէն բան կը հասկըցուի :

Իսկ Իւչքարտաշեան Հ. Ընտոնը, որ Պաշֆալովէն վերնտուեր է, կ՝ըսէ (էջ 61), հերետիկոսները անխտիր դեռ չդարձած՝ ժամն ընդունելուն համար. նախ՝ չիյտենք որ ան տարիները, այսինքն անցեալ դարուն կէսէն ետքը՝ ան կողմերը հերետիկոս կա՞ր մի, մնացե՞ր էր մի : Երկրորդ՝ Հ. Ընտոնը իր ժողովուրդը չի խաբեր եղեր ա՛ հերետիկոսաց ժամը, հապա անոնք կուգան նէ ժամ, չի վերնտեր՝ կ՝ընդունի եղեր. անոնց մեր ժամը գալէն մեզի ինչ կ՝ըլլայ եղեր. հիմայ հոս Պատմ՝ պալ ալ ժամերնիս լեցուն են անոնցմով. անանկ է նէ մենք ալ հիմայ նոյն մեղքին տէրն ենք, կամ՝ ելլէ թող վերնտէ անանուանը : Երրորդ ան Իւչքարտաշեանը Վենետիկու վանքին միաբաններէն չէ, հապա Թրէստու, որ ետքը Վենտացի եղան, և հոն Թրէստ մեռած ու թաղուած է : Մ՝ենք ալ 1801ին հոն տեսած ենք զինքը, որ հալուոր մը էր : Վենտացի վարդապետաց անշուշտ չէր ուզեր դպչիլ անանուանը, բայց յայտնապէս ակամայ և յանգէտս ըրեր է :

Ինքն անանուանն ալ կը վկայէ (էջ 72), որ եթէ քանի մը հոգիի վրայ միայն եղած ըլլար սանկ գէշ կասկած մը նէ, բան մը չէր. կը հասկըցուէր, ու ընկերութեանը չէր տրուեր. և ինքը 1701էն մինչև 1754

մէկ Ընթեցին միայն գտեր է, որուն վրայ՝ շիտակ ծուռ՝ բան մը գրուցուեր է. մէյ՝ալ Եօթանասուն տարի ետքը՝ վերի ըսած հինգ քարոզչաց կարեկցելի դիպուածը կը բերէ, ան ալ թէ որ բերելու բան է նէ, և անխիղճ կը պոռայ որ անընդհատ կարգաւ ընդ ամենայն ժամանակ ատոնց ատանկ ըլլալին և ատանկ գործելին ահա ապացուցի. և վճիռ ալ անկէց կը հանէ, որ բոլոր ընկերութիւնին նոյնպէս մոլորամիտ է։ Ընդուր ցուցմունք և խելացի հետևութիւն. բայց հակառակ սուրբ Թուոցն յայտնի վճիռներուն որ վերը երկու տեղ յիշեցինք։

Եւ աս ատանկ հերձուածամիտ և անխարութիւն քարոզող և ուղղափառները հերետիկոս ընել ուզող ընկերութիւնը՝ շատ գրքեր հանած ունի հաւատոյ նիւթոց վրայ և ընդդէմ հերետիկոսութեանց. ատոնց մէջէն տող մը բան չգտներ բերեր անանունը՝ անոնց մոլորութեան միտքը ցուցընելու. և բոլորն ալ սուրբ Հողովին արդարացած են 1815էն 1822. (տես Ջատագովութեան եռին)։ Ընանունին խօսքով՝ աս ամէն գրքերնին և սուրբ Թուոին գրած գրեցնին՝ բոլորն ալ սուտ՝ խաբէութիւն՝ կեղծաւորութիւն է եղեր. և իրենք ալ գիտեն եղեր որ խղճմտանքներնուն դէմ կը գրեն ու կը թղթեն եղեր. բայց Խիթարեան աներեսութեամբ (էջ 78) չեն դադրիր եղեր ատ անպարիշտ կեղծաւորութենէն։ Ամն զի անանունը ամենէն վեր կարծելով ինք զինքը՝ կարծեր է որ Ընտուած ալ է, գիտէ յայտնի անոնց խղճմտանքը, սրտերնին մտեր տեսեր է։

Ընդդէմ Խիթարեանց ջատագովական տետրակին կը խոստանայ (էջ 89) ցուցընել թէ ուրչափ անձինք իրենց պատճառաւ դարձեր հայ եղեր են։ Եւ կը սկսի երկան բարակ ուրիշ բանի ետևէ չիմնալ՝ բայց միայն ցուցընելու խելքովը, որ ան հինգ վերը ըսած քարոզիչներուն կարծիքն ու վարդապետութիւնը բոլոր միաբանութեանն է եղեր։ Բայց մենք վերը շիտակը հասկըցանք թէ ան հինգին քարոզութիւնն ինչ եղեր է հոն. և սուրբ Հողոին ալ յայտնի վճռեր է որ անոնց յանցանքը բոլոր ընկերութեանը չորուիր, այլ մանաւանդ ամէն կասկածէ ալ սուրբ է։ Եւ աս սքանչելի փաստով՝ կար-

ծելով որ խոստացածը ցուցուց, կրցկրցել եռեւէն անա-
նունը, որ ահա այսպէս ան հինգին գործքը շատ հա-
ւիւրաւոր անձինք հետերիկոս ըրեր է եղեր։ Որ աս-
տուծով՝ հիչ մէկը եղած չէ. ոմանք ան հինգին պէս
խաբուելով գացեր էն ալ նէ, շուտ մը երբոր Հայոց
ան միաբանութիւնը սուրբ Աթոռին հետ խմացեր էն,
մէկէն աս դին դարձեր էն։ Աչոր վկայ է Հայոց աղ-
գահամարն ալ որուն մէջ մէկը չի կայ մնացած, և
մենք ալ մէկը չեյտենք բոլոր ազգով։ Այ թէ ամ-
ադէկ կ'ուզէ իմանալ նէ անանունը բանին ինչպէս
ըլլալը՝ թող Պերպ. Վրդոյեսիին, որ Մխիթարեանց
դէմ էր, կ'ըսէ, 1821ին մարտի 24ին առ Պրոբականտա
գրած թուղթը կարդայ, որուն մէջ այսպէս կը գրուցէ.
"Հրամանոցը հրամանին կեօրէ դարձեալ խոստովան-
ցընելու իշխանութիւն տուի, չէ թէ միայն Ստեփանոս
Հ. Պուկասին, այլ և ուրիշ իրեք Մխիթարեաններու
ալ՝ որոնք են Հ. Փիլիպպոս Յովհաննեան, Հ. Կարա-
պետ Նասայեան և Հ. Անտոնիոս Ստեփանեան, որոնք ի-
րեքն ալ բարի կրօնաւոր, բարեպաշտ, ուսեալ, խոհեմ,
հլու, հնազանդ ու շատ համբերող են. որոնք յուսամ որ
շատ շուտով դարձընեն առ Տէր մոլորեալները, որոնք
դեռ յամառեալ կեցած էին իրենց սխալմանը մէջ միայն
հակառակ կողման ցուցրցած սաստիկ ատելութեանը
և կրնցը համար զոր կը ցուցընէին իրենց և իրենց առջի
կառավարչացը դէմ.,։ Պերպ. Վրդոյեսիին աս խօսքե-
րէն շատ բան կրնայ հասկընալ կարդացողը։

Աչն երկան խառնախօս և աղճատեալ գրուածը ան
հինգին բերնէն, ինչպէս վերը ըսինք, բոլորովին սուտ
է և շինծու, գլխէն վերը առասպելներով լեցուած. մա-
նաւանդ Ստեփանեան Հ. Պուկասին վրայ, որ բնաւ
հաւատոյ կռիւներուն չխառնուող խաղաղասէր՝ խոհեմ
և միայն ուսման և դիտութեան պարապեալ մարդ էր։
Այ ոչ Հայոց հետ մտերմութեան կարծիք մը եղած է
վրան, թող թէ՝ ինչպէս անխիղճ կը ստէ անանունը՝
երթալ կատաղաբար հայ ըլլալ, ան հինգը ինքն ոսք
հանել, ու պռաալ ժողովի մէջ որ աս երկու եկեղեցիին
միութիւնը ես պիտի ընեմ. և վանքը անանկ խենթ
թուղթ գրել, որ դուք ալ ինձ հետեւեցէք։

Հոմ ձեզ նեղէ նէ՝ վանքը Ամատրա փոխադրե-

ցեք. ինչպիսի մտածութիւն. իբրև թէ Հռովմայի հո գևոր իշխանութիւնը Ա. Ենեսիկ կը հասնի, բայց մնտրա եղող ուղղափառի վրայ չի հասնիր։ Եթէ որ ատ խենթ խօսքերն իրաւ էին նէ, ինքն Ներսիսեանն ինչու ոչ միայն չգնաց հինգին հետ ան դին, և ստորագրութիւնն ալ չկայ անոնց մէջ, հապա մինչև 'ի Պրոտի Էհասատան փախաւ։ Իսկ վանքը մնտրա վերցընելուն կտորն՝ որ քանի մը կը յիշէ անանունը՝ այնչափ սուտ է, որ երբոր վանքին երիտասարդքը երկու քայլ անդին սուրբ Գէորգ Ռենեդիկտեանց պարապ կղզին տէրութենէն խնդրել ու հոն փոխադրուիլ կը բաղձային, և կ'առաջարկէին Աբբային և խորհրդականներուն, անհնարին սաստիկ կերպով ինքն Ներսիսեանն ալ անոնց հետ դէմ կեցաւ, թէ Մխիթարայ և մեր սուրբ ծերոց տեղէն և ոսկորներէն սրիկ հունա չենք երթար։ Ա. երբ ըսածնէս զատ՝ աս յայտնի ստութեամբ ալ նորէն ցուցուեցաւ, որ ան հինգին բերնէն անիրաւ թուղթը շինծու է։

Որու կը պոռչայ և կ'առաստպելէ ատ դեռ իր լատին Ա. Իրգիլիոսը չհասկրցող տխմարը, որ (էջ 94) անոր աս մէկ տողը (գիրք Գ. 48)

" Ավելեցայ և կանգնեցան հերքս և կառեաւ ձայնս 'ի կոկորդ "

Ա. Իրգիլիոսին ինքն իրեն խօսածն է տէր կը բերէ, որ Ներսիսին բերնէն է, և ոչ Ա. Իրգիլիոսին։ Ուրիշ քաջաբար ստութեամբ կը պոռչայ (էջ 99), թէ Մխիթարեանց հերետիկոսութեան տարակոյս չկայ, վասն զի Պապին սրբազան քահանայապետ կ'ըսեն ու կը տրպեն, որ հերձուածող կաթողիկոսին ալ նոյն անունն է։ Այս և առաջ Մխիթարեանց գրքերուն մէջ Պապ անունը կը վիստայ։ Երկրորդ սուտ է. ոչ երբեք Հայոց կաթողիկոսին սրբազան քահանայապետ կամ սոսկ քահանայապետ ըսեր են կամ տպեր են Մխիթարեանք, որ պապին միայն պահուած է. և այդ բառը՝ շատ վեհ շատ վսեմ բացատրութիւն է հայ լեզուին մէջ, և իբրև լատին Pontifexը՝ Քրիստոսի տեառն մերոյ զուրցուած է նոր կտակարանէն մինչև ասօր. թող կ'ուզէ նէ դրպրոցի տղոց հարցընէ։ Հայերը մօտ ատենները մեզմէ առնելով և Կաթողիկոսը մեծցընել ուզելով, իրենք ալ սկսան անոր սրբազան քահանայապետ ըսել։ Պիտու-

թեան բան, լեղուի բան, Ա. Իրգիլիոսներ ինչու կը խառնէ ատ անանունը. անիկայ շինծու թուղթ հանել՝ ուզածին պէս թարգմանել, թանձրամիտ զրպարտութիւն և թշնամանք ընել չէ. ինքը թող ասիկայնայի, մէկալը իրմէն շատ հեռու բան է։

Սուտ կը զրպարտէ սուրբ Ղազարու վանքն ալ Բրոբականտան ալ (էջ 103), որպէս թէ ասիկայ արգելք հանած ըլլայ վանքին որ առանց իրեն հրամանին բան չտպէ։ Սուտ է, ատանկ բան եղած չունի. հապա 1815ին Ա. Յովհաննէս ամբաստանութեանցը հետ խեր մը գրքեր ալ քանի մը Ռոլէձցի թշնամիք առանց կարդալու և հասկընալու զրպարտած ըլլալով, և Բրոբականտայի քարտուղար Բռուառանթիթին հաւատալով գրեր է վանքին, որ հիմկուհիմայ սա սա գրքերը նորէն չտպեն, մինչև որ քննուին։ Այտքը քննուելով արձակուեցան գրքերն ալ՝ տպարանն ալ՝ իբրև զուր չարախօսեալ. ինչպէս յայտնի կը կարդաս Մխիթարեանց Պատագովութեան էտին՝ սուրբ Աթոռին Գ. թղթերուն մէջ։ Եւ Բրոբականտայի նախարար կարդինալքը՝ Ֆոնթանա և Բռնսաալվի՝ Սրբազանին կոչմանէ երկան թղթեր կոնդակներ գրեցին աբբային, որ բոլոր ամբաստանեալ գրքերն ազատեցան քննութեամբ, և վէճերը ձեզ կը խաւրուին կոր՝ ձեզ մխիթարելու և կրօնաւորներդ քաջալերելու որ ճշմարիտ նախանձաւորներնց յանձնած հոգիներուն օգտին աշխատիք, և այլն։ (Տես Պատագ. էջ 29, 31)։ Ամբաստանեալը արդարացաւ ըսելը՝ չէ թէ պատիւ է եղեր և նշան անմեղութեան, ըստ անանունին (էջ 221), հապա ատ կարծելն ու ըսելը էշութիւն է եղեր. գրքերը ամբաստանուեցաւ, և ըստ այնմ տպի արգելք դրուեցաւ մի մէյմը, անանկ է նէ հաւատքի դէմ բան կար մէջը, կ'ըսէ։ Մենք ալ կ'ըսենք։ Իսկ արդ առանց փոփոխութեան մը ազատ ելան այն գրքերը, անանկ է նէ բան մը չկայ եղեր մէջը. կամ թէ չէ, սուրբ Աթոռը խաբուեր սխալեր է։ Հապա կրցաք մի անանունին ուղղափառութիւնը։ Ձեր յետենք հիմայ որու կը վայլէ ան իր ըսած պատուանունները. Մխիթարեանց, չէ նէ անանունեանց։

Սուտ կ'ըսէ դարձեալ (էջ 105—107), թէ Մխիթարեանք ուրացեր են որ Ա. Յովհան գիրքը Հ. Մ. Ինքայե-

լին չէ։ Ոչ երբէք. գէշ աղէկ միշտ անորն է՝ ըսած են. հապա միայն կ'ըսէին ու կ'ըսեն, որ վանքը էր գիտեր ան ձեռագիր գիրքը, յիսուն հոգիէն երկու հոգի միայն գտան գիտցող մէջերնին. և թէ Հռոմ խաւրածնին բուն հարազատ և ամբողջ իր ձեռքի գիրը էր, այլ օրինակած, ան ալ ոչ ամբողջ։ Հռոմայու վէճին ալ կ'ըսէ որ "Մեզի մատուցուած օրինակին կեօրէ հերետիկոսաց նպաստաւոր, դայթակղական և սուրբ Գրոցին դալոյ բան կայ մէջը,,։ Ըսածն ալ ատ է և ոչ թէ հերետիկոսական, ինչպէս ծանրացընելով կը պոռչայ անանունը։ Ղեկ տրվի թող իր ֆռէնկի լեզուն ալ։ Կտեւէն ալ կը կցէ վէճին որ "Բայց հեղինակը հերետիկոս է, վասն զի իր գրուածը սուրբ Գրոցին դատաստանին տակ ձգեց,,։ Բս կտորս անանունին հաւատարմութեանը բանին ձեռք չէ տուեր, ուստի չի գներ։

Սուտով հակասութիւնով շաղուած ըլլալուն գիրքը՝ մէյմը մէկէն մէյմը մէկալէն համ կու տայ խնտալու։ Բ. քեզի մէկ աղուոր հակասութիւն մ'ալ (էջ 108—112). Տիւզեանց աղնուական և ամենուղղափառ տունն որ անամօթաբար կը բամբասէ և կը զրպարտէ՝ իբրև գործակից չարեաց Մխիթարեանց, կ'ըսէ՝ որ ասոնք ըրին չըրին՝ ան տունը մնան պաշարեցին իրենց խաբէութեամբը ու մոլորցուցին։ Բրդ Մխիթարեանք անցեալ դարուն սկիզբէն՝ Տիւզ Յովհաննէսին օրէն մեր էին ան տունը, ուստի շատոնց մոլորցուցած պիտի ըլլան իր խելքին կէօրէ. հապա ինչպէս եղբը աղօթք կ'ընէ հիմակուանները՝ որ խելքերնին գլուխնին գայ, դառնան իրենց նախնեաց շիտակ Համբան՝ ուսկից քիչ մը ծռեր են։ Եւ թէ որ ասոնք քիչ ծռած են, նախնիքնին հիչ ծռած չըլլալու են, և Մխիթարեանք բան մը ըրած չըլլալու են։ Ոչն հատուածին մէջ մտիկ ըրէ մէկ ուրիշ հակասութիւնն ու Հռոմէական ուղղափառութեան յայտնի դէմ բան մ'ալ։ Կ'ըսէ որ Տիւզեանք խելքերնին Մխիթարեանց տալով և անոնց խաբէութեամբը մոլորեալ՝ Հնշմարտութեան դէմ ականջնին գոցեցին, մանաւանդ Հայոց հերետիկոսութեան վրայօք, Հռոմայու վէճիները արհամարհեցին, խղճմտանքներնուն դէմ բաներ

ըրին, անոնց չարեաց գործիք եղան և կռնակ կենալով մէկ տեղ վնասակար ընկերութիւն հանեցին՝ ուղղափառ ազգը Հայոց հերետիկոսաց մոլորութիւնը դարձնելու, և երկու եկեղեցին ապօրինաւոր և դատապարտելի ձամբով միացընելու. և նոյն տեղը կը խոստովանի կը վկայէ որ ամենաբարեպաշտ և ճշմարիտ ուղղափառ և ուղղափառութիւնը սորոյգ սիրող ընտանիք մըն է։ Որչափ կը միաբանի աս փառաւոր վկայութիւնը այնպիսի չարեաց հետ. կամ անոնք սուտ զրպարտութիւն են, կամ սոնք սուտ մարդահաճութիւն. երկուքն ալ անվայել հասարակ խելքով մարդու մըն ալ, ուր մնաց ճշմարտութեան վարդապետի մը։ Բայց իր բերանը սուտ և մարդահաճոյ խոստովանութեանը վկայ է բոլոր աշխարհք յարևելից յարևմուտս, ուր Տիւզեանց փառաւոր և բարերար անունը կը հռչակի յամենայն ազգաց, յատկապէս ուղղափառ հաւատքնուն հաստատութիւնը, որ ոչ իրենց բարձրութեան մէջ և ոչ յետին ծանր փորձանաց և աղետից մէջ բնաւ անձնասիրութենէ չխաբուելով՝ իրենց ուղիղ ճամբէն և հաւատքէն չեն մոլորած, միշտ ուղղափառութեան մեծ պաշտպան եղած են առաջի Դրան, և ամենայն կըրցած բարիքնին ըրեր են՝ մինչև իրենց թշնամեաց և ատելեաց ալ, որ իրենց պապենական առաքինութիւն համարուած է ազգին մէջ. և ազգը բաժնուելէն ետքն ալ մէկ տուն մը եղած չէ, որ իրենց չափ գործքով ստակով ուղղափառութեան յոգնած ըլլայ, որոնք տեղւոյս չէ երկարել գիտցող ազգին. մինչև իրենցմէ հալածուած կարծուած նոր չորս եպիսկոպոսին ալ առատ ողորմութիւն ընելով խաւրեցին տեղերնին, մէկը ըստակ մը չիտուած։ Նրանի Մխիթարեանց՝ որ այս ամենայն բարեաց պատճառ եղեր են Տիւզեանց տունը մնանելնին։ Բանկ մէջէ մէջ հակառութիւն է բոլոր անանունին ծուռ խելքէն եկած շաղակրատանքը. իր խելքը ծուռ ըլլալուն՝ զուրիշը ծուռ կը տեսնէ. աչքիդ ակնոցն ինչ գոյն է նէ ան գոյնը կը տեսնես։ Իսկ անանունը մէկ էջին մէջ չիյտեմ քանի ակնոց կը փոխէ։

Նոյն Տիւզեանց կտորին մէջ (էջ 111) կ'ըսէ որ անանունեանց միտքը Հայկական արարողութիւնը լատինացընել է։ Բանկ է նէ ալ գէշ բան մըն է. զի և ոչ

Լատինը կը ներէ որ եկեղեցւոյ մէջ ազգային և եկեղեցւոյ հաւանած լեզուէն դուրս՝ տաճկերէն օրհնութիւն աղօթք ըլլայ. ազգին տղոց քրիստոնէական խրատ և հաւատոյ յուսոյ սիրոյ զղջման ներգործութիւնք և բոլոր աղօթքները տաճկերէն պահանջուին, և հայերէնը մերժուի իբրև Մխիթարեան բան և ոչ կատարեալ ուղղափառական։ Ոչ ոք կ'ընդունի, կամ երկու խենթ միայն ըսեր են որ Մխիթարեանք 'ի հայութիւն հակեալ են. իսկ աշխարհ ամենայն ունիթոռներէն 'ի վեր կը պոռայ որ անանունին խելքով շարժողներուն միտքը՝ ամէն աշխարհք լատին ընել է. որ սուրբ Աթոռին ալ կամացը և հրամանին դէմ է, որ Բենեդիկտոս ԺԴ-ին կոնդակովն ալ կ'ուզէ թէ ամէն ծէսեր պահուին։ Ինչու անանունը այնչափ բերնին ջրերը վազելով կը գանգրտի Մխիթարեանց դէմ, որ խաչէօլուի խորհուրդները չեն ուզեր որ ըլլան եկեղեցւոյ մէջ ալ, ան ալ 'ի հարկէ տաճկերէն լեզուով. պատարագին՝ կ'ուզէ որ քահանան ծունկ չոգի հաւատամքին մէջ և այլ անհամար տեղեր. որոնց մէկն ալ չկայ և ոչ Բրոբականտան տպած պատարագամատուցին մէջը, և քահանային բերնի բառն ալ երէրպագանել կ'ըսէ, չէ թէ ծունր դնել կամ երկնել։ Որ ան փուչ կռիւը երբոր հանեցին նէ անանունեանք, լուսահոգի Գրիգոր ԺԱ. Սրբազանը հրամայեց միայն, որ երկու սրբագործութեան ծունկ չոգուի, որ գայթակղութիւն մը չըլլայ, ընտոր գրեր աղաղակեր էին։ Իսկ բերնով 'ի Հռոմ Մխիթարեանց ըսաւ որ մեր Բարսեղեան կրօնաւորքն ալ, նայն իսկ Հռոմայու մէջ, ընաւ չէն չոգիր պատարագնուն մէջ, այլ միայն երկրպագութիւն կ'ընեն արևելեան ծէսով, բայց ձեր տգէտ ազգը խօսք չի հասկընար։ Ո՞ր մէկն ըսեմ։ — Ինչու ձաձանչով օրհնութիւն տալու համար՝ քահանային լատին ուսանող կու տան վերան։ — Ինչու զատկի Ճրագալուցին Ռուսաւորչայի մոմը կը մարեն անանունին արբանեակները։ — Ինչու ինքն ալ կը գանգրտի դարձեալ Մխիթարեանց դէմ, թէ երկու տեսակաւ կը բաղձան հաղորդեցընել ժողովուրդը. բաղձացած չունին. բայց ինչ կ'ըլլայ եղեր բաղձան նէ. արդեօք մէկ մեծ հերետիկոսութիւններն ալ ան է. բայց ոչ ապաքէն այլ ամենայն արևելեան

ազգք ուղղափառաց, նոյն իսկ Հռոմայու մէջ, երկու տեսակաւ կը հաղորդուին. և սուրբ Փրկիչ Ժամերնիս բացուելու ատեն նոյն իսկ սուրբ Աթոռին կոնդակը Յուրիշանին չգրեց որ կրնաք հին արևելեան և աղգային բարի սովորութիւնը պահել։ Այս երբոր ուրիշ խոհեմութեան պատճառաւ չպահուեցաւ նէ՝ իբրև ոչ հարկաւոր, Մօնսիր Պուիսէն արդիւնաւոր և մեր աղգը սիրող Ազարիսթ քահանան գլխընուս միսը չիկերաւ մի, թէ ինչու բոլորովին զանց առիք աս աղուոր ծէսը, գոնէ մեծ օրերը պահելիք որ չկորսուեր։ — Ինչու մինչեւ ձայնաւոր պատարագը առանց Յանուն հօրի կը սկսի, թիւ պատարագը միայն Յանուն հօրով կ'ուզէ սկսիլ, որ Արոբականտան տպած պատարագամատուցին մէջն ալ չկայ։ — Ինչու.. ալ աս ծէսի գլուխը գոյնէք, անանուն եանց խիստ ձախորդ է բանը։

Ալելի ձախորդ խելքի նշանն ան է, որ ազգին լեզուին, արարողութեանցը, հնութեան յիշատակացը և պարծանաց, մէկ խօսքով՝ բովանդակ ազգութեանը ատեցող և թշնամի ըլլալով, ինչպէս բոլոր գրքէն յայտնի կ'երևի, ետքը կը յուսայ ազգը յուղղափառութիւն որսալ. երես ունի ըսելու թէ Մխիթարեանք մեծ արգելք են ազգին դառնալուն, մինչև որ անոնք չիվերնան, ազգն ուղղափառ չիկրնար ըլլալ. որ ընդհակառակն՝ բոլոր ազգը վկայ է որ Մխիթարեանց ազգասէր և բարեկամաբար համոզող վարդապետութենէն և անոնց գրքերէն եղեր են խիստ շատը ուղղափառ։ Այս թէ որ Մխիթարեանց Ջանիցը չարամիտ արգելքներ չըլլային, աստուծոյ շնորհքովը այսօրուան օրս բոլոր ազգը ուղղափառ էր. ինչպէս որ ուր որ գացեր են միշտ ուղղափառութիւնը աճեցուցեր ու ծաղկեցուցեր են. այս է Դաղատիոյ, Տրապիզոնի, Լրզրումայ, Թոխատու, և այլն և այլն, քաղաքովին վկայութիւնները։ Շատ անգամ խեղճ մեղուներն ալ իշամեղուներուն մեղը կը պատրաստեն։ Այս ալ աղէկ գիտէնք և կը ճանչնանք որ Հայերուն հակառակութիւնը ոչ այնչափ Հռովմայ եկեղեցւոյն դէմ է, որչափ իր ազգութեանը թշնամացը։

Գապիին գիրքը տարակոյս չիկայ որ խոհեմութեան թելադրութեամբը արգելուեցաւ. բայց կը զարմանանք

թէ անանունին առ ուսմանցօին վրայ ինչպէս դեռ ձայն մը չելլեր կոր, բայց եթէ ամէն առասպելի տեղ աս կ'օգտէ, աս կարդացուի տէր։ Սօրբոնայի Հ. Յովհաննէսին համար կ'ըսէ (էջ 119), որ Մխիթարեանք դատ ունին եղեր Մուրատեան կտակակատարին հետ, ան դատը Փարիզ Ֆրանսայի օրինաց չդատուելուն համար՝ Դոնէն Ֆէրման առնելու եկեր է Ստամպոլ։ Մխիթարեանց մտքէն ալ չէ անցեր որ Դոնէն Ֆէրման առնէն, զի բնաւ ամենևին դատ չունին Մուրատեան երբեմն կտակակատարին հետ, որ քսան տարիէն աւելի ալ է՝ կտակակատարութենէն Ինկիլիզի դատաստանով հրաժարած է. երկան պատմութիւն է, ան թղունք։ Իսկ հիմայ, այն ազգասէր և աշխուական անձը, հակընալով Մխիթարեանց թշնամեաց զրպարտութիւնները, սրտանց բարեկամ եղած է, և իր անմեղութիւնը ցուցընելու համար՝ հաներ ձեռուընին է տուեր բոլոր թշնամեաց թղթերը, որոնցմէ խաբուեր ու պղտորեր էր երբեմն ինքը և իւր քեռին։ Այս թէ և դատ ունենային հետը, ինչու Դոնէն Ֆէրման պիտի ուղէին. միթէ Ֆրանսայի օրէնքը անիրաւ է, կամ Տաճկի օրէնքը անօրէնութեան և անիրաւութեան պաշտպան է, որ մէկէն փախչին՝ մէկալին իյնան. երկու տերութեան ալ նախատինք է առ խօսքը։ Բայց անանունին գլուխը օրէնք չկայ որ բերնէն ելածը ականջը լսէ։

Մխիթարեանց երկու վարժարանին ալ շատ ոխ ունի (էջ 120). տղաքը կ'աւրէ կը կոտրէ իրենց հագուստովը, վրայ գլխի և ֆէսի մօտայովը, սիկառ քաշելովը, և այլն. և ան են մի եղեր առ դպրոցներուն պատուղը ըսելով կը պոռչայ։ Որպէս թէ անմնցմէ կրօնաւոր և քահանայացու տղաք պիտի ելլէին, կամ թէ ան հագուստ կապուստը, ուսմնցօնները, Ալիթէոնները անկից կը բերեն տղաքը, ուրիշ տեղ և Հոս Ստամպոլ չիգտուիր. ան մտքով ալ հինուին քաներ կը ձեւացընէ զանոնք, որպէս թէ բոլոր դպրոցը անոնք կարդացեր հինցուցեր են։ Անանկ է նէ, իր խելքովը, բոլոր Ստամպոլի պատանիներն ու երիտասարդները, անթիւ Կաթոլիկ՝ որ դպրոցը չեն տեսեր, Հայ, Հոռոմ, բիւր բիւրից Տաճիկ, մինչև Հրեայք ալ, ասոնք ամէնը Մուրատեան և Ռա-

ֆայէլեան վարժարանէն եկեր են։ Ասկէ հասկրցիք միւս զրպարտութիւնն ալ, որպէս թէ տղաք ըսած ըլլան որ Հայ՝ Կաթոլիկ՝ ամէնը մէկ է, խտրութիւն չկայ։ Կամ թէ ատ պատասխանը թէ որ առեր է նէ տղուն բերնէն ատ փորձիչը, որ իր առջի տեսութիւնը ատ փորձութենովն սկսեր է, ինչու ան ալ չէ հարցուցեր որ թէ ամենը մէկ է խտրութիւն չկայ, ինչու անանկ է նէ դուն ալ քու ընկերներդ ալ բնաւ Հայու ժամ չէք երթար։ Ա՛ս մոռցեր է հարցընելու, վասն զի պատասխանէն իր ստութիւնները դուրս պիտոր ելլար։ Մ՚խիթարեանք որ չունին ատ վարդապետութիւնը նէ, տղաքն ուսկից կ՚առնուն։

Դպրոցներուն ջատագովութեան համար ընդդէմ անխիղճ անանունին հերիք է ըսենք, որ Դերպ. Մ՚աբուշ նախագահը, որ խիղճ ալ ունէր՝ աստուած ալ, թղթով աղաչած է Մ՚խիթարեանները՝ որ իր մէկ եղբօր թոռը դպրոցներուն մէկը նետեն, երթայ մարդ ըլլայ. աս գիրը կեցած է քովերնին։ Այ աս գիրը՝ հանդերձ շատ մը տղոց ծնողացը բարի վկայութեամբ՝ Հռոմ խաւրուած է, երբոր իրեք տարի առաջ մէկն ալ հոն աս սուտ զրպարտութիւնները խօսեր, գրեր ու տպեր էր։ Օ՚արմանքն ան է որ անիկայ Ցօն Կանբաուօն չէր, և անանունին հետ մէկ հոգի՝ մէկ գրիչ է։ Բայց թէ որ իրաւցընէ ըսածին պէս գէշ ըլլային վարժարանները, և անոնցմէ դարձած ուսանողները այնչափ աւրած, տգէտ, և անպիտան, կարծեմ որ անանունը այդչափ կատաղութեամբ չէր յարձակեր անոնց վրայ. գիտնալով, մանաւանդ թէ ուրախանալով որ անանկ վարժարան ոչ ոք կը խաւրէ իր զաւակը՝ տեսնալով անկէց եկած բարի պտուղները, որով ինքնիրեն կը պարպէին վարժարանները և ինքն իր վախճանին թերևս կը հասնէր։ Շ՚իտակ և էն պէտքի բան, ամէն բան թողու և միայն աղօթելու է որ աստուած զմարդ չիկուրցընէ, որ է՝ խելքը գլխէն չառնէ. սուրբ Գրքէն կը սորվինք որ աստուած ալ ասկէ անդին պատիժ չունի։

Ցատեան Ա՚միրային Փարիզու վարժարանը Սօրղուձ՚ձեան Հ. Յովհաննէսին խոստովանելը մենք չիյտենք բնաւ. բայց ան աստուածասէր և բարեպաշտ ամիրան, որուն դովութիւնը նոյն ինքն Դեր. Ֆէուիէ-

ին առաքելական քննիչն ալ կ'ընէ մեծապէս իր գրուա-
ծոցը և իր այցելութեանը տուած տեղեկութեանցը մէջ,
թէ որ իր տարեւորական ուղեւորութեանը մէջ մէկու մը
խոստովաներ Փարիզ և Ս՝ուրատեան վարժարանը հա-
ղորդուեր է նէ, նոյն ինքը ամիրան, աստուած իրեն
երկայն օրեր տայ, դեռ կենդանի է, և հեռու աշ-
խարհք չէ, հապա անանունին քովը, որուն հետ կար-
ծեմ որ քիչ ծանօթութիւն ալ չունի, և բարիքն ալ
վայելեր է, կրնայ հարցընել և ստուգել բանին ինչ և
ինչպէս ըլլալը. նմանապէս Սօրղուչեան Հ. Յով-
հաննէսն ալ իր քովն է, թող կանչէ հարցընէ և կ'ուզէ
նէ երդմնցընել ալ տայ թէ ինքը խոստովանցուցեր է մի,
որպէս զի ստոյգը իմանայ ու սուտ ու մուտ բաներ չգրէ։
Այլ թէ որ կ'ուզէ նէ միտքը չդնէ որ աստուածաբանու-
թիւն և բարոյական միայն ինքը գիտէ և ուրիշի վրայ
գէշ միտք չունենայ։

Մխիթարեանց Ջատագովութիւնը ազգերնուս աւ-
ուրիկը քիչ մ'ալ Պէյօղլուի Ֆուէնկներէն է ըսեր։ Ան-
անունը (էջ 123) Եւրոպացիները ոտք հանելու համար՝
որպէս թէ իրենց համար զուրցուած է ան խօսքը, Պէյօղ-
լու խառնիճաղանճ Ֆռանկաց յայտնի ապականութիւնը
կ'ուրանայ ու կը սրբացընէ զիրենք։ Բայց ատ սրբու-
թիւնը թող բուն Եւրոպացի աղնիւ Ֆուէնկներուն
հասկըցընէ, որ ականջովնիս ըսեր ենք և կը ըսենք՝ որ
կ'ուրանան Ստամբօլցի կամ Պէյօղլուցի Ֆուէնկ ըլլալ-
նին ու ըսուիլ չեն ուզեր. ու ես Ֆռանսըզ եմ, ես Թա-
լեան, ես Ինկիլիզ, ես Ռեմցէ կ'ըսեն՝ ամբէնաքնուն,
Փէռօթ չենք կը պոռան ու մէկդի կ'ելլեն։ Ա՛յ կտորիս
մէջ ալ խաբուած է անանունը. Պէյօղլուն բոլոր ոտք
հանել մը հանեց, բայց իրեն դէմ. զի գրեթէ ամենքը,
քահանայ աշիարհական, թքին իր գրքին երեսը։

Մխիթարեան ժողովուրդը չարախօսեր է՝ անար-
գեր է կ'ըսէ (էջ 128) եկեղեցական մենծերը. 'ի հար-
կէ իրենց ազգինը պիտի ըլլայ։ Ա՛յ ալ բոլորովին սուտ
զրպարտութիւն է, 'ի բայ առեալ քանի մը խենթա-
բիւն պատանիներ, որ ամէն կարգի մէջէն կայ, և խիստ
շատ՝ և ոչ Եւրոպայի երեսը տեսեր է։ Բայց ոտքա ալ
հիմայ ատ աղուոր գիրքովը տեսնալով և իմանալով ե-
կեղեցականացը հոգին ու միտքը, չգիտեմ՝ որ ինչ պտուղ

պիտոր հանէ և ինչ ընէ ասկէց ետքը։ Աստուած ըլ-
լալիքներէն պահէ։ Այս խօսքը մեծ ցաւով սրտի կ'ը-
սենք Գերպ. Իլբրոյին յայտնի ապացուցանելէն ետև որ
այս անիծած գիրքը հայու եկեղեցականաց գործակցու-
թեամբ եղած է։

Յետ ընդունելու որ Մուրատեան և Ռաֆայէլեան
վարժարանները ոչ միայն որբ և աղքատ տղաք առնուեր
են, այլ և չափաւոր մարդոցը, աղտ կը նետէ խելքովը
(էջ 127) որ միշտ ձրի չեն առնուիր։ Այց կտակը աղէկ
կարդացեր և ֆրէ բառը տեսեր ու նօտը գրով կը տպէ
աչք խոթելու համար նէ, տեսնելու էր նաև ան յայտ-
նի խօսքը որ կ'ըսէ կտակը, թէ ունևորներն ալ ըստ
կարի իրենց ծախքովը առնուին, որ աղքատաց զրկանք
չըլլայ։ Այսանկ ամէն բան կերպարանափոխ ընելով, աւ-
ելով, խանգարելով աս գրողը ինչ կը վաստրկի, ինչի
յոգներ է, բայց եթէ կատարեալ ստախօս խաբեբայի
և նենգաւորի անուն ժառանգելու. և անանկ ալ կ'աշ-
խատի ատ բանիդ, որ մէկը չէ աշխատեր ուրիշ մեծ
անուն մը վաստրկելու։

Մխիթարեանց մեծ հերետիկոսութեանը փաստ մին
ալ կը բերէ (էջ 127), քանի մը Հայոց մանր տղաք
առնելին իրենց Փարիզու դպրոցը. որ ընդ հակառակն
կրնար աս բանս իրենց կաթոլիկութեան ջանքին փաստ
ըլլալ, որ Հայոց տղաքը ան դաշամբ առնելով պզտիկ
հասակէն ուղղափառ վարդապետութեամբ կը կրթեն
և ուղղափառ կը մեծցընեն. որ աս սերմանքը իրենց մեծ
օգուտ կրնայ ըլլալ ետքը Հնմարտութեան մէջ մնալու
կամ զայն Հանչնալու և դիւրաւ ընդունելու։ Այց
չմնան պիտի եղեր ոմանք սորվածնուն մէջ. սուրբ աւե-
տարանի սերմանացանին հունտերն ալ՝ որը Համբան ին-
կաւ, որը ապառաժ քարին վրայ. բայց գիտէք որ պի-
տի չի մնան, ինչու կ'ընէք պիտի ըսէ։ Ոչ. մենք անա-
նունին մարգարէական հոգին չունինք։ Այս քսան տա-
րուանս մէջ այսչափ հայ եկան կաթոլիկ եղան, որը մնաց.
ինչու դարձեալ եկողը կ'առնուն։ Այնտարակոյս աս մրտ-
քով է որ Ազգասէր պատուական քահանաներն ալ
Պէպէքի դպրոցներն և Ենոյի մեծարոյ վարդապետանե-
րը իրենց Իզմիրու դպրոցը ամէն ազգէ տղաք կ'առնեն,
հայ, հոռոմ, ինչուան փուօթէսթան և հրեայ։ Այսաք

թող զանոնք դատապարտէ անանունը, եւ թող Մխիթարեանները։ Բայց ալ կուրութիւն կրնայ մի եղեր ըլլալ, քթին տակի եղածն ալ չտեսնել։

Յաջորդ էջը (128) կը պոռչտայ համարձակ, որ դպրոցները քիչ հասարակաց աղօթք կայ եղեր, և հազիւ կիրակի և տօն օրերը սուրբ պատարագ, ան ալ անկարեա՛ իբրև պարտք մը. որովհետև անանունը սրտագէտ է։ Մէկ դի թողլով քննելը՝ թէ ատկէ եւեթ բան պէ՞տք է մի արդեօք աշխարհական տղոց, կամ թէ իրաւցընե՞ շաբաթը մէկ օր մը միայն պատարագ կը տեսնան թէ աւելի, և կամ թէ Ֆրանսայի ուրիշ դպրոցներուն՝ մինչև եկեղեցական դպրոցաց ալ կարգը ի՞նչ է, ի՞նչպէս կ'ընեն, ըսածին ստուգութեանը հարկ չէ որ ալ մենք պատասխան տանք, թող տղաքը տան՝ որ ի՞նչպէս Նափայելեան դպրոցը ամէն օր և Մուրատեանը շատ օր պատարագ տեսնել կայ, և առտու իրիկուն հասարակաց աղօթք, ամէն տանը հինգ օրը կամ ամիսը մէկ խոստովանանք և հաղորդութիւն. և այնչափ ստէպ աստուածային պաշտամունք և հոգևոր կրթութիւնք, որ գուցէ խեղճերէն ոմանք ձանձրացած ալ ըլլան։ Այս վերակացուներէն ոմանք իրենց մեծերէն ազդարարութիւն ալ լսած են՝ որ խիստ շատի չխղդեն, և տարբերութիւն մը ըլլալու է աշխարհականացու և քահանայացու տղոց մէջ։

Բանց մտածելու որ դեռ հիմկուհիմայ մեծ բաներ չկրնար ըլլալ ան դպրոցաց մէջ, և յայտարարութեան խոստմունքները չէ թէ ասօրուանս համար են և ամէնը ամէն տղոց համար, հիմկուհիմայ քիչ բան ըլլալուն պատճառ՝ Մխիթարեանց տգիտութիւնն է, կ'ըսէ (էջ 130)։ Չի մտածեր, չի լսեր որ ամէն բարձրագոյն ուսմանց յատուկ Եւրոպայի քաջ վարպետներ բռնած են և կան. կամ թէ չէ, աս վարպետները կ'ուզէ կոտրել, կամ թերևս կ'ուզէ ըսել որ իմ՞ ձեռքս որ ըլլար ան դպրոցները՝ ան ատեն մէկէն ի մէկ, և ան ատենը միայն, բոլոր Եւրոպա ալ գիտուն պիտի ըլլայ որ գիտուն վարպետներ տայ և դպրոցներէն գիտնականք ելլեն։ Կուրութիւն ամբարտաւանութեան որով մարդ ինքզինքը ուրիշներէն վեր կը դնէ, զուրիշները կ'արհամարհէ, և չգիտցած ու չփորձած բանին վրայ դրսէն խոշոր խոշոր կը խօսի, բայց մէջն որ մըտ-

նայ փորձը առնէ նէ, ան ատեն կ'իմանայ դժուարու-
թիւնը և իր ինչ ըլլալը, ան ալ թէ որ իմանալու չափ
խելք ունի նէ։ Այդ աղը մէկալն օր աստուած ուզէ նէ,
գուցէ ուրիշ ճեծահանքաբ դպրոցէ ելածներն ալ կը տեսնէ
աղգը ինչ փիլիսոփաներ, ինչ իրաւագէտներ, ինչ եր-
կրաչափներ, ինչ մաթէմաթիկոսներ, ինչ աստղաբաշխ-
ներ, բնագէտներ, քիմիագէտներ, բնապատումներ,
նկարիչներ, մանաւանդ ինչ տնաշէն ճարտարապետ-
ներ .... Փառք Աստուծոյ, ազգերնիս Եւրոպային հա-
ւասարեցաւ, թերևս անցաւ ալ... Հիմկուց կ'երևի
նշանները. այդ ճարտար, վայելուչ, պերճախօս և
քրիստոնէավայել գիրքը շինող անանունը ան դպրոցին
գլուխը և ուղղիչը պէտք է ըլլայ որ իրեն պէս կըտ-
րիճ, պերճախօս և աստուածային նախանձով լեցուած
իմաստուն և գիտուն աշակերտներ հանէ. Թէպէտ
և Voltaire անունը չորս հինգ տեղ սխալ ու կրճատ
Voltair կը գրէ։ Բայց անմեղադրելի է. վասն զի իր
խիստ մեծ բարեպաշտութենէն աղէկ չէ նայեր ատ
մարդուն անունը վրայ. և սակայն գրքերը կարդա-
ցած ըլլալու է որ գէշութիւننին գիտէ կոր և կը գրուցէ։

Կարծեմ Փարիզի Ս՝ուրատեան դպրոցին ելած պի-
տի ըլլար ան տաճարակապուտ տիրացուն ալ որ ասկէ
տասը տարի մը առաջ գիշերանց հրաշագործ սուրբ Աս-
տուածածնայ պատկերքը իր մեծագին զարդերէն կո-
ղոպտեց. և երբոր ատ սոսկալի անօրէնութիւնը ընո-
ղին վրայ բանադրանք դրուեցաւ, իր աստուածավախու-
թիւնը ցուցընելու համար՝ նորէն մէյմէն ալ նոյն անօ-
րէնութիւնը ընելու յանդգնեցաւ։ Բայց անանունին
(էջ 11) ըսածին պէս "Շատ պէտք չէ խառնել որ հո-
տերը չելլեն,,։

Շատ հարիւրաւոր անձինք Ս՝խիթարեանց պատճա-
ռաւ Հայ եղեր են ըսելէն ետքը (էջ 89), Հալածանքին
ատենը կ'ըսէ (էջ 132) 15,000 հոգի աքսոր գացեր են,
բաց ի սակաւուց որ պահուըտեր են։ Ինչ աղէկ գիտէ
անանունը ազգին բաները. բայց թէ որ հալածանք չե-
ղած շատ հարիւրաւորներ հայացեր էնէ, հալածանքին
ատենը, որ իր խելքովը Ս՝խիթարեանց ուզած փնտռած
և ընել տուած բանը պիտի ըլլայ, շատ հազարներ հայ
եղած պիտի ըլլան. և սակայն բոլոր բոլոր 12, 15 հա-

զար հոգի հաղիւ եղած է մինչև ցայսօր Պատմպօլի Կա-
թոլիկը, եռքը ուր գտնենք ան հայացած հազարաւոր-
ները և 15,000 աքսոր գացածը։ Բայց գիտես որ անա-
նունը Մուրատեան վարժարանը չէ սորվեր թուաբա-
նութիւնը, անոր համար մեզի չի յարմարիր իր հա-
շիւները, ինքը աղէկ գիտէ և պիտի սորվեցընէ վար-
ժարաններն իրեն որ տուին։

Ա երի ըսածը մոռնալով, եռքի հալածանքին, կ'ըսէ,
(էջ 133) զրեթէ ամէնը հաստատուն կեցան հաւատք-
նուն, և ամենաքիչ մարդ հայացաւ, և ասոնք բոլոր
Մխիթարեան ժողովուրդ էին։ Աչ ինչ ամենաքիչ
ժողովուրդ ունին եղեր Մխիթարեանք իրենց որդիք
կամ կողմ, և ան ալ բոլոր հայացած պիտի ըլլան, զի
Մխիթարեան մարդը ուրիշ բան չկրնար ըլլալ։ Ան-
քիչուորութիւնը պէտք չէր այսչափ նախանձ շարժեր
անանունը։ Բայց սուտ է. հալածելոց և աքսորելոց
ցանկը կեցած է, որոնց խիստ շատը Մխիթարեանց
ժողովուրդ էր, որոնց սիրտը աղէկ արմատացած ըլլա-
լու է հաւատքին՝ նոյն իսկ թշնամւոյն ըսածին կէս-
ըէ, և շատը դեռ ողջ են իրենք կամ գէթ տներ-
նին, և արդար բարկութեամբ կը թքնեն անանունին
զրքին երեսը, որ իրենց արդիւնքը ուրացեր է։ Նոյն-
պէս ընդ հակառակն վախերնուն ամենաքիչ հայացող-
ներուն մէջ կիսուակէս Բոլէցցոյ և այլոց որդիք են։
Հարկ է մի նորէն արթընցընել կարդացողը՝ հակասու-
թիւնը իմանալու, որ վերը դեռ հալածանք չեղած շատ
հարիւրաւորներ հայացոյց, և հիմայ հոս ամենաքիչ է-
զան։

Աքսորեալներէն կ'ըսէ (էջ 133) շատերը խոստովա-
նողական մահուամբ մեռան և ի վերին Սիոն ամիսո-
փեցան։ Կարծեմ մոռցած պիտի ըլլայ որ ան մեռնող-
ները շատ էին. և ոմանք՝ Ներմակեան ծերունի Հ.
Դաւթին և Ղեալեան Հ. Ադանիային ձեռքը մե-
ռան, որ Հռովմայու հրամանաւ և ամենայն առաքե-
լական իշխանութեամբ խաւրուեցան անոնց դաղտուկ՝
ատ սոսկալի Մխիթարեան նզոված հերետիկոսները,
մինչդեռ անանունը... Տէն Կասպարէն... չորս փոքր
աստիճանն ալ չուներ, անոր համար պիտոր ըլլայ որ
խեղճ Ղեալեանը երկու տարի առաջի վարձ այն ծա-

ռայուԹեանը Պատմիչն քշուեցաւ։ Բայց մեռնի նէ՝ յուսանք որ ան ալ օր մը յաւիտենական փրկուԹեանը կը հասնի ՄխիԹարայ քովը։

Հալածելոյ բարի օրինակէն, կ՚ըսէ (էջ 133), շատ Հայեր Կաթոլիկ եղան։ Բ. շատն ալ մենք չկրնանք. քանի մը հոգի տեսանք, բայց աւաղ որ անոնք ալ գրեԹէ բոլորը մէկիկ մէկիկ՝ ինչպէս որ եկան անանկ ալ առին քալեցին, բարի օրինակը կոնակը դարձուցած ըլլալուն իրենց՝ կը կարծենք. մէկ երկուքն ալ եկող քահանայիցմէ գացին Թրքացան։ Բ. ինչէ՞ն եղաւ. անանունին հարցուցէք. մոռցած պիտի ըլլայ ըսելու որ հալածեալ և աքսորեալ ՄխիԹարեանը՝ ազգին ժանտախտը՝ եկան ասոնք նորէն դարձուցին Հայ ըրին, ՑաՀիկ ըրին. մե՛ղք, ինչպէս մոռցեր է. Յօն Կասպառօն ալ միտքը չէ ձգեր։

Կ՚երևի Թէ, կ՚ըսէ (էջ 137), ամենէն եւեր ՄխիԹարեանը կը վախնան եղեր հալածանքէ. և ինչո՞ւ կը վախէին, կ՚ըսէ, իրենք որ միշտ պաշտպան և ջատագով են եղեր Հայոց։ Շատ հակասուԹիւն տեսեր էիր մէկմէկէ դոնե քիչ մը՝ հեռու, բայց ասանկ մէկմէկու մօտ՝ կարծենք Թէ մէկը տեսած չէ՝ քանի որ մարդիկ լեզու ունեցեր ու խօսեր են լսանին տակը։ Փոխանակ ըսելու որ կը վախէին՝ ուրեմն հալածողներն անոնց ալ Թշնամի էին. և իրաւունք ունէին վախնալու, վասն զի ոչ ոք բաց ի իրենցմէ հերձուածի դէմ գրեր է ազգին մէջ։ Իսկ Թէ որ ջատագով և պաշտպան եղեր են նէ Հայոց, ինչո՞ւ պիտի վախնային։ Բայց ո՞ւր են աւելի վախնալուն ալ վկայքն և ապացոյցքը. անանունին գրքերին մէջ յանկարծ անանկ կ՚երևնան։ Բ. մարդուն միտքը ոչ դուռ ունի ոչ դռնափակ, որ ներս բան պահէ, հիմա ըսածն ալ կ՚ելլէ կը փախչի։

Նուրիձան առաջին Նախագահ եպիսկոպոսապետին ՄխիԹարեանց հետ մեծ սէրը և համարումը մինչև ցայսօր չկրնալով մարսել անանունին ստամոքը, կ՚ըսէ (էջ 139) որ, "Սուրբ Պ աղարու կերուխումի գաւառներուն և կանչվռտոցին մէջ ինք ղինք մոռցեր և բարեկամ եղեր է ՄխիԹարեանց,,. և ասանկներ շատ տեսեր եմ, կ՚ըսէ։ Իսկ է որ ատանկ տեղեր շատ մտեր եղեր է, Թէ և սուրբ Պ աղարու վանքը ոտք կոխած

չունի. և ասել է որ կերուխումով մը ինք Մխիթարեանները ամենուղղափառ պիտի շիներ։ Սուրբ Պատարաւ վանքը ինչ կը կարծէ կոր ատ խեղառը. Ջինթօփինթօյին մեխանան, չէ նէ մի Պլնտէլին ըքանտան։ Ը՛ն նախատինքը չիյտեմ կը ներ՞ իրեն Լուրիճանին երանելի հոգին երկինքը։ Ը՛սոր պատասխանը կուտան՝ բայց յանանունեանց՝ բոլոր ուղղափառ ազգը, որ տեսած է և ճանչցած այն Լախագահը, և արիւն կուլայ իր եպիսկոպոսապետին այսպիսի դառն նախատինքին վրայ, անանկ անանուն մէկէ մը՝ որ անոր ոտքի եղունգը չաժէր, նստած աթոռին ալ մէկ ոտքը։ Իսկ մենք ուրիշ պատասխան մը տանք։ Բոլէճցի Ը՛գեր Ստեփան եպիսկոպոսն ալ, ազգին վիքարութիւն ըրած մարդ և խոհականութիւնը ազգին մէջ զուրցուած, ան ալ ազգային բաժանման կերուխումներուն մէջ չգնայ նստաւ սուրբ Պատարաւ վանքը, հապա խիստ նեղութեան ատենին՝ Երբոր ի սուտ եղբարց հալածանք կը քաշէին. բայց ան ալ իր բերնովը ըսեր է, դեռ ողջ են վկայք, թէ "Մեր Բոլէճցոյ չար բախտն է, որ խամութեան ատենին Մխիթարեանց թշնամի կ'ըլլան, հասունութեան ատենին բարեկամ.,։ Սակայն սխալեր է խեղճ ծերունին. վասն զի 45, 50, և 55 տարուան ալ մարդ կայ որ հասուն չըլլար եղեր։ Իսկ մենք ատոյգ տեղեկացանք՝ որ ան կերուխումները և դաւաթներու փաթըռտոցը՝ Փանկալթի Տօն Կասպառօ Պուչչինոյին տունը, և պարտէզը կ'ըլլան եղեր՝ աս ամպարիշտ գիրքը գրելու ատեն. և իրաւ որ ալ՝ գինի կը հոտի բոլոր գիրքը, մանաւանդ թէ գինովի փսխունք, թէ որ դժոխքի գայռ է նէ։

Լուրիճանը զղջայեր է, կ'ըսէ (էջ 140), իր Մխիթարեանց հետ բարեկամութեանը, և աս կսկիծէն կաթուածի հանդիպեր մեռեր է։ Բայց ի անանունէն ուրիշ մէկն ալ կայ մի ազգին մէջ որ աս զղջումը լսած ըլլայ՝ գիտնայ։ Բաղումք կը վկայեն որ մինչև հոգը անանկ մնայ հետերնին. և նոյն իսկ անանունին բարկութիւնը մեռած գացածին հետ՝ ատ կը նշանակէ։ Հապա անոր Տէր Պօղոս եղբայրը ինչո՞ւ կաթուածով մեռաւ։ Բայց եթէ թերևս Հ. Միքայելին Պ. Գանն Գաբաբոյն ինտուկէն գոնալուն համար, որ առանց ամչնալու պար-

ծելով և նը պատմէ անանունը։ Հապա Բ.ստարձի ե-պիսկոպոսը ոմ մեռուց՝ հարիւր հազար զուռուշի տունն առնելով՝ և ուրիշի վրան դարձուցանելով։ Մարուշ Լ.սխա-գահը, որ Մ՝խիթարեանց Մաչիավելլիստներեան ձառը գրեր է անանունին հաւատանք նէ՝ ան ինչէն կաթուածով մեռաւ, որ խեղճը՝ Լ.ուրիձանին պէս ալ օրերով չպառ-կեցաւ, մէկէն նաւակին մէջը գնաց։ Բ.որ պատճառը վարը համառօտ մը կ՝ըսենք. հոս՝ Լ.ուրիձանինը ըսենք։ Բ.նանունեանք այնչափ չքաշեցին իր բարեկամութիւնը Մ՝խիթարեանց հետ, և այնչափ բան գրեցին Հռոմ խեղճին վրայ՝ թիւ պատարագը Յանուն հօրով սկսե-լու և ծնրադրութեանց համար, (որ երկուքին մէկն ալ չկայ նոյն իսկ Լ՝րոբականտան տպած պատարագամա-տուցին մէջ), որ խմնալով և կրելով, ցեղին հիւան-դութեան՝ որուն ենթակայ էր՝ հանդիպեցաւ, և գնաց ազատեցաւ ձեռքերնէն։ Բ.ս է ճշմարտութիւնը, որու կ՝ուզէք ատենին մեռած մարդու հարցուցէք։ Լ.ս ան թղթերն ու գրերը կեցած են Հռոմ դիւանը. կը յու-սանք որ անանունը անանք անկից ալ չկրնար անհետ ը-նել, ընտոր բանին ձեռք չտուած ամէն բաներն ըրեր է իր արդար գրուածքին։

Մ՝խիթարեանց ճամբան, կ՝ըսէ (էջ 157), ճշմարիտ և ստոյգ արգելք է այսուհետև հերձուածողաց չդառ-նալու։ Բ.ս բանս այնչափ իրաւ է, որչափ իրաւ է որ ան-անունին աս սքանչելի աստուածային հոգւով և հա-ւատքի նախանձով գրած գիրքն որ կարդան, և վեց տա-րիէն 'ի վեր ազգին և գլերին մէջ եղածներուն պատ-ճառն որ հասկնան, մէկէն պիտի վազեն գան ի ծոց ուղղափառ Հռոմէական եկեղեցւոյ։ Օրերնուս հայ լրագիրները և այլ գրուածները, յայտնապէս աս բանս կը խոստանան և կը յուսայընեն կոր՝ մանաւանդ ոմն ազ-գասէրը զարհուրելի հայհոյանքներովը Մ՝խիթարեան հերետիկոսաց դէմ, ի ցնծութիւն անանունին սրտին՝ որ Սիմոն կաթուղիկոսին նոյն Մ՝խիթարեանց դէմ գրածները հաւնելով ու պարծելով կը բերէ (էջ 64)։ Յիշած լրագիրներս և միւս գրուածը ծանօթ են գիտուն հասարակութեան, հարկ չկայ զանոնք օրինակել հոս՝ գիրքս մեծցընելու համար անանունին պէս։

Ռեմական եպիսկոպոսները, կ՝ըսէ (էջ 163), ձեզ չեն

ուղեր, ով Մխիթարեանք, ինչ տէր աբբանիդ ձեզ կը խաւրէ կոր իրենց երկիրը, օտարի տուն ինչ բան ունիք. աս ուրիշին իրաւունքը յափշտակել չէ՞ մի, ուրիշի երկիրը կոխել ասպատակել չէ՞ մի։ Բայց կեցցը նայինք. ոՎ է աս ինքնակալ տէրը սուրբ եկեղեցւոյ վիճակին ալ, օսմանեան հողին ալ, որ ատ պատգամը կ'որոտայ, որպէս թէ բոլոր եկեղեցւոյ իրաւունքները իր ձեռքն է, և իրեն հնազանդին պիտոր ամէնը ու իրմէն վեր դերագոյն հրամանատու մը չկայ որ որուն ուղէ իշխանութիւն կարենայ տալ իր դէտինը, իր այդին բանելու. և որպէս թէ Մխիթարեանց բոլոր հայրենեացը, տանցը, ծնողացը և ֆամիլեանեներնուն տերը ինքն անանունն է. կարճ ասենք՝ բոլոր երկրին միահեծան թագաւորն է։ Մխիթարեանները թագաւորութիւն պիտի կանգնեն տէր դրպարտողը, ինք թագաւո՞ր մի կ'ուզէ կոր ըլլալ։ Ուրիշ յանցանքներու ուրիշ պատիժ պէտքը կ'ըլլայ, ասոր՝ ըստ մեզ՝ դարմանոց և եօթը շղթայ։

Այն տեղը սուտ ամբաստանութիւն կ'ընէ Աղէքսօն Հ. Գրիգորին վրայ, խռովարար հերետիկոս ըսելով։ Բա անձը թէ որ սուրբ Պ աղարու աշակերտ է, անհնար է որ ատանկ բան ընէ. բայց հիմայ ամէնքը գիտեն որ չորս տարի է անի վանքէն հանուած է, վասն աղատամիտ ինքնագլխութեանը. միայն անանունը դեռ ատ չիյտէ կոր։

Բանց քնաւ մէկ ապացուցի մը՝ յայտնի թղթերու և ապացոյցներու դէմ, (էջ 165), կը դրպարտէ նաև զՍրբազան պապը Գրիգոր ԺԶ. ըսելով որ բարկացեր ու դատապարտեր է Մխիթարեանց կասկածելի Ճամբան և նենգութիւնը։ Օ արմ՛նք որ ատանկ սոսկալի դատապարտութիւնը՝ ուրիշ տեղ մը դուրս չէ եղեր բաց ի անանունին գրքէն։ Այս շատ բան որ մուցեր է գրելու թէ մարդ ալ խաւրեր է նոյն Սրբազանը Վենետիկ, և սուրբ Պ աղարու վանքին նուիրած իր արձանը եւ է առեր, որ անանկ կասկածելի նենգաւոր հերետիկոսաց հետ բան չունենայ։ Բ. ինչպէս Ճշմարտախօս է անանունը որ թուի թէ լսած դատապարտութիւնը ան փառաւոր արձանին յաւիտենական յիշատակը պիտի ըլլայ։

Բ. մկերպոյեան Հ. Մովսէսը քօլեոայի հանար պաքի

տնօրինմանը դէմ քարոզ տուեր է եղեր Օրթագէղի ժամը (էջ 166), և ինքը նոյն օրը պաքը կերեր է եղեր։ Տեսար որ ատ մարդուն անխելք զրուածը՝ Մխիթարեանները չէ թէ միայն հերետիկոս, այլ և Մխիթար աբբայէն ի վեր խենթ յուցընել կ'ըլլայ կոր։ Հ. Մովսէսը՝ մեծ պահոց կիրակին՝ ապաշխարութեան վրայ քարոզ կու տայ կոր Օրթագեղ, թէ ապաշխարութիւնիս պէտք չէ այլ և այլ մնոտի պատճառանք ներով թուլցընենք, վասն զի այն է մի միայն փրկութեան ճամբանիս։ Այս քարոզը աւասիկ, անանունին խելքին զրքին մէջը, եպիսկոպոսին՝ մանաւանդ թէ եպիսկոպոսաց՝ տնօրինմանը դէմ պատերազմ կ'ըլլայ կոր։ Բայց աս բանս ան ատեն մինչև Հռոմ գրուեցաւ, և սուրբ Յողովին նախարար կարդինալը, "Հապա ինչ պիտի ըներ քարոզիչը, ըսեր է, թուլութեան քարոզ մի տար. ոչ ապաքէն մենք ալ կը տնօրինենք նէ զի ջանալով մէկ կողմանէ, մէկալ դիէն ալ միշտ նոյն խրատը կու տանք. շատ աղէկ ըրեր է ատ քարոզիչն ալ.,։

Բողորովին անճոռնի առասպել մ'ալ կը պատմէ (էջ 169) իր քովէն շինած կամ ժամանակին թշնամւոյ մը զրպարտութիւն, որպէս թէ 1820ին Բաժշկեան Հ. Մի նասը Տրապիզոնի հայ առաջնորդին հետ երկան փըսփսուքներով զինքն հրաւիրեր և ազգն ու ժամը հաներ ձեռքը մատներ ու հայ ըրեր է. ան ալ եկեր ժամը նըստեր իշխանութիւն առեր է։ Այս սուտը անկիս եղած է որ ան ատենները որ Ստամբոլ կարծեալ միաբանութեան խօսքերն ու գործքերը կ'ըլլային, հոն տեղի առաջնորդն ես ալ հոս եմ ըսելով եղեր իմաց տուեր է Հ. Մինասին որ միաբանութիւն եղաւ և ես առաջնորդական իշխանութեամբս պիտի այցելութեան գամ ժամին և քեզի, ինչպէս հնուց ի վեր հոն աս սովորութիւնը կայ եղեր. Գէորգ Բորէսի Բաքալեան Ալիքարն ալ ասանկ կը վկայէ 1821ին մայիսի 8ին առ սուրբ Յողովը գրած թուղթին մէջ։ Այն ալ ինչ կրնար ընել ան ատենը հրամարտակաւոր բռնութեան մը դէմ. ժամանակին գէշութեանը համար արտաքին մեծարանքով ընդուներ է զինքը, խոհեմութեամբ փոթորիկը անցընելու, մինչև ստոյգ տեսնէ ան գին ինչ կ'ըլլայ։ Բայց ի թշնամեաց զրպարտեալ՝ վանք կանչուեցաւ, հասաւ

հոն 1819ին հոկտեմբերի 16ին. ուստի անանունին բերած թուականն ալ սխալ է։ Տարի ու կէս հաղիւ կենալէն ետքը, Խրիմ խաւրուեցաւ. Եհասատանի ուղղափառ փոխանորդն շատ պատուեցաւ, Ժողովրդապետ արշիմանդրիտ դրուեցաւ, կայսերէն ալ պատուանշան առաւ։ Այս բաներս անանունին սիրտը խոցեր են. ուստի աս ամէն պատիւը նենգութեամբ և խաբէութեամբ ստացեր է, կը գրէ։ Օրիվ խաբեր է. փոխմասը և կայսրը. չիյտենք աս պատիւը ինչպէս կ'ընդունին անանունէն փոխմասն ալ կայսրն ալ։ Բայց քանզան մեծ յանդգնութիւնը ան է, որ Հ. Մինասին, ինչպէս նաև Հ. Արապիոնին վրայ եղած ամբաստանութիւնները սուտ զրպարտութիւն են ըսելով վճռուած է սուրբ Յողովքէն, 9 յուլիս 1821. (տես Պատգ. էջ 30). աս վճիռէն ետքը անանունը կը համարձակի երկուքն ալ նորէն հերետիկոս զրպարտելու և դատապարտելու։ Որովհետև Հռոմայու հնազանդ ուղղափառ որդիութիւն։ Հ. Արապիոնին վրայ ծաղրական սուտ մ'ալ կ'ըսէ (էջ 115) որ իր կասկածելի հերետիկոսութեանը համար սուրբ Ընտոն վանքը բանտած է, ուրիշ տեղ չի կրնար եղեր կենալ։ Իրաւ պիտի ըլլայ. զի Հ. Արապիոնն ալ կ'ըսէ թէ ինորհակալ եմ, աս հրամանը չիյտէի, զրքէն սորվեցայ։

Բայց ատ անանուն մարդուն, (ներէն մեզի մարդիկ), ատ հրեշին՝ խարդախութիւնն ու անիրաւութիւնը հասկընալու համար ինչ պէտք մեզմէ հեռու և խելքերնէս ալ հեռու տեղեր նայիլ. քիչ մ'ալ աչքով տեսած՝ ձեռքով բռնածնիս նայինք, անով հասկընանք մէկալնոյ ալ նենգութիւնը։

Մխիթարեանները տպէտ ու բոլորովին աղդին անպիտան մարդիկ ըսելէն ետքը, կը պոռչայ (էջ 143), թէ ինչ ըրած ունին գրով մինչև հիմայ աղդին։ Այս ասոր վկայ ձեռք կ'առնէ Սամուէլեան Սուքիաս աբբահօր Quadro ըսուած աղգային գրականութեան խտալերէն համառօտ պատմութիւնը, որ չէ թէ Մխիթարեանցմէ եղած գրքերը համրելու, հապա միայն հին նախնեաց գրականութիւնը հասկըցընելու համար շինուած է. և վերջը մէկ համառօտ վեր ի վերոյ յիշատակութիւն մը կ'ընէ քանի մը Մխիթարեանց աշխատասիրութեան

ցը։ Անանունը սասնց յարգը և օգուտը բնաւ չձանչնալէն ու գրքին խօսքերն ալ ուզածին պէս փոփոխած մէջ բերելով ծաղր ընելէն եաքը, անկէց մինչև աս օրս Մխիթարեանցմէ շինուած կամ թարգմանուած և տպած եղած տեսակ տեսակ գրքերը բոլորովին կը լռէ, մանաւանդ թէ կ'ուրանայ, եղբայրսիրութեան հոգւով՝ որ տգիտութիւնին կամ հերետիկոսութիւնին և անպիտանութիւնին՝ մանաւանդ ինքասակարութիւնին ծածկուի։ Որոնց գլխաւորներուն միայն ցանկը մենք հիմայ հոս շարենք, համբերութեամբ թող կարդայ անանունն ու իրենները, տեսնէն թէ սասնց մէկը տրպած ըլլալուն տէր յիշածներուն մէջը կա՞յ մի։

1. Լոր մեծ բառգիրք հայերէն. 2 հատոր.
2. Ռձեռն բառարան.
3. Բառարան յիտալ.'ի հայ և 'ի տաճիկ ընդարձակ և համառօտ.
4. Երկանութիւն 'ի Ռուս և 'ի Հայ.
5. Երկանութիւն բազմալեզու.
6. Տարերք հայերէն քերականութեան.
7. Երկանութիւն հայերէն'ի պէտս զարգացելոց, մէկ մեծ հատոր.
8. Հնախօսութիւն Հայաստանի. 3 հատ.
9. Աստղագրութիւն հին հայաստանեայց.
10. Աշխարհացոյց տախտակք կամ Ատլաս ընդարձակ հանդերձ աշխարհագրութեամբ.
11. Ուրիշ աշխարհագրութիւն համառօտ 'ի պէտս դպրոցաց.
12. Հատընտիր վարք և պատմութիւն թագաւորաց Օսմանցւոց և վեզիրաց.
13. Օսմանեան պատմութիւն. 2 հատ.
14. Պաղղիացւոց պատմութիւն. 2 հատ.
15. Ռուսաց պատմութիւն.
16. Ընդհանուր պատմութիւն հին և նոր աղգաց վասն դպրոցաց.
17. Լոյն պատմութիւնն, ուրիշ ոճով աւելի ընդարձակ. 5 հատ.
18. Մատենադարան մանկանց. այլ և այլ հատոր.
19. Պարապատում. 8 հատ.

20. ՊատՃէնք նամակաց.
21. Պատմութիւն Հայոց համառօտ.
22. Լոյնը ընդարձակագոյն ուրիշ ոՃով.
23. Սուրբ գրոց պատմութիւն համառօտ.
24. Սրբոյն ( )գոստինոսի յաղագս քաղաքին Աստուծոյ. 2 հատ.
25. Համառօտ երկրաչափութիւն.
26. Անրանկարք և Ընդօրինակութիւն.
27. Հաշուետումար վաՃառականութեան.
28. Լոյնը համառօտ, ուրիշ ոՃով.
29. Աբուբեստգիտութիւն.
30. Բնական օրէնք.
31. Խմաստութիւն մարդկային, բարոյական.
32. Ֆենելոնի դաստիարակութիւն աղջկանց.
33. Լորին, պատմութիւն վարուց փիլիսոփայից.
34. Համառօտ նկարագիր երևելի արանց.
35. Ֆոփրաստոսի նկարագիրք.
36. Պլուտարքոս, վարք երևելի արանց. 6 հատ.
37. Փիլոն եբրայեցի.
38. Ուղևորութիւն կրսերոյն Նաքարսեայ. 6 հատ.
39. Վարք սրբոյ Ներսէսի տաՃիկ բարբառ.
40. Ճանապարհորդութիւն 'ի Եհաստան.
41. Մովսէսի խորենացւոյ պատմութիւն, իտալերէն թարգմանած վասն եւրոպացւոց.
42. Հոմերոսի Իլիական, ոտանաւոր. 2 հատ.
43. ——— Ոդիսական, ոտանաւոր. 2 հատ.
44. Վիրգիլիոսի Էնէական, ոտանաւոր.
45. ——— Աշակականք, ոտանաւոր.
46. Ովատիոսի քերթողական, ոտանաւոր.
47. Միլտոնի դրախտ կորուսեալ.
48. Ֆենելոնի Տելեմաք.
49. Լոյնը, նոր թարգմանութիւն.
50. Կեսնեբի մահ Աբելի.
51. Հոչիոսի քերթածք.
52. Վիտայի քրիստոսական.
53. Մաղթանք չափաւ.
54. Բուրաստանք.
55. Քրիստինէական, քերթուած ոտանաւոր:
56. Գենովափէ, քերթուած ոտանաւոր.

57. Լոր Ճարտասանութիւն մեծ.
58. Ճարտասանութիւն համառօտ.
59. Բռնեն բանաստեղծութիւն և տաղաչափութիւն.
60. Դիցաբանութիւն համառօտ.
61. Սուէի տրամաբանութիւն.
62. Տիւմառսէի տրամաբանութիւն.
63. Կիկերոնի յաղագս պատշաճից.
64. Սենեկայի Ճառք.
65. Ճառք Հ. Ղուկասի Թրեանց.
66. Տաղաւարք կամ Աստուածդիտութիւն.
67. Պօսիւէի Ճառ յընդհանուր պատմ. 2 հատ.
68. Ֆլէօռի կենցաղ խրայելացւոց և քրիստոնէից.
69. Եկեղեցական պատմութիւն մէկ մեծ հատ.
70. Սրբազան պատմութիւն. 2 հատ.
71. Իրաւագիտութիւն. մէկ մեծ հատ.
72. Աղեքսանդրի Թասսոնի ապացոյցք կրօնի և պատասխանատուութիւնք.
73. Ֆլէօռի պատմական քրիստոնէական վարդապետութիւն.
74. Մեծին Գրիգորի պապին կանոն հովուական.
75. Տըլաֆօռի գաղղիացւոյ եղծ աղանդոյն Լուտերի և Կալվինոյ.
76. Պոտրանդ Յիսուսեան քահանայի խրատք ոգեշահք.
77. Հոհենլոհէ քահանայի խրատք հոգեշահք.
78. Տեառն Հ. Գաբրիէլի հոգևոր խորհրդածութիւնք.
79. Բռաջնորդ երկնից.
80. Հատընտիր վարք խիստ ծանօթ սրբոց.
81. Գրուատրուբանի, Բռաջնորդ խղճի երկիւղածաց.
82. Հատընտիր վարք սրբոց կուսանաց արևմտեան եկեղեցւոյ.
83. Հատընտիր վարք սրբոց լատինացւոց եկեղեցւոյն.
84. Բարեխօսութիւն սրբոց.
85. Ջատագովութիւն ուղղափառ հաւատոյ ընդդէմ նորաղանդից.
86. Բպացոյցք կրօնի.

87. Արքայն Աշխնասոսի Լիդուորեայ պատրաստութիւն մահու.
88. Աղօթք ներողութեանց.
89. Հաւաքումն ընտիր քարոզից.
90. Արքաղան Պապին Պիոսի Թ կոնդակ առ Արևելեայս.
91. Պատուիրանագիր Արքեպիսկոպոսին Փարիզու յաղագս սիրելոյ զինակերն.
92. Բազմավէպ օրագիր ինը տարուան, 9 հատոր և կը շարունակուի.

եւ. եւ. եւ.

Արանցմէ զատ, աստուածաշնչին և մեր հին նախնեաց շատ գործոց տպագրութիւն, 35 հատորէն եւեր։

Այս ամենս՝ էտքի քսանրհինգ, քսանրեօթը տարուանս մէջ միայն տպուած են, որոնց և ոչ մէկը կը տեսնէ անանուն սուր աչքը. և կը պռայ ալ անխիղճ և անամօթ, թէ "Հայկաբանութենէ ուրիշ բան մը չիյտեն ատոնք, (ան ալ սանկ կտոր մը բան), և ըրած ալ չունին. ո՞ւր է, եկեղեցական պատմութիւն մը, իրաւագիտութիւն մը հանած ունին աս դարարկապրպ սրիկայ փգէոնները, որ մեծահաց կոչունդներու սեղանները պարպելէն ու մասալ պարմելէն ու աղաարհի խառվելէն ուրիշ բան չիյրեն. (տես էջ 160, 161, 185), որոնց համար գրուած են Յուդա առաքելոյն խօսքերը 12 դուանէն մինչև 19 (էջ 147)։ Բայց դու ընթերցող՝ մի՛ սրդողիր. աչք մը տուր 92 տեսակ վերը շարուած միայն 27 տարուան գրքերուն. աղէկ նայէ 69, 70, 71, 72 թիւերն ալ, եկեղեցական պատմութիւն և իրաւագիտութիւն մը հանե՞ր են թէ չէ։ Անչափ դիւական ատելութիւնը Մխիթարեանց դէմ՝ չէ թողուցեր որ, գրքերնին ձեռք չառներ՝ չի ալ տեսներ նէ, գոնէ օրացուցին սկիզբը կարդար տարուէ տարի եղածները։ Մենք անանունին Մխիթարեանց գրքերուն բոլոր ցանկը խաւրենք որ տեսնէ, ուրիշ հեղ՝ մէկալ խոստացած ցանկալի գրքերուն մէջ՝ սասանկ պզտիկ չիյնայ. բայց կ՚աղաչենք որ ինք ալ իր կողմէն եղած գրքերը բոլոր մեզի խաւրէ, տպիտութիւննիս լուսաւորէ. թէ որ շատ մեծ բեռ է նէ, ծախքը մենք կը քաշենք, քանի մը մեծամեծ ուղտեր կը խաւրենք իրեն։ Բայց աս իր

խոալերէն ամէնիմաստ գիրքը հետ չգնէ, անոր ծանրութիւնը չէն կրնար բառնալ բոլոր Ասիոյ և Աֆրիկէի ուղտերը։

Այրբոր մէկը սանկ յայտնի ամենուն աչքին առջին կեցած բանին մէջ այսպիսի անձուռնի անիրաւութիւն կ'ընէ նէ, մէկալ մեղմէ հեռու՝ մութ և հարիւր՝ հարիւր յիսուն տարի անցած գացած բաներուն մէջ ինչեր չըներ, ու չէ ըրեր ատ անկեղծ պատմիչ եմ տէր պարծեցող՝ կատաղի զրպարտիչը. թող կարդացողը մտածէ, թող սիրտ և ապերախտութիւն հասկընայ։ Բայց չորտմին Մխիթարեանք. սուրբ Աթոռը և ազգը ատանկ կոյր և ապերախտ չէն իրենց. նախանձն ու ատելութիւնը՝ անանունին, սէրն ու խնդութիւնը՝ ազգին։

Կեցիր նայինք, բան մ՚ալ կը պոռայ այդ անանունը (էջ 153). ուր է՝ ֆիզիքայ մը, քիմիքայ մը հանած ունին. չկայ, չկայ։ Կրկէս թէ քիմիքան ալ վարդապետի մը բան գործն էր։ Մոռցեր է որ՝ քիչ մը վերը (էջ 150) Ճարտարապետութեան և գծագրութեան համար ինքն ալ ըսաւ ծաղրաբանելով, թէ ատ սրուեստները քահանայի բան է, կամ պէտք է որ ըրեր է Մխիթարեան ։. Օ աքարիան։ Բայց ինչպէս որ մենք ստոյգ գիտենք, ան ալ ունին, մէկալն ալ ունին, և այլ շատ բաներ ալ ունին շինած վանքը ձեռագիր. շատ բան ալ հանած կ'ըլլային, թէ որ անանունեանց թշնամութեան հալածանքներէն և զիրենք ի զրպարտութեանց պաշտպանելէն հոգի առած և ատեն գտած ըլլային նէ։ Ընոնց բանը՝ Լեմեայ և Օ. Օրաքաբելի տաճարին և Երուսաղեմին շինութեան մարդկանցը կը նմանի. մէկ ձեռքով թշնամեաց հետ կռուիլ, մէկալով Սիոնի դռները կանգնել։

Կը կանչուրտէ դարձեալ քանի մը տեղ, թէ առէք տեսէք աս անանման գիտունները քերականութենէ դատ բան հանած չունին. տասուերկու քերականութիւն՝ վեց բառգիրք հաներ են։ Այս իբրև մեծ նեւտոնեան հաշիւ մը ընելով իր թուաբանութեամբը՝ կը ծանուցանէ իր անբան կարդացողներուն (էջ 152) որ երկու քերականութեան մէկ բառգիրք կ'ելնայ հա։ Գիտենք ալ մենք, որ ան քերականութեանց և բառգրոց մէջ խտա-

լերէնը կայ և գաղղիարէնը մեծ ու պզտիկ, անգղիարէնը, ռուսերէնը։ Դրաւ է որ ամենէն շատ հայերէնն է. բայց եկու տես որ խեղճ ազգատէր Մխիթարեանք այնչափ քերականութիւններով և բառգիրքներով ալ չեն կըրցած ազգատեաց անանուէնն և իր արբանեակներուն իրենց քնիկ ըլլալու և հայրենի՝ հայերէն լեզուն սորվեցընել. մինչև նախագահ եպիսկոպոսապետն իսկ՝ իր քահանայից ժողովին մէջն ալ՝ հարկ է տաձկերէն խօսի տաձկերէն քարոզէ։ Դա է եղեր աղուոր ազգասիրութիւն և ուղղափառութիւն, ելէք լսեցէք ազգք և ազգինք. և իր լեզուն և ազգային բաները՝ հնութիւնները՝ պարծանքները սիրել, փնտռել, գիտնալ և սորվեցընելը՝ հերետիկոսութիւն սիրել և հոն վազել է եղեր. և լատինացիք՝ որ իրենց կռապաշտ Պոմպէյային և Հերկուլանոնին հնութիւնները կը ժողվեն, և Հռոմ՝ որ Պատիկանը անանկներով լեցուցեր է, կռապաշտ են եղեր։ Դա որ անտանելի վտանգաւոր քրէական յանցանք է, ատ ազգասիրական փոյթն ու ջանքը և ուսումնական ընկերութիւն մը ունենալը՝ Հայոց թագաւորութիւն կանգնել՝ ապստամբիլ է եղեր, որ քանի մը հեղ անխիղճ կը կրկնէ՝ այն զահՁի ձեռքով նոյն իսկ Հռոմայու Դրօքականտային առջևի հրապարակը երուելու կրակ ձգող գրուածին մէջ։ Դ՚տով ոչ միայն Մխիթարեանց մուր կը քսէ, այլ և բոլոր Եւրոպայի ազգաց և աղանց, և տերութեան քրէական յանցաւոր կ՚ընէ բոլոր յոյն և հայ ազգերը միանգամայն, որ աս օրուան օրս բոլոր ատանք, մարդ եղօղը և մարդ ըսուիլ ուզողը, նոյն ազգասիրութեան հոգւով և ուսմամբ վառուած են և կ՚աշխատին նոյն իսկ թագաւորական բարձր հրամանաւ և հաձութեամբ։ Դա որ աւելի յիմարական և ինք իրեն դէմ բանն է, Ղամէեան՝. Մ՚ելայելին Հայոց պատմութիւնն ալ ատ թագաւորութեան համար շինուեր է եղեր ութսուն տարի առաջ։ Դա աս ապստամբութեան զրպարտութիւնը ընողը՝ ան մարդն է, որ վերը յառաջաբանութեանը մէջ հիչ մէկ մարդկային ակնածութիւն չունէր և հիչ մէկ երէՒ-ոչ ամենևին. թող իրեն տերութեան դպչող ուրիշ բաներն ալ, որ վարը պիտի ցուցընենք։ Ղէ՛ ալ մտածեր արբեալը՝ և ոչ՚ի գինւոյ, որ կարդացողը մարքին պիտի ըսէ՝ թէ անանկ է նէ՝ որ-

չափ որ աս Մխիթարեանց թագաւորութիւն կանգնելը իրաւ է նէ, հերետիկոսութիւնն ալ այնչափ իրաւ է։

Հոս աղուոր կտոր մըն ալ կայ, մտիկ ըրէ։ Episkopos մը ընդդէմ իր ձանաչմանը՝ դուրսանց միացած իր արքեպիսկոպոսին հետ՝ անոր դէմ կը խօսի։ Ողորմած հոգի Աստուածի եպիսկոպոսը, իր յաւիտենական թեմը երթալէն քիչ առաջ, օր մը Մխիթարեանին մէկուն երեսին մեր առջին ըսաւ որ "Իրելի՝ ես ալ ատենօք տնով տեղով Մխիթարեան որդի էի. բայց ձեր հինեը՝ բարի աստուածարեալ մարդիկ էին, սուրբ և հոգեւոր ուսմանց պարապեալ, (յիշէ հերետիկոսապետ Մխիթարն ու Գնա մեռիր եկու սիրեմը), իսկ դուք ձամբանիդ փոխեցիք. մէկը ֆիզիքայէն ձայն կուտայ, մէկալը քիմիքայէն, միւսն ալ աստղաբաշխութեան է տուեր զինքը,,, և այլն։ Եկու հիմայ աս ալ ջրէն անցուր նայիմ, ինչպէս կ'ըսէ տաձկին առակը. ասիկայ ալ դիր մէկալին քով և տես թէ իրաւ է մի. աչք մը տուր վերի շարած գրքերուն, թիւ, 23, 24, 66, 67, 73—91։

Բայց հոս քիչ մը կեցիր։ Ան օրհնեալ Աստուածին յիսուն յիսունըհինգ տարուան մեռաւ. աս եռքի քսան քսանըհինգ տարուանս մէջ փոխուեր են եղեր Մխիթարեանք, անկէ առաջ անանկ է նէ սուրբ են եղեր և արժանի Աստուածանց հոգևոր հայրութեան՝ հանդերձ հերետիկոս ըլլալովին հերետիկոսապետ Մխիթարէն 'ի վեր, անանունին վերի տուած վճռէն կէսը։ Եւ որպէս թէ քսան՝ քսանըհինգ տարուընէ ի վեր մինչև աս օրս՝ Մխիթարեանց խոստովանող լիբանանցի և քօլէճցի քահանայք և անոնց ֆամիլեաներ չկան. որ մէկը ըսենք որ աչքովնիս տեսեր ենք ու կը տեսնենք։

Աստիկայ դորձքովնէ է. ըսէ հիմայ ինչպէս խօսքովնին ալ իրենց ըսածը իրենց դլուխը կը դառնայ, իրենք իրենց դլուխնին կը ստեն։ Հաւասիկ անանունը Մխիթարեանները հերետիկոս ցուցնելէն և վճռելէն ետև մինչև 233 երեսը, հոն վերջը վերջը կը դառնայ կ'ըսէ որ "Զեզի ինչ անուն տամ. ոչ ուղղափառ էք, ոչ ալ հերձուածող. ոչ ցուրտ էք՝ ոչ ջերմ, հօրը տնէն չելած

քուռ զաւակ էք ,, (էջ 232)։ Իսկ արդ հօրը տունը սուրբ եկեղեցին է, անանկ է նէ իրենց հօրը տան մէջ կը ճանչնաս կոր Մխիթարեանները, ուստի և ինչ անուն վայելեն ալ իրենց պիտի աղեկ գիտնաս. ամա չես ի տար, աշխարհք ամէն վրդ կը պոռայ թէ հիմայ ուրեմն նայինք ո՞վ է հերետիկոսը, կամ գէթ՝ ոչ ուղղափառը և ոչ հերձուածողը, ոչ ջերմը և ոչ ցուրտը, աստուծոյ սուրբ բերանէն փսխուելիքը, որ ոչ ըսածը գիտէ, ոչ ըրածը. հերետիկոս ճանչցածին ու խելքովը ցուցրցածին՝ կը դառնայ ։ կ'ըսէ, և ետևէն հոգւոյն աղօթք կ'ընէ։ Բայց մի զարմանար ընթերցող, Մխիթարեանները մեռնելէն ետև ուղղափառ կ'ըլլան, և յաւիտենական հանգստեան կը հասնին, գուցէ անանունեանց աղօթքովը։

Փառք Աստուծոյ հասանք՝ անանունին ալ Մխիթարեանց ալ յաղթանակին տեղը (էջ 234)։ Մինչև հիմայ կը ըսէինք, անանունին գրքէն ալ ինչուք հոս կը սորվէինք որ Մխիթարեանք հայ են. հիմայ հոս տեղրս երկան երկան մանրամասնաբար կ'ապացուցանէ՝ անանունեան ապացոյցներով, որ յանսենեան են եղեր (Ժանսէնիսթ)։ Պոհութիւն Աստուծոյ, ինչ հերետիկոս ըլլալնին հելէ մէյմը հասկըցանք. խմացանք ալ միանգամայն որ ինչ հերետիկոս ալ որ են նէ, հելէ հայ չեն եղեր. վի յանսենեանը ոչ բնաւ հայ է. ինչ ըլլալը գիտնալ կ'ուզես նէ, Փասքալին գաւառական թղթերը կարդա՝ եթէ հաճիս. դիտաւորութիւն դիր միայն, որ ոչ խնտաս՝ ոչ բարկանաս։

Մխիթարեանը անանունին խելքովը (էջ 233) կամաւ չյայտներ եղեր զինքը՝ ոչ ուղղափառ՝ ոչ հերձուածող՝ որ մէջ տեղը կենայ, երկուքը անխտրութեամբ մէկ ընէ։ ԸսեսՊ անանկ է նէ՝ որ բոլորովին անհաւատ է եղեր։ Ա.յլ մանաւանդ թէ ըսէ, որ խոհեմ մէջ ճամբայ մը կը բռնէ եղեր, ինչպէս առջի ըսածներէս ալ կը հասկըցուէր, ցանկալով ըստ ընդհանրական և առաքելական և նոյն իսկ Հռոմէական եկեղեցւոյ՝ ըլլալ հայազգի՝ Հայկայ որդի՝ ուղղափառ, ոչ թէ Ֆռէնկ կամ՝ տաճիկ ուղղափառ, պահելով իր ազգութիւնը, ծէսը, լեզուն և ամենայն ըստ անաչառ ուղիղ աստուածաբանութեան անվնաս արարողութիւնները՝ անանկ

Հռոմէական մայր եկեղեցւոյ ուղղափառ որդի ըլլալ։ Ս. Մխիթարեանը Հանչցողը՝ սասնկ Հանչցած է, և Հէմ կը խընտայ՝ Հէմ գլուխ կ'երերցընէ անանուն յիմարաբանութեանցը։

Դարձուր հիմայ գրքին մէկալ երեսը (էջ 237), կը տեսնես որ անանունը նոյն հերետիկոս, մանաւանդ թէ քնաւ անհաւատ, Մ՝խիթարեանց համար՝ մեծաւ զղջմամբ և խոստովանութեամբ կը դաւանի որ "Սուրբ Պ աղարու վանքն ալ եղած են ու կան բոլորովին անմեղ հոգիք, հաւատարիմ, անկեղծ և Հշմարիտ ուղղափառք. կան, բայց քիչ են, կ'ըսէ, ու աշխարհքին մէկ անկիւնը գիւղաքաղաք մը ձգուած,,։ Լսող որ նայինք առաջ այն անձինքը աս գիրքը գրողին բարի ըսուիլ յանձ կ'առնէ՞ն մի. նախ չիյտենք որ եթէ Մ՝խիթարեանց բուն իսկ ուխտը՝ կարգը և սահմանադրութիւնը հերետիկոսական և հերետիկոսաց հետ անխտրութիւն ընդունող և սորվեցընող և տարածելու կրօնք է նէ, և ամէն անձինքը անանկ են նէ, ինչպէս որ ցուցցայի կը պոռայ անանունը, զիարդ կարելի է որ ան ուխտին մէջ եղողը և մնացողը բարի հոգի և անկեղծ ուղղափառ ըլլայ։ Աս ալ յայտնի հակասութիւն չէ՞, որ անանունին կրնք մթացած աչքը միայն չիտեսներ։ Կրկրորդ չիյտենք որ գեղն է ան աշխարհքին մէկ անկիւնը, որ ինք տեսեր է, թէպէտ և աշխարհք շատ քալեր եմ կ'ըսէ. արդեօք libera et regia Civitas ազատ և թագաւորական քաղաք Պաշիալոմն է, ուր յօժարակամ գացեր է գացողը, և ոչ թէ նետուեր։

Բայց այսչափ մեծ գթութենէ ու բարի վկայութենէ հետքն ալ, բոլոր Մ՝խիթարեանց ջնջուն կամ մշտնջենաւոր աքսորն որ կը սպառնայ, այն բարի հոգիներն ու ան գեղէն եկած Հշմարիտ ուղղափառներն ալ, որ իր ըսածին կէօրէ (էջ 239) գաղտուկ բաներ խոստովանելով իրեն՝ դառնապէս ողբացեր են իրենց եղբարցը չիյտեմ որ յանցանքները, և անով թերևս դարձի են եկեր, ասոնք ալ՝ թէպէտ և կռնակնին ծեծեր է և Եբոնեէս կը կոչէ իբրև վասն արդարութեան հալածեալս, և սակայն բոլորը մէկ տեղ ասոնց մեկը 'ե Բայ Հանեբ (էջ 241)՝ կը ջնջէ, կ'աքսորէ, վանքերը կը հալածէ կը բանտէ մէկալ անօրինաց հետ՝ իր սուրբ և ար-

դար դատաստանովը, կամ թէ Թերևս աստուծոյ գաղ-
տնի դատաստանովը . . . . . :

Ա. Հերիք է, այսչափս բաւ ըլլայ. մենք քանի մը
հակասութիւնը և ստութիւնը միայն խոստացանք
ցուցընելու, աս քանի հատ եղաւ. Ճշմարտութեան և
արդարութեան ուժը մեզ յափշտակեց տարաւ: Մենք
ձանձրացանք գրելէն անանկ անխելք գրուածի մը դէմ,
Թերևս կարդացողն ալ լսելէն: Բայց երկայնամիտն
աստուած որ ատոնք վերէն լսեր, տեսեր ու համբերեր
է նէ, մենք ալ քիչ մը համբերենք. քիչ մը մէկալ
կողմէն ալ լսել սորվինք: Մէյմը Ռուբիկոնն անց-
ցանք, առջի նարտը նետուեցաւ. կեղծաւոր Պոմպէո-
սին դէմ քիչ մ'ալ աղէկ լսուի Կեսարու զէնքին ձայնը
մինչև ի Փարսալիա:

Մինասեան Հ. Պետրոսը և իր գործքը, որ ծանօթ
է ամենուն, նկարագրած է (էջ 167) իբրև մէկ դժո-
խային հրէշ մը՝ չար և կատաղի քան զԱ.րիոս, քան
զՎիկլէփ, քան զՅովհաննէս Հ.ուս, քան զ.ուԹեր,
զՕ.ուինգլիոս, զՎալվին, զՎ.ուԹէռ: Բայց աղքն
ալ տեսաւ այն խեղճ մարդը, տեսաւ ալ Թէ ինչ վախ
նալու մարդ էր. Եռքը ինքիրեն անձամբ Հ.ոմ ալ գը-
նաց նստաւ մէկ երկու տարի, ամենուն աչքին առջին
ու ձեռքին տակ, ուր է հիմայ նաև մոլորեցուցիչ Դա-
զրՁեան Հ. Սատեփանն ալ. հոն ալ տեսան Ճանչցան
ան զարհուրելի Ռ.ուԹերը և չքանտեցին ՍանԹօֆի-
ցը: Կարծենք, անոր համար՝ որ զինքը տեսնելէն ի
զատ, սուրբ եկեղեցւոյ դատաւորաց մեջին անանունին
գրածներէն աւելի այժ և աղդեցութիւն ունեցեր է
Դ.երասայծաւ Իլլրոյ Ա.ռաքելական Ա.իքարին Թուղ-
Թին որ գրեր էր ան ատենները Արքաղանին, Թէ Մի
նասեան Հ. Պետրոսը ամենևին մէկ վտանգաւոր
մարդ մը չէ և ոչ վնասակար. և մենք տեսեր ու կար-
դացեր ենք ատ արդարակորով և քաջ և արԹուն Հ.ո-
վուին գիրը. որուն մէջն աս ալ կայ, որ ՄխիԹա-
րեանց քաշած հալածանքը՝ բոլոր նախանձու քան է և
ոչ այլ ինչ. աս բանս գրեր են չէ Թէ միայն իրմէն
առջի Ա.ռաքելական Ա.իքարներն ալ, հապա Հ.ռոմայի
մէջ քաջ Ա.ստուածաբաններ ալ ու շատ սուրբ Հողը-
վոց խորհրդականներ. անոնք հանդամանօքը կը գրու-

ցեն՝ որ մեզ չիվայլեր. զի ոչ Մ՝խիթարեանց գովեստը կը գրենք կոր, այլ ընդդէմ զրպարտութեանց ջատագովութիւնը։ Լաքը անանունը Գերապայծառ Լը-ռոն այնպիսի ճշմարտասէր և արդարադատ մարդը՝ Մ՝խիթարեանց թշնամի կը զրպարտէ (էջ 214)։

Հ. Պետրոսին վրայ զուրցուած էն մեծ սուտը ան է, որ Համազգեաց Ինկերութիւնը ինք հնարեց, ինք ժողվեց հանեց կ՝ըսէ. որ ամենեին սուտ է, այլ աղ-գային երիտասարդք ժողովեցան ջրոս դին առին գիշեր ցորեկ, և ընկերութեան կանոնադրութիւն մը գրել տուին. ան ալ առ հարկի (բայց առանց իր մեծերուն մէկուն գիտութեան), յանձն առաւ որ չըլլայ թէ ինք-իրենմնուն ալ գէշագոյն բան մը ընեն. և անհոգաբար ձգեց գնաց Տրապիզն իր բանին, որպէս յայտ է ամե-նուն և անանունն ալ կը վկայէ (էջ 169)։ Լաղածն աս է, և աս բանս շատ անգամ վկայեցին բողոքեցին աղգին մէջ Մ՝խիթարեանք՝ Հ. Պետրոսին կրօնակից-ները, թէ մենք չենք այն ընկերութիւնը հանողը և ոչ Հ. Պետրոսը. անանունը որ ամէն բան գիտէ՝ աս չուզեր գիտնալ, մանաւանդ թէ Լ.բբահօրը ընկերնե-րունմէն հնորհաւորութեան թղթին 1847ին յունվարի մէջ գրած պատասխանէն, որ ըստ օրինի եպիսկոպոսաց օրհնութեամբ կը լինար, տգիտաբար ըսենք թէ չա-րութեամբ՝ պատճառանք առնելով, որպէս թէ ընկե-րութիւնը օրհներ է, աւելի կը զրպարտէ գրքին մէջ (էջ 191)։

Լոյն ճշմարտախօս անանունը (էջ 172) կ՝ըսէ որ բոլոր Տրապիզնի ժողովուրդը գայթակղեր է եղեր Հ. Պետրոսին վրայ. և սակայն ամէնքը գիտեն, թէ հարկէ և անանունն ալ, որ նոյն ժողովուրդը բարի վկայութիւն գրեցին անոր վրայ Հռոմ, նորէն գրեցին զինքը ուղեցին. նոյնպէս գրեցին ի Պոլիս ալ և Ֆրանսըզի դեսպանին ալ աղերսագիր ըրին՝ որ զան կ՝ուղենք, կամ թէ չէ՝ մէկ ուրիշ Մ՝խիթարեան մը, որ Հռոմայու հաճութեամբ մեզի համար եկեր է Պատմիոլ և չեն թողուր որ գայ։ Լու իրաւ էր գրած-նին։ Տրապիզնի ժողովուրդը յիրաւի գայթակղած զանգատ մը գրեցին Հռոմ, բայց ոչ Հ. Պետրոսին վրայ, հապա անանունը գիտէ թերևս որուն վրայ։

Տրապիզոնի նոր շինուած Մխիթարեան դպրոցը՝ ան-կատար՝ անշահ՝ անպիտան՝ տգեղ և աշխարհ.քիս էն գեշ ախոռէն ալ գեշ շինք մըն է եղեր կ'ըսե (էջ 173)։ Այս սակայն հիմայ, երբեք տարի Մխիթարեաններն ալ՝ քաղքացին ալ անիրաւաբար զրկելէն ետև, մեծագոյն անիրաւութեամբ կը մերեցնայեն կոր ան դպրոցը յա-փշտակելու, և տեղացիին բալևիքները կը փնտռեն մեզի պիտի գայ, տեղը մեզի պէտք է, տէրը մենք ենք, Եպիսկոպոսարան պիտի ընենք ըսելով։ Ցիյտենք թէ աշխարքիս էն գեշ ախոռէն ալ գեշ տեղին մէջ՝ գրաստ ալ վար ինչ բան պիտի ընակեցընեն։

Այն երեսին մէջ կ'ըսէ՝ որ Համազգեաց ընկերութեան կնիքը Գ. Հասունին որ տարեր են նէ, վրան գրած է եղեր "Համազգեաց ընկերութիւն հասարակաց 1846"։ Որուն համար կը կասցի կը պուռչայ որ ոմ է հաստատեր. բայց կը տգիտանայ հոս ալ հայու բառին զօրութիւնը, որ ընկերութիւն հաստատել ըսելը՝ ոչ է ըսել confermare, ինչպէս կը թարգմանէ տգիտաբար ըսեմ, որպէս զի չըսեմ չարութեամբ, հապա՝ stabilire, costituire ըսել է։ Հայերէնի տգիտութիւնէն շատ անգամ ուրացեր են անանունեանք, բայց միշտ ալ բերաններն բացածնուն պէս արդեամբք ցուցցեր և հաստատեր են։

Համազգեաց ընկերութեան համար Լամին Էֆէնտիին առջին եղած ազգային ժողովին պատմութիւնը (էջ 175) խիստ շատ խարդախեալ է։ Հայոցմէ մարդ ընդունելու կտորին քննութեան ատենը՝ Պ. Կարպիսը անանկ խենթ խօսք ըսած չէ, որ երկու ազգը կամ երկեղեցին միացընել է մեր միտքը. հապա, աս մէկ աշխարհական և ուսումնական ընկերութիւն մըն է, հոս հաւատքի զանազանութիւն չիրնտռուիր, այլ սէր խաղաղութիւն և ազգի օգուտ, ինչպէս ասանկ շատ ընկերութիւններ կան Եւրոպա։ Ի՞նչ զարմանք որ աս խօսքէն անանկ բան հանէ անանունը, որ Վ Էնեատիկու ոսկիէն կապար կը հանէ։ Ընելի թէ չէ՝ խորհրդին ինի, Լամին Էֆէնտին իր կարծիքը ըսեր է, որ փոլիթիքա-պէս աղէկ չէ ձեզի առնելը. զի դուք քիչուոր՝ անանք շատուոր, վաղը մէկալօր բոլոր հայով կը լեցուի, հայու ընկերութիւն կը դառնայ։ Թէպէտ աս բանիս դէմն

առնելու Ընկերութիւնը քանի մը կանոն գրեր էր ալ նէ, ոչ ոք ան խօսքին դէմ կեցաւ, և Մխիթարեանց մէջ ժողովը գտնուողներն ալ միաբան ամէնքը մէկ բերան մնասնաւոր ազգի նախանձով մը հաւանութիւն տուին։ Այս մէկ երկու խնդիր ալ որոշուելէն ետև, ինքն իսկ Գերպ. Հասունը ընդունեց ընկերութիւնը և Պահպանիչով ալ օրհնեց ժողովը։ Ապանկ հրապարակաւ եղած ատենական քննութեան վրայ ալ սուտ կը խօսուի եղեր. անանունը կը խօսի, և ծաղրական զրպարտութեամբ կը լեցնէ պատմութիւնը. գլխին մէջ դնելով որ իրեն դէմ վկայող ականատես և ականջալուր վկայք չկան. բայց բոլոր հոն ժողոված ազգը վկայ է, որ ան գրած մասալներուն հիչ մէկը չեղաւ և չիլսուեցաւ ան ատենը ազգին մէջ։ Ի՞նչափ յայտնի սուտ է որ, ինքն ալ՝ հեղեր ինչ է նէ՝ կտոր մը խիզ՝ ըրեր է, ու կ'ըսէ թէ "Մարդ պիտի չիհաւատար գրածիս՝ թէ որ Պ. Կարպիսը չի մասներ գիրենք ..., իր շինծու պատմութեանը կէօրէ, որ հիմայ վերը սուտ ցուցցինք։

Գերպ. Հասունը շատ հեղ ժողով կոչեր է կ'ըսէ (էջ 178) ամէն գլխերը, Մխիթարեաններն ալ մէկ տեղ ատ ընկերութեան բանը քննելու։ Այսքը կ'աւելցնէ՝ չէ թէ անոնց կարծիքը կամ խորհուրդը լսելու համար, հապա ինչ բանի... միայն Մխիթարեանները փորձելու համար և անոնց բերնովը դատապարտելու համար ընկերութիւնը. անոր համար ինչ զարմանք որ անանուն մը հիմայ ինչ որ կ'ուզէ անոնց բերանը դնէ։ Մխիթարեանք չիյտեն ամենևին որ ատ ընկերութեան բանին համար Հռոմն ժողովք կանչուած ըլլան. թէպէտ և շատ կը փափագէին որ գէթ մէկ հեղ մը ամէնը մէկէն կանչուէին ու հարցուէին, ինչպէս որ բնական էր, թէ դուք էք մի ատ ընկերութեանը հիմնող, պաշտպան և առաջ տանող. որով ամէն բանին շիտակը իմացուեր և ըստ այնմ Հարը փնտրռուելով բանները այնչափ չի զայրանային։ Ուստի սուտ է բոլորովին անանունին ըսածները և սուտին սուտ ետևէն եւելցուցածը թէ Մխիթարեանք հոն ան ժողովներուն մէջ դատապարտեր են եղեր Համազգեաց ընկերութիւնը իբրև հակառակ ուղղափառութեան, և ետքը ելեր կենկ զայն առաջ տարեր են։ Մխիթարեանք ուղղափառութեան դէմ բան

մը չտեսան ընկերութեան կանոններուն մէջ որ համար-ձակէին անոր համար ձայն հանել. հաներ են ձայն շատ անգամ, ոչ հաւատքի կողմանէ, այլ ուրիշ դիտցէն չհաւնելու, տեղն որ եկեր է զուրցելով. բայց ոչ յատուկ ժողովներու մէջ ուր ոչ երբեք կանչուեր են։ Այս-սուտ զրպարտութիւն է դարձեալ ըսելն որ չեն դադրեր նորէն զայն պաշտպանելէն։ Այս մարդը կ'ուզէ կոր Մխիթարեանները չէ թէ հերետիկոս ցուցընել, այլ խենթ. մանաւանդ թէ կը փնտռէ իր քերականութեանցը մէջ մէկ նոր սաստիկ գերադրական մը՝ որ խիստ գերադրապէս խենթ ըսէ անոնց, բայց մենք հիմայ իրեն սորվեցընենք մէկ ամենաւելն չլսած՝ խելքէն մաքէն ալ չանցած գերադրական մը, և ասչափ մինչև հիմայ ցուցմունքներնէնս ետքը իրաւամբք ըսենք որ ինքն է արշիամենագերսուտիսսիմոթաթոս։

Այս փառաւոր նոր գերադրականը հաստատելու համար սուտ մին ալ կը զրուցէ (էջ 181), որ Մխիթարեանք ան ատենները Հայոց Պատրիարքէն դաւանութիւն մը ուզեր են եղեր՝ որ Հռոմ խաւրեն, և անով իրենց հայասիրութիւնը արդարացընեն, բայց չեն կրցեր եղեր առնուլ։ Այսանկ սուտ տէյմէ երես չիկրնար զուրցել, որ ատենին մարդիկը դեռ ողջ կեցեր են. և Հայք իրենց ազգով և պատրիարքարանով և բոլոր Կաթոլիկ ժողովուրդն ալ մէկ տեղ վկայ են սուտութեանը. ոչ մէկը գիտէ, ոչ լսեր, ոչ տեսեր է ասանկ անձոռնի խենթ բան։ Աստի հարկ է որ ըսենք թէ անանունը ոչ միայն նոր գերադրաբար սուտ է և երազատես, այլ և (ուրիշ բացատրիչ բառ չեմ գտներ), այլ և արշիամենագերխենթիսսիմոթաթոս։

Այնաւ մեր միտքը ընկերութեան կանոններուն ամէն մէկ բացատրութիւնը կամ բառը արդարացընել չէ, բայց սրտերնիս կը նեղանայ որ անանունը հաւկթին մէջն ալ մազ կը փնտռէ, ու չի հասկնալով կամ չարութեամբ՝ կը սկսի (էջ 182) զրպարտել՝ ընկերութեանը հաւատքին համար գրուած կանոնին աս բառերը "Հայաստանեայց Եկեղեցւոյ Կաթողիկէ Հռոմէական ուղղափառ վարդապետութիւնը", որ ողջամիտ և արդար մարդ մը ուրիշ բան չի կրնար հասկընալ, բայց եթէ այն Հռոմէական և ընդհանրական եկեղեցւոյ ուղիղ

վարդապետութիւնը, որ Լուսաւորչէն 'ի վեր Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղադաւան և ընդունելի սուրբ վարդապետաց և Հայրապետաց և ազգին ողջամիտ հաւատացելոց մասին մէջ պահուած և մինչև ի մեզ եկած է ուղղափառութիւնին, հանդերձ ազգային ծէսերով և արարողութիւններով։ Կանոնի մը համաձայնութիւն ան չորս հինգ բառին շարքին մէջը՝ ասկէ ուրիշ բան չի հասկնար անչարամիտ հայագէտ մարդ մը։ Եւ ուղղափառ հայը՝ յետ Հռոմայ սուրբ Գահին՝ իր ազգային եկեղեցւոյն գլուխ կը ճանչնայ սուրբ Լուսաւորիչ հայրը, ու չիկրնար մոռնալ ոչ զան և ոչ ազգութիւնը։

Ընկերութեան ան կանոնն որ կ'ըսէ, եկեղեցական մարդ չէ թէ ընկերութեան մէջ չընդունելուն, հապա պաշտօնի չդնելուն պատճառն ան է որ պատիւնին պահուի. չըլլայ թէ ընտրութեան պատճառաւ վրանին խօսուելով և կամ վէճի տաքութեան մէջ՝ անվայելբան մը ըլլայ. անանունը յամենայնի գէշ կարծիք երթալով՝ անանկ կը հասկնայ (էջ 184), որ իրենք եկեղեցականքը պատիւնուն դէմ բան չընեն, և կը սկսի հայհոյել։ Ամենևին ան չէ կանոնին ըսածը և ոչ ոք անանկ հասկցած է կամ կրնայ հասկնալ, այլ թէ աշխարհական երիտասարդք տաքութեամբ՝ եկեղեցականաց պատուոյն չըլլայ որ դոյչին։ Եւ դժոխային կատաղութեամբ կը յարձակի Հ. Պետրոսին դէմ, և իր բերնին միայն վայել նախատինքներ կը փսխէ, և անկեց՝ բոլոր Մխիթարեանց վրայ, որով կարդացողին աղէկ իրաւունք մը կու տայ ըսելու որ ուրեմն ատ կանոնը դնողը շատ աղէկ իրաւունքով դրեր է տեսի։ Մ՝ենք գիտէինք որ անանունն ու անանունեանք գրաքաւ հայերէն միայն չիյտեն. ասով հասկցուեցաւ որ աշխարհաբառն ալ չիյտեն եղեր, որով կանոնները գրուած են։ Եւ աս կերպով հայհոյիչ և յիշոցնատու փսխնդուք՝ մեխանայի գինովի մը պէս թափելէն ետքը, ամէնչնար ու ես պատմիչ միայն եմ, կ'ըսէ, խորհուրդ կամ խրատ տալ ինձ չվայլեր։ Լսեն աշխարհքին պատմիչներն ու սորվին, աղէկ՝ կամ ըստ իւր ըսելուն՝ անկեղծ և պարզ պատմութիւն գրելը. խրատ կամ խորհուրդ տալ չվայլեր հա՛, աղէկ քիւֆիւր ընել կը վայլէ. մանաւանդ

գրողն ինչպիսի մարդ ըլլալը մոռցուի նէ, գայթակղութեան ծայրն է։

Մխիթարեանց շատը, կ'ըսէ (էջ 186), ուսմամբ յոգնած երևնալու համար և մեծ գիտնական, ակնոցով ժուռ կու գան։ Բրշիամենագերգերաղրապէս սուտ. աւօրուան օրս տասուիրեք հոգի Մխիթարեան կայ 'ի Պոլիս, մէկը միայն հիւանդոտ և ցաւագար՝ ակնոցով տեսեր ենք երբեմն. իսկ անանունեանցմէ խիստ շատը կայ ակնոցով պտրտող ընդ ծով և ընդ ցամաք և ընդ պատուհանս. մէկն ալ աս գիրքը անանունին հետ շինելու գրելու օգնականներէն մէկն է. բայց ակնոցովն ալ չէ տեսեր գրած հակասութիւնները։

Հոս է Ճառիթըլ սուտ մէն ալ (էջ 193)։ Մխիթարեանք Պոլսի եպիսկոպոսութեան կը ցանկան եղեր որ ազգը Հայ ընեն. և վեց եպիսկոպոսին մէկը իրենցմէ ջրբ ըլալուն՝ նեղացեր և Հռովմայու նախատինքներ խօսեր են, և ջանացեր են որ արգիլեն եպիսկոպոսաց ձեռնադրութիւնը և ետքն ալ իրենց թեմն երթալը։ Բրշիամենա խենթ սուտիսսիմթաթոս. Մխիթարեանք դեռ այնչափ չեն խենթեցեր որ նախագահութեան և կամ ատանկ եպիսկոպոսութիւններու ցանկան. և շատ անգամ ըսեր են ու կ'ըսեն, որ խենթ չենք որ մեզմէ մէկուն եպիսկոպոսութիւնը ուզենք, զի ատ բանդ մեր ընկերութեանը փնաս է և անձ մը մեզմէ կորսնցընել է. և Գէր. Հասունեանին զիրենք բոլորովին դուրս հանելը, իրենց երախտիք է և շնորհակալ կ'ըլլան։ Բսկից հասկցիր է. տեսի խենթ սուտն ալ, որ իրենց իրաւունք է եղեր ատ եպիսկոպոսութիւնը, և Հռոմ զիրենք կը զրկէ տէր գանգրտեր են եղեր. քաւ լեցի, բերնեբերնուն չէ ելած, վասն զի մոքերնուն ալ չէ անցած. ազգին մէջը մէկը կայ նէ ատ բանդ լսող, թող ելլէ վկայէ։ Բայց անանունին սրտագէտ ըլլալը՝ նոր չենք սորվիր կոր։ Բմենայն ոք յորոց կրէ՝ 'ի նոյն և զայլս կարծէ. կամ տաճկի առակին պէս, Էլէ նասըլ ղանն էռէրսէն, ֆէնոտէն կէպէ։ Գանգրտողներ եղեր են իրաւ՝ բայց ոչ հոս, այլ ուրիշ տեղ. թէ ինչու աշխարհական գլերէն միայն կ'առաջարկուին կոր մեզի եպիսկոպոսացուները, կրօնաւորներէն հիչ մէկն ալ չիկայ մի. ան ատենը թէ որ ումանց անցյատ և անհաւատալի էր պատճառը նէ, հիմայ կարծեմ որ չի

գիտցող մարդ չկայ՝ լսելէն ետև թէ անանունին աղուոր գիրքին վերնագիրը որմնց ուղղեալ է։ Որչափ որ իրաւ է եպիսկոպոսութեան բաղձանքին ու տառտաքնին, այնչափ ալ իրաւ է ժողովուրդը ոտք հանելէն, խափանել ուզելէն, որ ատ բաներէն՝ Մխիթարեանցմէ չորս հինգ հոգի քշելէն ետքը եղան, և Մխիթարեանք ամենայն լռութեամբ յանձն առնելէն ետև՝ ան բաներն որ կ'ըլլային, սասանեալ ծակերը մտած՝ գէշ կ'ընէք կոր կը պոռային ժողովրդեան, և աղօթքէ ուրիշ բան չէր ի դար ձեռքերնուն որ ընէին։

Հայ մեռած Պալեան Յարութիւն պատանւոյն Փարիզ եղած թաղումը՝ Մխիթարեանք ըրեր են եղեր (էջ 199—203)։ Բայց ինքն ալ բերնովը կ'ըսէ, որ Մասիս լրագրէն կ'առնէ ու կը գիտնայ կոր ատ բանս։ Իսկ արդ Մասիսը (23 փետր. 1852) յայտնապէս կ'ըսէ որ սուրբ Զմբրոսիոսի եկեղեցւոյն աւագերէցը չուզեց թաղել, թէպետ և Պալեանը իր հոգևոր խորհուրդները ըստ Հռովմէական եկեղեցւոյ դաւանութեան ընդուներ էր, և ատ բանիս դէմ չի գար կ'ըսէ Հայաստանեայց եկեղեցին. և համբաւն էր թէ Փարիզ Սէն Սիւլբիս եկեղեցւոյ մէջ արքեպիսկոպոսէն Բուռաթ և խոստովանահայր դրուած և ճանչցուած Լատարաձեան Կաթոլիկ Պրիդոր վարդապետին կը խոստովանի եղեր Պալեանը. անանկ է նէ Մխիթարեանք թաղեր են ալ նէ, Կաթոլիկ թաղեր են, և հարկաւ արքեպիսկոպոսին մանաւոր հրամանաւը թաղած պիտոր ըլլան. զի իրենք ժողովրդապետ չեն հոն։ Իսկ լատին աւագերէցը ինչու չէ թաղեր նէ, ինք գիտէ. Մասիսը գաղղիական լրագրէն առնելով ան մարդուն քիչ մը պինդպլխութիւնը կը դնէ պատճառ. մենք ըսենք քիչ մը խղճահարութիւնը։ Բայց եկու տես որ Մխիթարեանց թաղելը բոլորովին սխալ բան է. և կարելի բան ալ չէ որ ըլլայ, ինչպէս զրպարտիչ անանունն ալ կը վկայէ, որ ատ բանդ ծխատիրոջ իրաւունքը յափշտակել է, և ի հարկէ կ'ամբաստաներ անի զՄխիթարեանները արքեպիսկոպոսին, և ոչ ոք բարով եկաք կ'ըսէր անոնց. ուստի իր խելքն ալ չի հասնիր թէ ինչպէս եղած կ'ըլլայ ատ բանդ, և ինչպէս լուռ կեցուեր է. բայց Մխիթարեանց դէմ է, բաւական է, բարակ փնտռել պէտք չէ։ Անանկ է նէ, թող

ըսէ որ ստոյգը սորվի։ Մեռելը վերջապէս քաղաքացին վերուցեր է, չէյտենք եկեղեցականօրէն թէ քաղաքականօրէն, և Մխիթարեանցմէ երկուքը դպրոցին տղաքը իբրև հայազգի և մեր տերութեանը հպատակի՝ ետևէն գացեր են ուրիշ ժողովրդեան հետ առանց եկեղեցական մէկ պզտի նշանի մէն ալ՝ մինչև ի գերեզմնատունը, և հոն աղաչուելով հանգուցելոյն բարեկամներէն և ժողովուրդէն՝ Մխիթարեանցմէ մէկը աղօթք մը և կոգաց մը ըսեր է վախճանելոյն վրայ։ Աղաղը աս է. երկան աշխատանք չուզեր հերքելու անանկ անհիմն բանը՝ որ գրողին խելքն ալ չէ հասեր կարելութեանը. և թէ ինչպէս չեն արգելուեր արքեպիսկոպոսէն, սակայն դարձեալ գրեր է։ Անանունին խօսքերէն կ'երևի որ Փարիզու արքեպիսկոպոսին հետ ալ օխ մը ունի, թէ ինչու Մխիթարեանց հետ այնչափ բարեկամ է, կը սիրէ զանոնք ու կը պաշտպանէ, և իրեն չհարցներ թէ ինչ համարում, ինչ կարծիք ունենալու է վրանին. բայց հիմա հարկաւ ան գրքէն օրինակ մէն ալ իրեն խաւրած է, որով ամէն բան ինչպէս որ պէտք է իմանայ արքեպիսկոպոսը, և ըստ այնմ աւելի յարգէ զիրենք։

Օրպարտութեան վրայ չի խնտացուիր տէր դիտէնք, բայց աս գիրքը սուտ հանեց աս գիտութիւնները, զանազան խնտալու սուտերով, որոնց մէկն ալ Խրիմու Մխիթարեանց վրայ շինածն է (էջ 203). որպէս թէ հոն ալ՝ ազգը գայթակղեր է եղեր և Մխիթարեան անուն չուզեր եղեր ըսել, և 1842ին՝ տեղերնին ուրիշ քահանայ գնել կ'ուզուի եղեր, և ան պատճառաւ անկից առեր քալեր են եղեր Մխիթարեանք։ Այս տասը տարուան բաներէդ հիչ մէկը խապար չունի, ոչ ան տեղի, ոչ աս տեղի Մխիթարեանք, և ոչ երկու ժողովուրդը. աշխարհքիս երեսը ատ բանիդ ձայնը չկայ։ Բայց մենք տգէտքս չէյտենք որ մէկ ուրիշ քան զայս աքանչելի և խմաստնագոյն աշխարհք մ'ալ կայ, անանունին մեծ գլուխը, ատ լուրերը ան տեղի հովերն ու լրագիրները բերեր են, կամ թէ իր ցանկութիւնը և կամքը գործ կատարեալ կարծեր է։

Վրաբէլեթթի լատին քահանային վրայ գրածները (էջ 204—211), և ուրիշ քանի մը տեղ ալ աս դիս ան դին, չէյտենք որ իրաւ են մի, վասն զի գործքերը

քովերնիս չունինք որ նայինք։ Անանունին մէկալ զուրցածներէն և Դաբելլեթթին Մխիթարեանց բարեկամ ըլլալէն կը հասկընանք որ այլ ընդ այլոց բան կամ զուտ զրպարտութիւն պիտի ըլլայ։ Նա ատ ինքնագլուխ և հայագէտ մարդուն գէշ աղէկ գրածը, որ անանուն տպուած չէն, այլ իւր անունովը, և հեղինակը մէյմը այս մէյմը ոչ տէր գիր տալով քնաւ չէ ուրացեր իր գործքը, և ինքը տղայ մը չէ որ Մխիթարեանց խօսքին նայի, այլ շատ տեղ անոնց դէմ ալ գրեր է, ինչ իրաւունքով Մխիթարեանց կ'ընծայուի, և ասոնք պիտի ըլլան երաշխաւոր պատասխանատու, չիյտենք որ աշխարհքին, որ կրօնքին օրէնքն է ատ։ Իսկ զանի արդարացնել և իր բերնէն անանունին պատասխան գրել՝ մեր բանը չէ, մեզի կարօտ ալ չէ ինքը, որ կը լսենք թէ Նուրոպայի՝ մանաւանդ Իտալիայի մէջ ծանուցեալ գիտնական աստուածաբան և քարոզիչ մարդ է։ Նա անոր անանունին հայհոյած գրքերը՝ խիստ շատ տարի է որ տպուեր են Ֆիօրէնցա, և բոլոր Նուրոպա և ի Հռոմ ևս տարածուած են։ Ինչ զարմանք բան՝ որ Ֆիօրէնցայի պէս ուղղափառ քաղքին գրոց խիստ քննութեան ատեանէն անցնի՝ թող արուի տպելու անանկ սոսկալի վնասակար ընդդէմ ուղղափառութեան բան, և Հռոմ ալ արգելած չըլլայ, և ոչ մէկը մինչև հիմայ դէմը գրած չըլլայ, և գայ գայ անանունին մեայ ատ նախանձայուզութիւնը։ Ո՞ւր թողունք որ Դաբելլեթթին անունք տպելէն ետև՝ Հռոմ ալ գնայ, և Պիոս Թ. Պապին հետ ալ տեսնուեցաւ և սիրով ընդունելութիւն գտաւ։ և Սրբազան Պապը զան տեսածին պէս՝ ուրիշ բան չտիւշեց, բայց միայն իր պապ ըլլալուն գուշակութիւնը, որ շատ տարի առաջ ըրեր էր իրեն Դաբելլեթթին, իր տպած գրքի մը մէջ։ Բանկ մարդը շատ բան ունենալու է անանունեանց դէմ, ինչպէս ինքն ալ կը զրուցէ իր նոր կոխած տետրակին 14 երեսը, որոնք մեծ պարծանք կրնան ընել իրենց։ Բայց մենք հոս ալ դարձեալ անանունին (էջ 11) տուած խրատը պահելով անանկ քանդերը չենք ուզեր խառնել որ հոտը չելլայ։ Իսկ ան որ էտքը առանց խպնելու կ'ըսէ Դաբելլեթթին համար, որ 609 էջէն մինչև 615 ըսածները և պատմածները՝ բոլորն ալ սուտ են, անվաւեր, երազ և Մխիթարեանց

կեղծիք, նախատինք, թշնամանք, քահանայի անվայ-
ել,, . և (էջ 218), Մխիթարեանց ջատագովու-
թեան համար կ'ըսէ "Խարդախ, ուղածը լաւած, քէ-
ֆինէ մեկնած,,, և այն. աս տողերովն ինք իր գրը-
ւածը ձիշտ կը նկարէ, ինչպէս հինգ քիչ մը վարը պիտի
տեսնենք, երկու բառէն ի զատ, որոնց տեղը՝ անանու-
նեանք և Տօն Կասպառօ դնելու է։

Նմանապէս Սեղբոսեան մարգէղին գիրքն ալ որ քանի
մը կը յիշէ, ան ալ բնաւ Մխիթարեանց վերաբերեալ
բան չէ. անոր եռեւէն ատեն մը Պակինանթի ըսուած
Տէր Գրիգոր եպիսկոպոսն ալ շատ ինկեր է Հռոմ,
Գրոբականտային գլուխը շատ ցաւցուցեր է, բայց
բան մը չէ վաստրկած, ուզածը չէ յաջողած։ Ընոր գրը-
գը, ինք չիյտէ նէ՝ սորվի, Յիսուսեան Մարինովիչ աս-
տուածաբան վարդապետն է, անոր դէմ մարդ կ'ուզէ աշ-
խարհք, չէ թէ անանուն մը։ Այս լեր ենք որ քանի մը
հոգի անոր դէմ գրեր են, անանունէն շատ վեր մար-
դիկ, բայց Հռոմ լուռ կեցած է մինչև ցայժմ. դա-
տապարտէ նէ ալ՝ Մխիթարեանց հետ բան մը չունի։

Արտին բաղձանքը իրաւ եղածի պէս տեսնելով անա-
նունը, որչափ ձայն ունի փորն ու թոքը կը պոռայ՝ որ-
պէս թէ աշխարհքիս անապատ երեսը, թէ Հռոմ վճիռ-
ներ՝ դատապարտութիւններ հաներ է ընդդէմ Մխի-
թարեանց։ Ո՞ւր, ե՞րբ. ան չկայ օրթան. ոչ սուրբ
Յողովը գիտէ, ոչ այսչափ կարդինալք, եպիսկոպոսք,
առաքելական Վիքարը, ազգային նախագահք, աշխար-
հական և վանական լատին գլերք, որ իրենց ժողովուր-
դը հաւատացեր են անոնց, և իրենք գիրենք ալ հաւատացեր,
ժամերնին առեր և անոնց խոստովաներ են. նոյնպէս
ազգային գլերին ամէն կարգէն խոհեմ և խղճմտան-
քաւոր վարդապետք, որոնց երբեմն երբեմն ազգին բա-
ռեմիտներէն հարցմունք ալ եղեր է կամաւ, թէ երկ-
բայելու բան մը կա՞յ Մխիթարեանց վրայ, և յանդիմա-
նութիւն լեր են անանկ խենթ հարցմունքին համար։
Ընունով Մարուշ Պօղոս վարդապետին, որ եռքը նա-
խագահ եղաւ, իր Ենկռեան բարեպաշտ մօրաքոյրը
հարցուցեր է աստ խնդիրը անանց կը խոստովանիմ կոր
ըսելով, ան ալ Ամենեին բան մը չկայ, լսեր է, հան-
գիստ սրտով խոստովանանքդ եղիր։ Այս աս բանիս

վկայ Փամիլեաներ կան։ — Այս մէկ վէճիս մը միայն, որ անանունը կ'առնէ կ'անցնի. բայց արդար դատելու և խօսելու որ ըլլանք՝ ան ալ ոչ եթէ ընդդէմ, այլ վասն Մ'խիթարեանց է, որ հալածչաց և զրպարտչաց ձեռքէն ու գրչէն զիրենք խալըսելու համար, խոհեմութեամբ և հնարագէտ խնամատուութեամբ գրեր ապրպպրեր է որ տուաքելական նուիրակին առջև աստուածաբանութեան քննութենէն ետքը՝ քաջի վկայութեան և ծայրագոյն վարդապետի վկայագրին մէջ հերետիկոսաց հետ յաստուածայինս չհաղորդուելու երդում մ'ալ դրուի։ Այս եղածն աս է, և ոչ թէ Մ'խիթարեանները ատեան քաշել և սրբութեանց վրայ ատ բանին համար երդումն տալ։ Սուրբ Յովսէփը թէ որ իրաւտարակոյս ունենար Մ'խիթարեանց վրայ, և թշնամեաց մանաւանդ թէ աս անխիղճ անանունին ըսածին և ձեւացուցածին պէս ճանչցած ըլլար զանոնք, զահէր կու տար անոնց այն իշխանութիւնները և ազատութիւնները զոր տուեր է. կարծենք որ անանունէն քիչ մը եւել կրնար մտածել որ ան մարդիկը որ կեղծաւոր են, սուտզրուց են, նենգաւոր են, խաբեբայ են, անանկներուն երդումը ինչ խեր ունի և որչափ վստահանալու կապ մը կրնայ ըլլալ։ Բայց ասոր վրայ վարն ալ նորէն կը խօսինք։ Աւստի ընդդէմ վէճիս՝ և ոչ մէկ հատ մը տեսեր են կամ լսեր, իսկ պաշտպան և արդարացուցիչ վէճիներ, խիստ շատ, որոնց մէկ քանին տրպած են իրենց համառօտ Պատասխանութեան ետին. դուն ան հոն տես, մենք հոս տեսնենք թէ անանունը ինչ ապուր կ'ուտէ ան վէճիներով։

Անանունին յետին տկարութիւնը և խեղճութիւնը և ծաղրելի խայտառակութիւնը դիտենս ուր է. 219 էջէն ինչուք 230, բոլոր ինիներորդ գլուխը, որ շատ աղէկ կ'ըլլար բնաւ չգրեր, թերևս խորամանկ լռութիւն մը միայն կը համարուէր. իսկ հիմայ՝ երբև թէ խելքը վը պատասխան կու տայ և հերքումն կ'ընէ Մ'խիթարեանց սոսկ երկու թերթ միայն տպած իրենց Ջատագովութեանը։ Անանկ քօմէտիա բան չըլլար. խեղճ անանունը չիյտէ թէ ինչ ընէ. կը կատղի, կը բորբոքի, ըղձանքները կը կրծէ, ճակատը կը քերէ, կը կարմրի, կը քրտնի, կը դեղնի, կը կրմկրմայ, կը լռէ, իրա-

ւունք կու տայ, նորէն եւ կ'առնէ, բան չինշանակեր կ'ըսէ, կը խենթաբանէ։ (Երինակ իմն (էջ 222), Ամէնանին պատմութեանը տպագրութեան հրամանին համար, արդարանալ չիհեւանիր կ'ըսէ. ապա թէ ոչ պատմութիւնը արդարանար նէ, անով Պ. Հ. ալ պիտի արդարանար։ Հաւատամ որ Յոսեփոսի աղուեսին խանութի մը կախուած տեսած դիմակը՝ ասոր գլխէն եւել խելք ունէր։ Մ'իւս աղուեսին պէս ինքնիրեն գուքն ինկեր, չկրնար ելլել։ Դ'ելի ով ըսաւ որ ան փշոտ բանին ձեռք զարկ, ով ըսաւ անոնց փաստերը հելքէ. լուութեամբ չէիր մի կրնար յաղթանակել։ Ո՞վ ալ ըսաւ քեզի որ ելիր ան Ջ. ատագովութիւնն ալ զրքիդ ետին տպէ. Մ'խիթարեանց միայն սուրբ Յոզովին համար տպած և Հռոմ միայն խաւրած բանը հրատարակէ։ Մ'իշտ քուկին յանդուգն անվախութիւնդ քեզ կը կոծընցընէ կոր։

Մ'տիկ ըրէք սոսկալի սուտ և անմիտ խարդախութիւն։ Կը պոռչայ, որ Դ'ենեդիկտոս ԺԴ. Սրբազան Պապին թուղթը՝ Մ'խիթարեանց ինչ գովեստ ինչ բարի վկայութիւն է. յորդոր կու տայ եղեր աղէկ վարուելու ի քարոզութիւնս. ասկէց ինչ կ'ելլէ՝ կ'ըսէ, աղէկ շարժելու խրատն՝ աղէկ ըլլալ չիհեւանիր, կ'ուզէ ըսել որ հատտա գէշ ըլլալնին կը հեւանի։ Դ'ատանք հիմայ կարդանք Սրբազան Պապին թուղթը, որ մեծ բախտով տպած ունինք ձեռուընիս Ջ. ատագովութեան ետին (էջ 21)։ Ի՞նչ կը գրէ Սրբազանը Մ'խիթար աբբային 1742ին. "Մ'եծապէս հնորհակալ կ'ըլլանք Հրամանոցդ ալ՝ և բոլոր կրօնաւորներուդ ալ առաքելութեանցը համար, որ այնչափ պտղաւէտութեամբ շարունակ կ'ընեն կոր,,։ Սրբազան Պապ մը հնորհակալ ըլլայ Մ'խիթարեանց, և շարունակ պտղաւէտ Ճանչնայ անոնց առաքելութիւնը. ասոնց քաշուելու բան չէ. լռելով ալ միայն չիլրմընար, հապա փոխելու, աւրելու է. խրատ գրեր է՝ որ աղէկ շարժիք առաքելութեան մէջ, ըսելու է։ Հասկըցար մի հաւատարիմ պատմիչը, իր տպած ամենուն ձեռքը տուած բանը՝ ինք կը խարդախէ, որ ոչ այնչափ Մ'խիթարեանց դէմ անիրաւութիւն է, որչափ Սրբազանին։

Սուրբ Յոզովին երկու վ'Ճիռը միայն, կ'ըսէ (էջ

223), քիչ մը բան կը նշանակէն 'ի նպաստ Մխիթարեանց (տես Ազատագ. 18 մարտի 1820 և 9 յուլիսի 1821 էջ 29, 30). որ երկուքն ալ ազգասէր կռիւէն և հինգին քարոզութենէն եաև է։ Բայց անանունը խարդախելով յիշելէն ի զատ, չմտածեր որ բոլոր գրքին մէջ ան երկու վէճին ալ դէմ և հակառակ սուտերով և զրպարտութիւններով դատապարտեր է ինք Մխիթարեանները։ Բոլի վէճը կ'ըսէ. "Սուրբ Յովհաննէսը ըստ արդար ինդրոյ ձերոյ՝ ձեր գրոց դէմ և առաքելութեան դէմ եղած հրամանը ետ կ'առնէ. ան երկու հրամանն ալ ետ կ'առնէ, և կը հաստատէ զձեզ առջի վիճակնիդ՝ ինչպէս որ ամբաստանութիւններէն առաջ էիք"։ Գրիգորդը կ'ըսէ. "Հ. Արապիոնին և Հ. Մինասին համար եղած ամբաստանութիւնները մերժելի են իբրև զրպարտութիւն, և ոչ երբէք բոլոր վանքին վրայ առնելու է ըստ ամենայնի և ամենեցուն"։ Այս սակայն մենք վերը տեսանք որ ցեղերը քաշկըռտուեցան Հ. Մինասն ալ Հ. Արապիոնն ալ։

Նիսելքաբար կը պոռայ դարձեալ (էջ 224), թէ սուրբ Յովհաննէսը ազատ ընելով Մխիթարեանները քարոզութիւն երթալու և ամբաստանութիւններէն արձակելով՝ չիհետեւիր՝ չըսեր որ գացէք մոլորութիւնիդ քարոզեցէք։ Ո՞վ կ'ըսէ քեզի որ ատ ըսել է. բայց դուն չես ուզեր տեսնել, որ յայտնապէս ըսել է թէ՝ անանկ է նէ բոլորովին սուտ են եղեր քեզիպէսներէն գրուած չարախօսութիւնները, որ դուն նոյն բաները նորէն առեր գրեր ես աս քու հրեշ գրքիդ մէջ։ Այսպէս (էջ 226) ամբաստանութենէ արձակելը, կ'ըսէ. ըսել չէ որ յանցանք չէք գործեր։ Հապա ինչ ըսել է, մեծ խելացի. կարծես կոր որ ապաշխարող կ'արձակես մեղքէն։ Ամբաստանութիւնները սուտ զրպարտութիւն են և մերժելի են ըսելը՝ անպարտ և արդար վճռել չէ տէ ինչ է։ — Սուրբ Յովհաննէսը Մխիթարեանց առաքելութիւնը ազատ արձակելու ատեն՝ երեսնէն զարկեր է եղեր իրենց գայթակղութիւնները, ապստամբեր է եղեր որ չհաղորդին ընդ հերետիկոսս, թէ մերը և ժողովուրդները տակնուվրայ չընեն։ Այս անլուր աղտն ալ դարձեալ սուրբ Աթոռին կու տայ, որ անանկ մարդոց նորէն ինք զինք մուցեր ու ազատու-

թիւն տուեր է։ Բայց քացէք, կ'աղաչէնք, նորէն նայ-
եցէք 18 մարտի 1820ին վճիռը կամ հրամանը, տե-
սէք թէ ատ խօսքերուն մէկ բառը կա՞յ մի. թէչէք ե-
րեսնիս, կամ թէ չէ՝ անանունին գրքին երեսը։

Մանսեալք հայհոյութիւն սուրբ Աթոռին, որ սուրբ
եկեղեցին՝ քարեգու

բեանները անոր խօսքովը արդար գտնէ։ Լաւ կ'ըլլայ որ զինքն արդարացընելու դիմէ այն գթութեանը, զի խիստ կարօտ է այսպիսի անօրէն հերետիկոսական խօսքերովը և սուրբ Աթոռին յայտնի վնիռներուն դէմ գրելովը, անոր արդարացուցածը ինք դատապարտելովը. և մինչև աս իւր ամենահերետիկոս գիրքը ետ չառնէ չապաշխարէ, այն գթութեանն ալ արժանի չէ և չի կրնար ըլլալ։ Մէկը եղբայրը զրպարտէ անունը կոտրէ հրապարակաւ, մինչև հրապարակաւ ետ չառնէ, անունը չշրտէ նէ, ան մարդուն թողութիւն կայ մի. անանունը ինչ ֆէթվա տուեր է մինչև հիմայ իր խոստովանողուցը թէ որ խոստովանահայր է։ Բրիստոս տէրն՝ թէ որ եղբայրդ, կ'ըսէ, խէթ մը ունենայ հետդ, պատարագդ ընդունելի չըլլար, մինչև որ չհաշտուիս հետը. հապա բոլոր մէկ կրօնաւոր քահանայից աստուծոյ վանքի մը խէթ ունենայ նէ ինչ ընելու է։ Ընտանունը ատ բանեղդ կեանքին մէջ մոռացած չէ, և հիմայ ալ չի մոռցեր, փոյթն ալ չէ, ահա նորէն կը պոռայ. "Սուրբ Յողովը, կ'ըսէ, իբրև մայր զթած՝ իր ապստամբ և սպերախտ որդւոցը յայտնի յանցանքը գոցել կը նայի"։ Դարձեալ ահա սխալեցաւ՝ անանունին խելքովը՝ սուրբ Յողովը, որ եկեղեցւոյ վնասը գոցեց, ապստամբները թող տուաւ։ Իսկ անանունը ինչ կ'ընէ. իր եղբայրներուն յանցանքը՝ հրապարակները և այլակրօնները ուրջին կը սփռէ, կը պոռայ. չեղած տեղը կը ստեղծէ՝ եկեղեցւոյն բարեացը նախանձայուզութեամբ, անտարակոյս։ Տեսար որ մինակ հոս տեղս իրեք անգամ յայտնի կը պոռայ կոր որ սուրբ Յողովը խաբուեր է, ճշմարտութիւնը չէ խմացեր, սխալեր է, իրմէ առաջ շիտակ բան չէ կրցեր ճանչնալ, և անով մնացեր են Մխիթարեանք մինչև հիմա։ Մտիկ ըրէ հռովմէական ուղղափառութիւն։ Աչ դրքէն կը սորվինք կոր նախ թէ սուրբ Աթոռը կը խաբուի եղեր. երկրորդ՝ թէ ուրեմն քննելի է թէ ԷՐբ և ով կը խաբէ կամ խաբել կ'ուզէ կոր. հիմա, չէ նէ ան ատենը. Մխիթարեանք, չէ նէ մի անոնց թշնամին։ Աստոնց նման յետին անմտութեան խօսք է միւս ըսածն ալ, որ սուրբ Յողովը արդարացուցեր է նէ ալ Մխիթարեանները, մասնաւոր ատ նա դիպուածներուն վրայօք միայն արդարացուցեր է, բոլոր

միաբանութիւնը չէ արդարացուցեր։ Երկու մեծ անմիտ հակասութիւն կայ ատ խօսքիդ մէջ. մէյմը որ ամէն մանաւոր ամբաստանութիւնները սուտ ելլեն և ջատագովին նէ, բոլորը մէկ տեղ սուտ ելլել չէ եղեր, և ամբաստանողները չէն արդարանար եղեր։ Մ՚իաբանութիւնը վերացեալ անանձն բանը ոչ յանցաւոր կ՚ելլայ, ոչ արդար. անձինքն են որ կ՚ելլան. անձինքն արդարացածին պէս, միաբանութիւնն ալ արդարացած է։ Երկրորդ՝ որ բոլոր գրքին մէջ ինքն ալ կը պոռայ՝ թէ բոլոր անձինքը զատ զատ վերէն՝ի վար հերետիկոս ցուցուցի, անանկ է նէ բոլոր միաբանութիւնն ալ անանկ է. իսկ ետքը ատ վերի նոր խօսքովը ինք կ՚ուրանայ զայդ հետևութիւնը. հոս բոլոր մանաւորաց արդարանալը բոլոր միաբանութեան վրայ չառնուելը եղեր, իսկ հոն քանի մը մանաւորաց իր խելքով ցուցուած հերետիկոսութիւնը բոլոր միաբանութեան վրայ կը հետևի եղեր։ Ամէն մէկ գրքին երեսը մէյմէկ նոր գոյն կը փոխէ ատ գեանաուիծը։

Ազնարիտ ԲօլէՀցի Յովհաննէս Յարութիւն Ջուզայեցի վարդապետին, որ Խոպահանու լատին եպիսկոպոսին վիՀակին տեսուչն էր, 1810 յունուարի 24 առ Ղամբեան ՀՀ. Մ՚ինքայէլ գրած թուղթը՝ (տես Ջատագով. էջ 33) անանունին անանկ խոշոր անանկ զարհուրելի լեղի հապ մը՝ն է եղեր, որ չկրնար կոր ողորմելին կլլել (էջ 229). կամ թէ ըսենք՝ Կերբերոսին կլլած պատառն է եղեր իրեն, կամ թէ կ՚ուզես Դանիէլի վիշապին բերանը զարկած գնդակը. կը դալարի, կը տապլտրկի, կը խելառի, կը շաղ փաղիէ, կը խղդուի կոր ողորմելին։ Իրաւ որ ալ՝ կլլուելու բան չէ։ Ի՞նչ գրեր է ատ, ետին՝ հարիւր տասը տարուան հերետիկոս Մ՚խիթարեանները չմնածող, և ոչ առջին՝ գալու մեծ հզօր անանուն ախոյանը չմնածող բարեսիրտ ԲոլէՀցի վարդապետը. կարդա՛ բոլոր թուղթը, մեր ձեռքը առաջ չերթար գրելու. բայց սա չորս բառը "Մ՚խիթարեանք մերոնց տասը հազարը կ՚արժեն,,, շուտ անցիր, երկան մի կենար. անանունեանցմէ եւել մեղք են Մ՚խիթարեանք, որ շատ պիտի կարմրին։ Ասոր նման տես (էջ 32 Ջատագ.) Մ՚ասարը Անտոն եպիսկոպոսին նամակը. և գիտցիր որ ամէն Ազնարիտ ԲոլէՀցի, և առա-

քեալական հոգի ունեցող՝ երկիւղած և արդարախոհ և իմաստուն վարդապետները՝ միշտ մեծ բարեկամ եղած են Մխիթարեանց և են ասօրուան օրս ալ, կամ գէթ զրպարտիչ և հալածիչ չեն եղած. ինչպէս ինքն անանունն ալ դառնացեալ կը խոստովանի ակամայ (էջ 210) թէ "Ցեմ տեսած Հոլէձցոց վրայ ան մէկ սիրտ մէկ հոգի միաբան հակառակութիւնը Մխիթարեանց մոլորութեանը դէմ.,, : Հոս ալ չիմնածէր, որ եթէ մոլորութիւն կար նէ՝ մեծ յանցանքի ամբաստանութիւն է ատ խօսքդ իր եղբարցը վրայ : Որչափ ցանկալի էր մեզ որ կարենայինք աւետիս տալ ձշմարիտ Հոլէձցի վարդապետաց, թէ աս անօրէն գիրքը շինողը իրենցմէ չէ եղեր, վասն զի ինքն ալ յայտնի կ'ուրանայ՝ որ ես Բրոբականտայի չեմ (էջ 20, 112). միայն թէ ատ մարդուն խօսքին կ'աւտան կամ աւտալ կ'ըլլայ նէ : Բայց թող աւտան, վասն զի գործքը կը վկայէ՝ որ իրաւացնէ ուչ է Հոլէձցի :

Ուղայեցւոյն գլխն փոխարէն, (մտիկ ըրէ անմիտ հակասութիւն մին ալ), շատ Հոլէձցոց թըղթեր կընայի Մխիթարեանց դէմ հանել կ'ըսէ (էջ 227), բայց կը վախեմ որ անանկ բաներ ալ հետը դուրս կ'ելլէ, որ Հոլէձցիք Բրոբականտային միայն յայտնել կ'ուզէին : Մխիթարեանց դէմ ամէն քար շարժողին, և զրպարտութեամբ և ամենայն անլուր և անասելի հայհոյութեամբ կատղողին, եկէք հիմայ աղուոր խրդձ մտանքը մտիկ ըրէք. ինչպէս յարմարեցաւ : Բայց սխալեցանք. զի մանաւանդ իր բոլոր առջի ոձին խիստ աղէկ յարմար է, գէշ գլուխ չունի անանունը, հետևանք պահող է և միշտ ինքն իրեն նման : Ա ատն զի ան տպառնացած թղթերուն մէջ շատ բան իրեն դէմ և Մխիթարեանց նպաստ պիտի ըլլայ անտարակոյս, կամ անոնց դէմ՝ ասուրը Հոլոլվին բարկութիւնը, ինչպէս կամ, կամ (aut, aut) թղթինը ըսինք վերը. խնդրէ է մի եա ան բաները դուրս հանելը : Ա. ալ աղուորը ետևի կտորն է. "Դեռ ողջ անձի մին ալ գրուածք կընայի հանել, կ'ըսէ, անոնց դէմ, անանկ անձի մը՝ որ իրեն պատիւ կը համարի Մխիթարեան ամբարտակին քանի մը քար խլելը,, : Իսկ աս անձը ոմ ըլլալը զուրցել հարկ է, ամենը կը ընան գուշակել և անով իմանալ թէ գրածներուն ալ

ոչչափ հաւատալու է։ Ընտանիք պահծու թուղթեր կ'ուզէ նէ անանունը՝ Մխիթարեանք աղէկները կը յուսընեն իրեն, և չէ թէ անանկ անձէ մը գլուած որ իրեն պատիւ հատրի անանունեանց ամբարտակէն քար մը խըլելու, հապա անանկէ մը՝ զորն որ ինքը անանունը Մխիթարեաններուն թշնամեացը կարգը կը համրէ. այն է Գ. Երզ. Հրէսին, որուն ան մէկ թուղթն ալ զոր 1816 նոյեմբերի 11ին կը գրէ, բաւական է անանունեանց ինչ ըլլալը խմացընելու. բայց գիտնան որ Մխիթարեանք խիղճ ալ ունին, մարդկութիւն ալ։

Ղուխասրեան Տէր Սերովբէ ծերունի և հոգևոր վարդապետին մասալը (էջ 229-230) մենծ քահանայի նիւթ մըն է գիտցող Մխիթարեանց և աշխարհականաց։ Օ՛ի այն ջերմեռանդ և ճգնաւոր ծերը՝ ժամանակաւ տարբեր կարծիքի ալ տէր եղեր է նէ, աքսորքին ատեն սուրբ Գ. աղարու վանքը շատ ամիս ամենայն սիրով և բարի օրինակով նստելին ետքը, աղգին բաժանումն որ եղաւ և ձեւի մտաւ, ուզեց մէյմը դալ տեսնել. ըսելով որ ձեզի ատենօք դէմ խօսողներուն հիմայ ես պիտի ըլլամ գլխահար, և անանկ ալ ընելուն՝ խիստ շատ ականատես և ականջալուր վկաներ կան կենդանի մինչև ցայսօր։ Լու արտասուօք բաժնուելու ատենը վանքէն՝ Սոմալեան աբբահօրը ըսաւ որ Լա դարձեալ հոս գամ հոս մեռնիմ պիտի. աբբահայրն ալ՝ Լատած խուցդ քուկդ է, երբ կ'ուզես՝ հրամիկ ըսաւ, և անանկ բաժնուեցան մէկմէկէ։ Հիմայ ասոնց քովը դիր անանունին սուտը. "Ընչափ հակառակ է եղեր Մխիթարեանց որ բոլորովին մէկալ ծայրը անցեր է եղեր,,. ասոր ապացոյց. մտիկ ըրէ. — "Ինչուք՝ գտակ չուզեր եղեր դնել գլուխը, որ Մխիթարեանց նմանի,,։ Հապա ինչ ընենք որ այնչափ ամիս վանքը ամէն օր գտակով ժուռ կու գար ան բարի ծերը, և Մխիթարեանք չիտուին իրեն ան գտակը։ Ընչպիսի տղայական և ծաղրական զէվզէկութիւն ըսէ՞ր ես, տեսէ՞ր ես։

Ընտանունին շատ կերպ զօրաւոր և անժխտելի փաստով բան ապացուցանելը տեսանք մինչև հիմայ. բայց մէկ ուրիշ նոր և հիչ մէկուն մտքէն չանցած անհերքելի ապացոյցի ոճ մըն ալ բանեցուցած ունի Երկոտ. Պեղ (էջ 216, 241) զարմանալու և սորվելու արժանի։ Ը-

ջինը ան է՝ որ կ'ըսէ թէ Դէր. Ֆէռիէրի առաքեալական նուիրակը՝ Մխիթարեանց դէմ էր. ապացոյց՝ անոր մէկ խօսքին կը խաւրէ (էջ 18). կը բանաս կը գտնես անոր աս խօսքը. "Հերձուածողները որսալն ինի՝ չըլլայ բուն հաւատացեալքը մոլորին". Մխիթարեանց մէկ խօսքը չես գտներ և ոչ մէկ նշանը, բաց ի Մ. Օնսէ նեռին Մ. գրէն, ան բաւական է անանունին որ Մխիթարեանց դէմ ըլլայ։ Երկրորդն ալ ան է, որ բոլորովին ջնջուելու և վերնալու որ ըլլան նէ Մխիթարեանք, կ'ըսէ, ամենևին հոգերնին պիտի չըլլայ, վասն զի էն սիրեր կրօնաւորական կեանք։ Բայց ապացոյցը. տես, կ'ըսէ, վերը 160 էջը։ Բաց նայէ, ինչ կայ արդեօք. կը գտնես տասնըհինգ տող հայհոյութեանց ճառատանք, և ոչ այլ ինչ ամենևին։ Յետևի էջը, նմանապէս. ալ ետևինը, նոյնպէս։ Թերևս թղթահատարը սխալ է գրուեր. դարձիր վեր, դարձիր վար, բոլոր ան չըփքա չարշըսին պըտրտէ, բան մը չես գտներ։ Բայց աղուոր ապացոյց է՞ մի, որ Սոկրատէն, Արիստոտելէն մինչև ի Լաք և ի Լեւտոն մէկը չէ գտեր. խաբեբայից խանութը միայն կը ծախուի, և անանունին գործատունը կը սորվեցուի։

Դանք քիչ մըն ալ աւելի մանաւորապէս միւս ըսած կտորներուս, անանունին գլխէն վեր և կատաղի յանդգնութեանցը վրայ, որուն աչքին ոչ արքայական տէրութիւն կ'երևնայ և ոչ Հռոմայ սուրբ Աթոռ։

Ոչ միայն Մխիթարեանները և Ցիւզեանց մեծափառ տունը թշնամիներ է անանունը, այլ և մեծազօր օսմանեան տէրութիւնը չէ սեպեր, և անոր ալ դպչելու խօսքեր զուրցելու չարաչար յանդգներ է վեց եօթը տեղ, որոնց մէկ երկուքը վերը յիշած ենք, բայց հոս կարգաւ գնենք ամենը։ Էջ VI, անանկ մեծահոգի սրտոտ մարդ մըն եմ՝ ես, կ'ըսէ, որ մարդկային նկատմունք չիյաեմ, և հիչ մէկ որ և իցէ երկիւղ չեմ ճանչնար՝ ամեն միջոցներ բանեցընելու որ վախճանիս հասնիմ, ինչպէս որ ալ ետքը վճռտելու՝ աքսորելու կ'ելլէ Մխիթարեանները։ Որ յայտնապէս ըսել է թէ և ոչ տերութեան մեծասաստ ահաւոր երկիւղը գիտեմ. որով կը ցուցընէ թէ շատ զօրաւոր մարդ եղած պիտոր ըլլայ և կռնակը ամուր տեղ տուած։ Էջ 119, Սորդուճճեան Հ. Յովհաննէսը՝ կամ որ նոյն է՝ Մխիթարեանք

Ֆրանսիզի արդար դատաստանին դէմ՝ որ Պ. Յով-
հաննէս Մուրատը պիտի բանայ եղեր, Դանէն Ֆեր-
ման պիտի առնէն եղեր։ Որ յայտնապէս ըսել է, թէ
օսմանեան տէրութիւնը անիրաւ է, և անիրաւ դատաս-
տան ունի և անիրաւութեանց պաշտպան կը կենայ։
Լ. 131, 132, օսմանեան տէրութիւնը, կ'ըսէ, իրեն
խարաձը միայն առնելու կընայի, հերիք է որ խարաձի
թուղթը տայ՝ ստակն առնէ, քեզմէ աղէկ մարդ չի կրը-
նար ըլլալ, անկէ ետքը գնա ինչ կ'ուզես ըրէ, ամենևին
հոգը չէ. կ'ուզես հայ եղիր, կ'ուզես տաճիկ եղիր, կ'ու-
զես հրեայ եղիր, կ'ուզես չարչրկէ տակիններդ, կ'ուզես
ձգմէ հարստահարէ. զի ասանկ կ'ընէին, կ'ըսէ, Հայոց
պատրիարքները, և տէրութեան փոյթը չէր ամենևին։
Տէրութեան ականջներուն շատ անուշ շատ աղուոր գո-
վեստ։ Թուի թէ ինքը աս սուտ յուսովը վստահացեր
է աս անօրէն գիրքը հանելու և աս յանդգնութիւննե-
րը գրելու և տպելու։ Լ. 134, և այլուր, կաթոլիկ
ազգը բաժնուելէն ետքը բացարձակապէս ապա և անկախ
ազգ կը կոչէ զան։ Ազանց ամիսոփման կամ բացատրելու
ինչպէս կը վայլէ աս մեծամեծ և սաստիկ բառերը ան-
անուանին բերանը, որ ազգին կէսը կը զրպարտէ քանի մը
տեղ, թէ ազատութեան, անկախութեան ետևէ են,
թագաւորութիւն կ'ուզեն կանգնել։ Մինչդեռ ոչ մէկ
թագաւորի հպատակ ազգ մը, հիչ մէկ տեղ, թող թէ
արևելեան տէրութեանց մէջ, չհամարձակիր և չկրնար
զինքը ազատ և անկախ կոչել, և ոչ ալ ըրած են բնաւ
ոչ հրեայն, ոչ հայը, ոչ հոռոմը։ Ա՛ս ալ իր բերնէն
կամ գրչէն ելածը՝ վերի ըսած անվախութեամբը՝ ա-
կանջը չլսել, աչքը չտեսնել է։ Այս ազգին բաժնուիլ
ու զատ ազգ ըլլալը՝ փոխանակ օսմանեան տէրութեան
արդարութեանը, խնամտութեանը և գթութեանը խոս-
տովանելու, Եւրոպայի տէրութեանց և յատկապէս
Ֆրանսիզին կու տայ (էջ 134, 197). անոնց ջանքը և
խնամքը, կ'ըսէ, ըրին մեզի ամէն բարիք։ Մէյմը ա-
ռաջ Կիլմինոյ Ֆրանսիզի դեսպանին շնորհակալ կ'ըլլայ,
որ ընդդէմ տէրութեան դիմացաւ, յօդս ցնդեց ամէն
մեքենաները, և ապֆերնուս ապարուլիանը կանգնելու եր-
ջանիկ դարը բերաւ։ Ազէկ մտիկ ըրէ աս բառերս ինչ կը
նշանակեն կամ կրնան նշանակել։ Մէյմն ալ, կ'ըսէ,

հիմայ պէտք եղաւ Լ ավալէթ դէսպանին հզօր բաղուկը, որ երբոր սուրբ Պ աղարու կուսակիցները (գլխաւոր Տիւզեանք կ'իմանայ, ինչպէս յայտնի ըսած է էջ 108–112), դէմ կ'ելլէին առաքելական Գահին վճիռներուն նէ, ասիկայ տերութեան բուռն և սաստիկ հրամանը եւ դարձուց, ցրուեց ամէն գաղտնի զօրութիւններն ու բռնութիւնները, որ երազը տեսեր է։ Իսկ գրքին բոլոր նպատակը, որ վեր վար կը յեղյեղէ, Մ՝խիթարեանները տերութեան երկրէն՝ իրենց հայրենիքէն, տնէն տեղէն ծնողաց գրկէն վռնտել աքսորել է յաւիտեան, որ մէյմ՝ ալ ոտք չի կոխեն. և ասանկ ալ ընելու սիրտ կու տայ՝ ոտք կը հանէ երկրին ամենայն հոգևոր իշխանութիւնները, որպէս թէ անտերունչ Մ՝խիթարեանք օտարի երկիր՝ օտարի իշխանութիւն բռնի եկած մտած ըլլային. բան մը՝ որ նոյն իսկ երկրին տերը և թագաւորը ըրած չէ ու չըներ։ Այս վեց եօթը կտոր բանիս վրայ մենք դատաստան չընենք, մեծաղօր տերութեան թոզունք, մանաւանդ թէ աշխարհքիս ամէն տերութեանց և անոնց պաշտօնէից և կենցաղագէտ քաղաքավար մարդոց, որ ինչպէս որ պէտք է դատեն։

Այսոնք տերութեան դէմ ամբարտաւանութիւններն են բոլորը մէկ տեղ դրուած, ըստ որում տերութեան դպչող։ Տեսնենք հիմայ սուրբ Աթոռինները, եւքը նորէն անոնց մէկ կտորին կը դառնանք։ Վերի լսած յայտնի ապացուցական փաստերովդ և իրաւունքներով՝ Մ՝խիթարեանց հերետիկոս և անպիտան տգէտներ ըլլալը ցուցընելէն ետև, կ'ելլէ ինք իր գլխուն՝ առանց սուրբ եկեղեցւոյ դատաստանին ձգելու և սպասելու՝ զանոնք փասակար և խռովարար հերետիկոս կը վճռէ, կ'որոշէ կը լմնցնէ դատը, և ազգին մէջէն՝ գոնէ ինչուք որ ջնջուին՝ կը վռնտէ Մ՝խիթարեանները և իբրև գերագահ իշխան եկեղեցւոյ, ամէն եպիսկոպոսաց և առաջնորդաց՝ և՝ի հարկէ ամենէն առաջ նախագահ եպիսկոպոսապետին մեծաձայն հրաման կու տայ՝ որ ամէնն ալ հալածեն. և անոնց դատը ալ ի կախ անյայտ չէ, տեսնուեր՝ վճռուեր՝ լմնցեր է կ'ըսէ (էջ 25). անանկ որ Սուքիասն Սամուէլեան չորրորդ աբբահայրը՝ Վերջիներ աբբայ կը կոչէ, և Գաբրիէլեթին՝ վեցերորդ ըլլալիք. և անանկ լմնցած է բանը, կ'ըսէ, որ ալ ուրիշ որոնք պիտի բողոքին։

Որոնց. — սուրբ Աթոռին. որովհետև քու առջիդ աստուած չկայ. չէ նէ մի սուրբ Աթոռին ալ Սրբազան Պանին ես դու, կամ ներքին խորհրդականը։ Սակայն հոս ալ կայ դարձեալ հակասութիւն, որ ընդունելու դատերնին վճռուելը ընդունելի է ըսելէն ետքը, դարձեալ ետևէն գալու յաջորդ Խիթարեանները կը ճանչնայ, անոնց խրատ կու տայ, և սպառնալիք կ'որոտայ։

Այց թէպէտ և հերետիկոս և անօրէն անզգամմարդոց պէս կը ընդէ ու կը վռնտէ կոր ալ նէ, թուի թէ նեղսանց անոնկ չճանչնար զիրենք։ Այլա թէ ոչ, պէտք էր մտածեր՝ որ առ անօրէն անզգամ և յամառ հերետիկոսները (զի առանց յամառութեան հերետիկոսութիւն չըլլար), որ պապը պիտի ընդէ. ասոնց համար ալ պապ մը ունի՞ մի. զի հերետիկոսը պապ մտիկ չըներ, կը կենայ իր բանը կը տեսնէ։ — Այս դարձեալ պէտք էր մտածեր՝ որ իրենց ընկերութեան փոյթն և ակնածութիւնը մէյմը որ վերնայ, և ազգին մէջ կրիւք որ եկնան ատ ըստ իւր ճանչցածին խորամանկ սատանայամիտ և յամառ տգէտ հերետիկոսները նէ, և իրենց ամէն մէկը բաղմաթիւ յաջորդներ որ հանեն՝ ազատօրէն սերմանելով իրենց կարծեալ ազանդը նէ, օգուտ մի կ'ըլլայ ազգին ուղղափառութեան, չէ նէ մի ինչաս. հերետիկոսաց կողմը մի կը զօրանայ, չէ նէ ուղղափառաց. աւելի դիւրութիւն մի կ'ըլլայ անոնց դառնալուն, չէ նէ դժուարութիւն. աւելի խաղաղ մի կ'ըլլայ ուղղափառութիւնը, չէ նէ աւելի խռովեալ. իրենենքէն ելած և ելելու քանի մը ուղղ բեռ գրքերը՝ անոնց դէմը կ'առնե՞ն, չէ նէ մէկ մեծ պատառմունք մը կ'ըլլայ՝ ազգին մեծ մասը Խիթարեանց հետ միանալով և աշխարհքին տգէտները թերևս իրեն իրաւունք տալով.....

Ինքն իսկ (էջ 225) չըսեր մի որ 1821ին սուրբ Յողովը խոհեմութիւն ըրաւ, կամ գթութիւն Խիթարեանց, սրտերնին առնելու և տաքցած գլուխները հանդարտելու, որ չըլլայ թէ ՝ալ գէշ բան ՝ըլլայ։ Ինքը գիտենք որ սուրբ Աթոռը ան ատեն ալ, միշտ ալ անաւնունին անմիտ խելքովը չէ մտածեր, այլ աստուածատուր իմաստութեամբը արդարութիւն և իրաւունք է ըրեր. հիմայ ալ դարձեալ անոր խորհրդոցը ու խրատուցը կարօտ չէ, ինքը եղածն ալ գիտե աղէկ, ըլլա-

լուքներն ալ կը մնայէ. և աւելի անանունեանց հնա-
զանդութեանը վրայ կը տարակուսի՝ քան թէ Մխիթա-
րեանց, որոնք՝ փորձով իմացեր է՝ թէ ինչ որ հրամիրը
է նէ ըրեր են, ինչ պարտք որ վրանին դրեր է՝ յանձն
առեր են, և բնաւ չէ լսած անոնցմէ որ ըսեն. "Որով
հետև այսչափ տարի է որ Հռոմ չգիտցաւ դադրեցը-
նել աս ուղղափառութեան և հոգւոյ փրկութեան վը-
նասակար կռիւը և տարաձայնութիւնը, կը մնայ ուրեմն
որ Հայոց գլուխը դադրեցրնէ զան, և անտարակոյս կը
դադրեցրնէ մէկէն... Մեր միտքը հաստատ է և ան-
դառնալի, չենք ուզեր բնաւ Մխիթարեանց հետ մէկ
տեղ առաքելութիւն ընել,,: Այս է եղեր ահա առա-
ջուց ի վեր անանունեանց լեզուն և միտքը, ուրեմն
հիմայ աս գրքովը յայտնեց անանունը որ գործադրու-
թիւնը կ'ուզեն ընել, անոր համար շուտով ըմբնցրնելու
է, կ'ըսէ, ասանց կործանումը, քանի որ Ինտրա չեն
փոխադրեր սուրբ Պաղարու վանքը (էջ 240): Որ-
պէս թէ բնաւ երբեք Մխիթարեանց գոնէ մնքէն
անցած ըլլայ ատանկ խենթութիւն, ինչպէս վերն ալ
ըսինք, և որպէս թէ Ինտրայի ուղղափառաց վրայ
Հռոմ իշխանութիւն չունենայ: Հասկցիր դարձեալ
անանունին հռոմէական ուղղափառութիւնը: Ան չէ,
հապա վախնալով՝ որ յանկարծ իր կեանքը չօգտէ այն
բաղձացեալ կործանումը տեսնելու, կ'արտորայ և ար-
տորցրնել կը նայի՝ որ ժամ մի յառաջ տեսնէ աչքերը
չգոյած, (թէ որ ատանկ մարդը այն վայրկեանը կը
մնայէ նէ), և անանկ հանդչի գերեզմանը, որ նորէն
հոն ալ խեր մը աշխատելու յոգնելու պէտք չըլլայ՝ իր
հոտած ոսկորներէն ու մնխիրէն Անիբաղ մը բուսցրնե-
լու, որ իր անյաղ ատելութեան վրէժը առնէ. ինչպէս
որ կրնաք կատղած յուսահատած անձնասպան բարբա-
րոս Կարքեդոնի Դիդէ կամ Անիսա թագուհին խօս-
քը Իրգիլիոսէն առնելով և իր սրտին և բերանին ար-
ժանի՝ սեպելով կը պոռայ (էջ 247), թէ մեռնիմ ալ
նէ՝ քարիս վրայ դրեր պիտի տամ թէ "Ոսկորներէս
ելլես վրէժինդիր մը, որ Մխիթարեանները հրով
սրով հալածես,,: Ձիյտե ողորմելին, որ անանկ Ան-
նիբաղներուն ալ Աստուած ինչ Շիլիոններ կրնայ
դէմ հանել:

Բ՝կեց ոչինչ ընդհատ է միւս յանդգնութիւնն ալ որ վերը յիշեցինք, և քրիստոնեական յանցանքը ընդդէմ տերութեան, որ օսմանեան մեծազօր տերութեան ինքնակալ թագաւորի մը պէս, գաւազանը՝ մանաւանդ թէ թուրն ու տապարը ձեռքն առեր՝ Ա՝խիթարեանները իր տերութենէն կը հալածէ, կ՝աքսորէ անդարձ, կը վանտէ ու վերցընել կ՝ուզէ։ Հոս ընելու մէկ մասնաւոր խորհրդածութիւնն ալ ան է, որ ատ ինասակար հերետիկոսները մէյմը կը վանտէ վանքը կը թիսէ, մէյ մ՝ալ վանքը վերցընել կու տայ, որով այր իւրաքանչիւր հարկաւ իր երկիրը իր տունը կ՝երթայ։ Բ՝ ընդդիմութիւնը մոռցած պիտի ըլլայ անանունն ալ, որ վերջապէս ուրիշ ճար չգտնալով կ՝ուզէ որ Տաճարականներուն պէս ըմբնցընէ Ա՝խիթարեանները (էջ 240), այն է՝ ողջ ողջ երեսով զանոնք ու արքայութիւն խաբելով որ իր սիրտը հանգչի։ Կովկասու ապառաժներէն ծնած պիտոր ըլլայ մէկը, որ ատ դաղանային սիրտը ունենայ։

Բայց քիչ մը կայնէ նայինք, զի՞նչ ուր տեղէն կը վազնտէ կոր ատ երաղատես ցնորածը, և ամէն եպիսկոպոսաց ալ, կարծելով որ անոնք ալ խենթեցեր են, կը հրամէ որ հալածեն։ Ա՝խիթարեանները, օսմանեան տերութեան՝ իրենց օրինաւոր իշխանութեան հպատակները՝ իրենց երկրէն, իրենց ընկերկ հողէն, անէն հօր մոր քրոջ եղբօր զրկէն։ Լսելու. տեսէք ինչ կ՝ըսէ, բայց բերնովը միայն ընդդէմ խոշնչին, և զրեր է ալ իր խնստուն զրքին մէջ։ Ա՝ինչև որ Ա՝խիթարեանք չի հալածուին, չերուին, չվերնան, ազգին խռովութիւնը չադարիր։ Տեսէք անանուն խաղաղարարը որ իր խաղաղասէր խմբին գլուխը եղած և դրօշակիր՝ խաղաղութիւն կը բերէ ազգին. Լսեմ, գիտէք. ատ իրեն դժոխային զրած զրքովը, զորն որ չիյտեմ՞ որ դժոխքէն բրդած Կոստանդինեարէն մէկը խրատ տուեր է իրեն ատանկ խռովութեան կրակ մը ձգելու ազգին մէջ։ Գիրք մը՝ որուն ամէն մէկ էջը՝ չըսեմ՝ ամէն մէկ բառը մէյմէկ խռովութեան լուցկիք են, որուն մէջ Տիւզեանց ամենապատիւ Ֆամիլեան ուղղափառ Հայոց ազգին մէջ բարեպաշտութեամբ, զօրութեամբ, մեծութեամբ, կրթութեամբ և իմաստութեամբ առաջին ճանչցուած ամե-

նէն, ուղղափառութեան միշտ և մանաւանդ դժուարին ատենները բանիւ և գործով և ստակով իրենց անձանց վտանգովն ալ պաշտպան կեցած, աղքատաց Հայր, նեղելոց ձեռնտու, ամենուն բարերար, ազգին պարծանք, որուն անունը և գովութիւնը արևելք և արևմուտք հռչակուած, այսպիսի Ֆամիլեայ մը իբրև պարագլուխ և պաշտպան Մ՝խիթարեանց՝ խել մը անհաւատ և անկրօն, խաբեբայ և նենգաւոր, կեղծաւոր և խռովարար սրիկայից՝ կը բամբասուի և կը նախատուի. և որ եւելի գէշն է՝ Հայոց ազգային թագաւորութիւնը կանգնելու ետեւէ եղող. ասկէց եւել փաստակար ասկէց եւել կրակ ձգող և խռովութիւն հանող ինչ կրնայ ըլլալ. բայց կեցիր աս բաւական չէ։ Ազգին մէջէն ուրիշ Հանչցուած և պատիւ ունեցող մարդիկները՝ անունով, ձեւով, կերպարանքով մէջ քաշել, մէկուն մեծ քիթը, մէկալին դուրս ինկած ակռաները, ուրիշի մը թքեր ցատկեցընող բերանը, կերպ կերպ ցած և անվայել խեղկատակութիւններով նախատել խաղաղարարի գործք է մի չէ նէ խռովարարի։ Այս ալ բաւական չէ. երկու վարժարաններուն ուսանողները բոլոր այն տաքարիւն և դժուարահամբեր հասակը այնպէս զրպարտութիւններով և անիրաւ ստութիւններով իբրև անկրօնից խումբ մը ծաղրել, նախատել և գետնէ գետին զարնել, սէր և խաղաղութիւն մի կը բերէ չէ նէ խռովութիւն։ Այս ալ բաւական չէ. Հանազգեաց ընկերութիւնը՝ որուն թէ որ ազգին կէսն ալ չէ նէ՝ գէթ մէկ մեծ մասը հաղորդ և ջատագով է, և ինչ որ եղաւ եղաւ՝ ձայներնին քաշեր նստեր էին, զանոնք նորէն կերպ կերպ ծանր նախատինքներով զրգռել, ոտք հանել խաղաղութեան համար է չէ նէ խռովութեան։ Այսոնց վրայ եւելցուր հիմա Մ՝խիթարեանց դէմ խել քէ մանքէ չանցած զրպարտութիւնները, նախատինքները ու խեղկատակութիւնները որ կ՝ընէ. և մտածէ որ Մ՝խիթարեանները յիսուն վաթսուն հոգի, որոնց ամէնն ալ թէ որ մեծերու որդիք ալ չէն նէ, սակայն գետնէ բուսած չէն, մարդու զաւակներ են. ամէն մէկը ծնողք ունին, եղբարք, ազգականներ, բարեկամներ, հոգևոր զաւակներ, աշակերտներ, և գրեթէ բոլոր ազգին՝ արժանապէս կամ անարժանաբար իբրև

բարերար ազգին Ճանչցուած են. հիչ կարելի բան է որ անոնց ամէնը տեսնան իրենց զաւակներին, եղբայրներին, ազգականներին, հոգևոր հայրերներին, դատիարակներին և բարերարներին այդպէս և այնչափ նախատուած, ու ձայն չհանեն նատին խաղաղ տեղերներին և սպասեն որ անանունը՝ ինչպէս որ կ'ըսէ ու կը սպառնայ՝ քշէ՝ վարէ զանոնք, երէ ու մինիրներին երկինքը հանէ։

Իրաւ անանունին տրամաբանութիւնը պակաս է տէր բոլոր իր գրած գիրքը կը ցուցընէ, բայց ՀՆՀՁՈՒԿի չափ ալ տրամաբանութիւն մը բաւական էր խմանալու, որ ատ իրեն գրքին հետևանքը հարկաւ խռովութիւն հանելու վեր ի վար ընել պիտի ըլլար ազգը։ Հիչ որ չէ նէ իր վրայէն պէտք էր չափեր որ թէ մէկ պզտի ու քանի մը թուղթ տետրակ մը, որուն համար ինքն իսկ անանունը կը վկայէ թէ տկար ողորմելի գրուածք մըն է, որ ոչ զոք նախատելու համար թշնամանելու համար գրուած էր, հապա միայն Ա՝խիթարեանները իրենք զիրենք պաշտպանելու համար հաներ էին, որ է ըսել ուրեմն առաջ զիրենք ամբաստանող գրպարտող մը եղեր էր, որուն համար ստիպուեր են իրենք ալ գրել այն տետրակը, և ան ալ ոչ Պօլսի համար, այլ Հռովմայու դատաւորաց համար, որուն ինքը անանունն ալ կը վկայէ (էջ 245) ըսելով թէ ամենաքիչ օրինակ կոխեր են և ան ալ նայեր են՝ ուրչափ կրնան՝ ծածուկ պահելու, բայց իրենց և իմ դժբախտութիւնս անանկ ըրաւ որ, կ'ըսէ, օրինակ մը ձեռքս եկնայ. ասանկ տկար ու ողորմելի տետրակ կ'ըսեմ, թէ որ անանունին այնչափ դպեր ու ան ասոիՃան զայրացուցեր է որ՝ չկրնալով համբերել ատ կատաղի հատոր մը դժոխային գիրքը դուրս հանէ, անանկ գիրք մը՝ որուն ոչ ոք յանձն կ'առնէ կոր հիմայ հեղինակ ըսուելու, և սարկի զօռով յանձն առնողն ալ էս չեմ տէր ձեռագիր կու տայ, չէր մի կրնար գիտնալ որ իր ատ գիրքը հապա ուրչափ պիտի զայրացըներ ազգը։ Այս թէ որ մոիկ չբրաւ հանեց ու ատ կրակը ձգեց ազգին մէջ՝ ինչպէս կը համարձակի առանց ամչնալու կենալ ու կրակ կայ տէր ուրիշի դէմ կանչուրտել. լուցկիք ձգելու ատեն չէ՞ մոածեր որ ատ կրակը պիտոր ելլէ. չէ նէ մի հրկէզան աղաղակաւ կ'ուզէ բան տեսնալ։ Վերջիր իրեն հարցընենք, ու դատաստա-

նը իրեն կտրել տանք. Թէ որ ատ իր դժոխային գիրքը ելլեր ու բնաւ մէկը ձայն մը չհաներ, այլ ամէնքը կարդային և լուութեամբ իրաւունք տային, ինչ ըսել էր, և ինքը ինչ պիտի հետևցնէր. ան էլ մի որ պիտի ըսէր, Թէ նայէ ամէն ըսածներս ու գրածներս ինչպէս արդար ու իրաւացի են եղեր, ուրեմն բոլոր ազգը Մ՝խիթարեանները ըսածիս պէս կը ճանչնան եղեր, ուրեմն այնպիսի անզգամ մարդիկ են եղեր, ուրեմն ազգը չուզեր եղեր զատունք, անանկ է նէ երթան կորսուին. իսկ հիմայ որ ազգը կը ցուցընէ ու կ՝խնացընէ Թէ ամենեին իր կարծեացը ու գրածներուն դէմ է, Մ՝խիթարեաններուն միսը ուտելը իրաւունք է մի, և անոնք մի կ՝ըլլան խռովութիւն հանողը։ Անանկ է նէ՝ ըսել կ՝ուզէ որ ճար չկայ Մ՝խիթարեանք կամ մէկ կերպով կամ մէկալ կերպով պէտք է որ յանցաւոր ըլլան, հալածուին, վռնտուին, քշուին վերնան օրթայէն։ Անանունին մարին հետևանքը սխալ է. ես Մ՝խիթարեանները կեցած տեղերնին զէֆքիս համար խայթեցի որ օձն ալ չըներ, կը հետևի որ անոնք ալ վրէժ առնեն, ուրեմն ըրին՝ առին. սակայն անանկ չէ՝ առ գործն սխալ է, Մ՝խիթարեանք շատ վայլածը, շատ պարտքերնին չեն ըներ, մէկն ալ աս է։

Անոնք ասանկ գիտնալէն ետքը, գանք հիմայ հետեւութեանը։ Ինչպէս որ երևցաւ յայտնի Թէ հիմայ ով է եղեր ազգին խռովութեանը պատճառը, ասկէց կրնայ ամէն մարդ գուշակել և հետևցընել Թէ ուրիշ ամէն ատեն ալ որոնք են եղեր ազգը խռովողները։ Այց որպէս զի ալ աղէկ խնացուի՝ հիներէն ալ օրինակ մը բերենք։

Գիտեն ազգայինք, մանաւանդ մէջերնին ծերագոյնները, որ ասանկ մեծ խռովութիւն մըն ալ 1815ին եղաւ ազգին մէջ Ղամբեան Հ. Մ՝ինքայելին Վահան Կաւաթոյ ըսուած գրքին գողութեանը պատճառաւ, զորն որ առանց խոսնելու պարծենալով կը պատմէ անանունը (էջ 106—107), Թէ ինչպէս վանք խաւրուելու գրքերուն մնաուկին մէջէն գողցեր է գողցողը։ Այց կ՝երևնայ որ ան ատենը անանունը դեռ տղայ ըլլալով ինչպէս որ պէտք էր նէ տեղն ի տեղը չէ խնացած եղածը. ես աղէկ խնացունելու համար անանունեանց ան ժամանակը գլխաւորին գրուածները մէջ բերեմ։ Այս իրենց գլուխը նոյն տարին մար-

տի 23ին ի Հռոմ գրելով կ'ըսէ. "Մեր քահանաներէն մէկը մէկ տան մը մէջ տեսնելով Ղամչեան Հ. Մ'ինքայէլին հայերէն մէկ ձեռագիրը, և դիպուածով ան օրը տունը մարդ մը չգտնուելուն բաց ի մէկ մարապետէ մը, որ ան քահանային խոստովանողին էր, իրատ կու տայ ան մարապետին որ առնէ գիրքը Մ'ինքարէին տունը տանի, ուր չորս քահանայ մէկէն վրան ելնելով քիչ սահմանման մէջը օրինակը առին, զորն որ ահա հրամանոցդ Մ'սեմուէլ Թեանը կը խաւրեմ, (իմացիր միայն յառաջաբանութիւնը ու ցանկը)։ Այս շատ գէմ գրի (աղէկ մոխիկ ըրէ) ատ իրենց ըրած յանդգնութեանը, ինչու որ հիմայ կամ էտ քը թէ որ իմացուելու ըլլայ ատանկ մէկ գործ մը, կրնան սաստիկ զայրանալ անանկ գործողութեան մը համար եթէ գրքին տէրը և եթէ ան տանը տէրը ուր որ պահուած էր գիրքը, որ և առջի կարգի մարդիկներէն մէկն է ,,։ Այս նոյն տարուան սեպտ. 10ին գրած թղթին մէջ առաջ տանելով նոյն պատմութիւնը կը գրէ "Ղամչեան Հ. Մ'ինքայէլին մերոնցմէ գողցուած գիրքը, որուն ցանկը, յառաջաբանութիւնը և ուրիշ մէկ քանի կտորուանք անցած մայիսի 23ին խաւրեցի, մերոնց ձեռքն էր, աչքէ կ'անցընէին ու մէջէն խիստ երևելի կտորները կը քաղէին և Մ'խիթարեանները բնաւ մէկը չէր համարձակեր խօսիլ անոր վրայօք։ Մ էրջապէս Մ'էգէր Պ'ետրապայծառին Հռոմ երթալուն համար եղած իշխանաց ժողովուն մէջ Մ'խիթարեանց գլխաւորը ատ գրքին խօսքը բացաւ շատ նեղանալով անոր գողցուելուն համար և կ'ուզէր անպատճառ ետ դարձուի իրեն։ Այն ատենը պատասխան տուին մեր կողմի գլխաւորները ըսելով թէ որ գիրքը ուղղափառական ըլլար՝ իրաւունք ունէին ուզելու անոր համար ալ կը տրուէր. բայց թէ որ մոլորական վարդապետութիւն կայ մէջը՝ չկրնար տրուիլ մինչև որ չքննուի ու հեղինակը չգտուի ,,։ Խսկ նոյեմբերի 10ին գրած թղթովը այսպէս կը ըմբնցընէ պատմութիւնը. "Գրէն սկսեր էր տարածուիլ գրքին մէջ եղած Մ'խիթարեան ծուռ սկզբունքներուն համբաւը և տներու մէջ երկու կողմէն տաքութեամբ վէճեր և կռիւներ կ'ելային, զորոնք տեսնելով մեծերը և ուզելով որ արգելք մը դնեն և կռիւները դադրին և թող չտան որ ալ աւելի տարածուի աս հրդեհը ,, և այլն։

Այս անանկ հաւատարիմ պատմութիւն մըն է զոր անանուն ալ պէտք է որ ընդունի, որովհետև պատմողը մէջէն մարդ է և գործողութեան գլխաւորը, և Մխիթարեանց թշնամի, տեսնենք ուրեմն ինչ է եղածը։ Քահանայ մը իր քահանայական սուրբ պաշտամանը համար, այն է խոստովանորդի մը ունենալուն պատճառաւը կ'երթայ կը մտնէ երևելի աշխարհականի մը տուն, ուր իր ան մէկ մարապետ խոստովանորդէն զատ տնուորցիներէն բնաւ ուրիշ մարդ չգտնուիր ան օրը. թամամ գողութեան յարմար ժամանակ. այն աղախին մարապետին ձեռքովը կը կոտրէ կը բանայ ուրիշ քահանայի մը գրուածներուն մտտուկը, զորն որ վանք խաւրելու համար պատրաստեր էր, կը գողնայ մէջէն ուզած գիրքը ու կը յանձնէ մարապետին, որ դաղտուկ առնէ վիքարին տունը իրենց բերէ։ Հոն ինչ կ'ընեն. կը քակեն գիրքը կը բաժնեն մէջերնին կ'օրինակեն ուզած կտորներնին, և տունէ տուն այնչափ կը խօսին կը տարածեն իրենց ծուռ շիտակ գտած մոլորութիւնները իբրև Մխիթարեանց մոլար սկզբունքներ տէր հռչակելով, որ մինչև կրակը աղէկ մը կը զայրանայ. և ետքը կը սկսին կրակ կայ տէր կանչուրտել, և Մխիթարեանները խռովութեան պատճառ բռնել. ինչ աղուոր բաներ, ինչ բարի օրինակ առնելու գործքեր. բայց կրօնի ծուռ նախանձը ամէն բան օրինաւոր կ'ընէ։ Դնենք որ իրաւցնէ իրենց ըսածին և ուզածին պէս մոլորական և հերետիկոսական ալ ըլլար գիրքը, սակայն ո՞ր եկեղեցական օրէնք կը հրամայէ և պարտք կը դնէ իրենց որ ուրիշի մտտուկին մէջ պահծու անկատար, Բասլիոս և Դաւէթէ գրած գիրքը գողնան դուրս հանեն, և հանելէն ետքը գոնէ շիտակ հոգով խաւրեն, կամ առաքելական Ս. իքարին տանին յանձնեն, չէ. հապա օրինակեն, և ինչ ըլլալը, ինչու շինուած ըլլալն ալ չգիտնալով, և ոչ լեզուն հասկընալով՝ վաճիռ տան, հռչակեն, և գրքին հեղինակին հետ՝ բոլոր միաբանութիւնն ալ դատապարտեն. և օրինակ մըն ալ Հայոց ծախեն 2,500 ղուրուշի։ Պոնք ամէնը իրենք ընեն ըլլան՝ իրենց մեծին շատ դէմ դնելովն ալ՝ ինչպէս կ'ըսէ, և վկայելովը որ մեծ յանդգնութիւն է ըրածնին, և խռովութեան պատճառ, և այնու ամենայ-

նիւ ազգին դայթակղութեանը և խռովութեանցը ա-
մենեին իրենք պատճառ մը տուած չըլլան և Մխիթա-
բեանները միայն ըսուին խռովարար. ինչու, վասն զի
զիրենք պաշտպանել ուզեր են։ Հապա ինչ կ'ուզեին որ
ընեն. դատապարտուին իբրև հերետիկոս, երուին իբ-
րև տաճարական ու ձայն չհանեն. Կայիոս բռնա-
ւորը միայն կ'ընէր ատ՝ որ դատապարտած տանջած ու
մեռուցած անմեղներուն բերանը սպունգով կը թխէր
որ չըլլայ թէ ձայն հանեն խօսին ու ճշմարտութիւնը
պրուցեն։

Այսպէս կ'ուզեն ընել Մխիթարեանց ալ, մերթ նա-
խատական գրուածքներով (վասն զի աս առջինը չէ)
մերթ գողութեանով, մերթ սուտ և շինծու կանոններ
օրթան հանելով, մերթ խարդախած թղթերով, մերթ
անհիմն և անխիղճ զրպարտութիւններով խայթեր,
նեղեր, ամբաստաներ, դատափետեր, հալածեր և հո-
գենին հաներ են Մխիթարեաններուն, ու կեցեր կը
կանչեն որ ինչու ձայն կը հանեն, ինչու կը խռովին ազ-
գը. աղեկ երես պէտք չէ՞ մի ասոր։

Անանունը իբրև հաստատութիւն իր բսածներուն՝ կը
շարէ առաքելական Ս. իքարներուն ալ Մխիթարեանց
դէմ ըլլալը, որոնց առջինը կը դնէ Պետրոս. Մաւրին՝ ըսե-
լով որ Հ. Փիլիպպոսին վարդապետութիւնը դատապար-
տեց. բայց տեսան վերը թէ Հ. Փիլիպպոսի անունը
որոնք զրեր են այն դատապարտուած վարդապետու-
թեանցը վրայ։ Պետրոս. Մաւրին կարճ մը անցնելէն
ետքը, Պետրոս. Ֆոնդոնին Բրոբականտայի գրած թղ-
թերը կը յիշէ, անտարակոյս Յօն Կասպարոն Հռով-
մայու Էմինարիոյէն որ հանեցին, Բրոբականտայի
ծածուկ դիւանը մտած Հոն կարդացած պիտոր ըլլայ
ան թղթերը, բայց մեզի որովհետև անմատոյց է ան
դիւանը, մենք իրեն առ Պետրոս. Աղոնց Աբբահայրը
1810ին օգոստոսի 10ին գրած թուղթը նայինք թէ ինչ
կը գրէ. "Դանք որ, կ'ըսէ, իմ պաշտամանս մէկ մեծ
„ պարտքէն պակսած կ'ըլլայի թէ որ անմեղութիւնը
„ պաշտպանելու՝ խաղաղութիւնը և եղբայրական սէրը
„ պահելու համար ձայնս բարձրացուցած չըլլայի տգէտ
„ ներուն և կուսակցութեան հոգւոյ գերի եղածներուն
„ դէմ։ Զեր Պետրոս. Տերութիւնը վստահ ըլլայ բոլորո

„ վին իմ անկեղծ սիրոյս և համարմանս վրայ՝ զոր ու-
„ նիմ Ձեր ամենառաքինի կրօնաւորաց և եղբարց
„ վրայ, անոր համար չեմ դադրիր յանձնելու զիս ա-
„ նոնց սուրբ աղօթիցը ինչպէս բոլոր ատ Ձեր միաբա-
„ նութեանն ալ...„ : — Ուս ասանկ :

Գանք Գերպ. Գրիգորիին որ 1820 հոկտեմբեր 26ին, բոլոր անանուն նեանց առջին իր Մխիթարեանց համար մինչև ան ատենը խաբուիլը խոստովանելէն և անոնց ամենուն իր վրան իյնալովը անանունին ըսած ան թուղթը գրելէն ետև, ալ տարակոյս չմնար որ ալ Մխիթարեանց դէմ եղեր է. նայինք անանկ է նէ անկէց ետքը 1821ին յունուարի 10ին գրած թղթին մէջ որ կը գրէ սուրբ Յոզոլվքին ինչ կ'ըսէ անոնց դէմ. „Շատ բռնադատեցին զիս, կ'ըսէ, Գրոբական-
„ տացի տեարքը և գաղատացի պարոնները որ արգիլեմ
„ զինքը (Ինձիհեան Հ. Գուկասը) հրապարակաւ
„ պատարագ չիզրուցելու. պատճառանք բերելով որ ատ
„ բանդ ուղղափառաց նոր թշուառութեանց պատճառ
„ կ'ըլլայ տէր, որովհետև, կ'ըսէին, ինքը գլխաւորն է
„ ան քահանաներուն, զորոնք տերութիւնը որոշեր էր
„ աքսորելու... որոնց երբոր պատասխան տուի՝ թէ
„ սուտ է, տերութիւնը ոչ երբէք որոշեր էր զինքը աք-
„ սորելու, և ես իբրև արդար դատաւոր չեմ կրնար ա-
„ ռանց յանցանքի արգիլել զինքը պատարագէ, գացեր
„ Գաղղիոյ դեսպանը մէջ ձգեր էին ստիպելու զիս ալ,
„ եկեղեցեաց մեծաւորներն ալ որ թող չտանք անոր
„ հիչ մէկ եկեղեցի մը պատարագ ընելու...: Հաղիւ
„ թէ աս կատակերգութիւնը ըմբնցաւ չըմբնցաւ, եկաւ
„ ետևէն Մխիթարեան Հ. Գաւթինը որ տերութենէ
„ Գերպ. Մըսրլեանին հետ հինգ աքսորեալ քահա-
„ նաներուն մէկն էր...: Այսոր գալը իմացուածին պէս՝
„ խռովութիւնները նորոգուեցան. թէպետ և երկայն
„ չքշեցին. որովհետև այնչափ հլու գտնուեցաւ խեղճ
„ կրօնաւորը, որ ըսուելուն պէս իրեն թէ իր տարաժամ
„ դարձը կրնայ աղգին մէկ ինաս մը բերել, մէկէն ի մէկ
„ նաւ մը մտաւ գնաց նորէն իր աքսորանացը տեղը...:
„ Լկան հասան 'ի Կոստանդնուպօլիս Հ. Փիլիպպոս
„ Թերզիմանեան և Հ. Կարապետ Կասյեանն ալ. աս
„ երկու Մխիթարեանները՝ կրնամ ըսել՝ որ են երկու

„ կատարեալ կրօնաւորներ առանց պակսութեան, որոնք
„ ծածուկ փախեր էին որ չըլլայ թէ վիճելու համար
„ Լէնիսաքու երթալու ստիպուին, և ուր որ գացին
„ ասոնք՝ իրենց վանական բարեպաշտ վարքովը ի շինու-
„ թիւն եղան հաւատացելոց . . . : Հոս երբոր հասան՝
„ շուտ մը ինձի եկան ներկայացան և սովորական իշխա-
„ նութիւնները կը խնդրէին խոնարհութեամբ. չէյտէի
„ ինչ պատասխան տամ իրենց. ըսի որ երթան սներ նին
„ նստին . . : Հետեւեալ առտուն այսինքն անուս 8ին ինչ-
„ ծի կանչեցի փոխավիքարը տեր Յ. Ղ. և տեր Գ.
„ Փ. և Պ. Գ. խորհրդակցելու իրենց հետ թէ ինչ
„ պիտոր ընենք աս Մխիթարեանց. իրեքը մէկբերան
„ կանչեցին թէ պէտք չէ առաքելութեան մէջ ընդունել
„ զանոնք. պատասխան տուի իրենց. Բայց ասոնք ան-
„ ստգիւտ կրօնաւորներ են, և այն . . . և թէ չեմ կըը-
„ նար ես զատոնք առաքելութենէ դուրս ձգելու առանց
„ դպչելու սուրբ Յողովին իրաւանցը և սուրբ Գահին
„ իշխանութիւնը բռնաբարելու . . . բայց պարապ տեղը
„ եղաւ աս ամէն պատճառները առջևնին դնելս. վեր-
„ ջապէս պատասխան տուին՝ թէ չենք կրնար բնաւ
„ նորէն տեսնալու զանոնք առաքելութեան պաշտօնին
„ մէջ „ : — Այս է ահա Գերպ. Վարդապետին Մխի-
թարեանց դէմ ըլլալը :

Բայց աղէկ մը հասկընալու համար թէ առաջ ալ ետքն
ալ ինչպէս ճանչցեր էր ինքը Մխիթարեանները և
անոնց հակառակորդները, և ինչ հոգւով կը պաշտ-
պաններ զՄխիթարեանները, լսելու է իրեն 1816 հոկ-
տեմբերի 10ին գրած թուղթը. " Լթէ սուրբ Յո-
„ ղովքը, կ'ըսէ, անանկ ճանչցեր է կամ թէ որ ճանչնայ
„ թէ Մխիթարեանները իրաւցընէ հերետիկոսու-
„ թեան աղտ մը ունին, կամ մոլար սկզբունք մը (զորն
„ որ չեմ հաւատար, և կ'ըսեմ ալ թէ որ անանկ են նէ ոչ
„ հերետիկոս միայն այլ և անօրէն ալ են և ստերդումն)
„ ան ատեն կը խնդրեմ որ յայտնի զրուցի ինծի, որպէս
„ զի իմացուի, որ ես կուսակցութեամբ կամ ուրիշ
„ երկրորդական վախճաններու համար, չէ նէ մի արդ-
„ արութիւնը, ճշմարտութիւնը և անմեղութիւնը
„ կը պաշտպանէի 'ի նոսա առանց մարդկայն սկնա-
„ ռութեան :

„Բայց կը յուսամ որ աս յարգելի կրօնաւորները
„ինչպէս որ իրենց վարուցը կողմանէ անսատգիւտ, նոյն-
„պէս ալ իրենց սուրբ հաւատոցը կողմանէ ողջամիտ և
„անթերի են։ Եւ այն ամենայն տարաձայնութիւնները
„որ իրենց ու աշխարհական գլերին մէջը կան՝ ուրիշ բա-
„նէ առաջ չեն գար, բայց անկէց՝ որ Մ՝խիթարեանները
„իրենց ուղղափառ ազգայնոցը հետ միատեղ կ՝ուզեն
„Հայ ուղղափառ ըլլալ։ Իսկ մէկալնոնք լատին կամ
„կէս լատին ուղղափառ, որովհետև աս եռքիններս ա-
„ղէկ գիտեն՝ որ ուրիշ կերպով պատիւ չեն կրնար գտնել
„ազգի մը մէջ, որ բոլորովին Հայ է, թէպէտ և ուղղա-
„փառ։ Բ՝ էր, կ՝ըսեմ, պատճառը աս երկու կողմանց
„մէջ եղած տարաձայնութեանցը, որ չէ թէ ինծի միայն
„յայտնի է, հապա անոնց ամենուն ալ, որ մէկ շահ մը
„ջունին կամ չեն ուզեր ունենալ. վասն զի իրաւն ալ աս
„է՝ որ առջիններուն Ճամբան հերձուածող և հերետի-
„կոս Հայոց դարձը շատ կը դիւրացընէ. իսկ մէկալնոնց
„ուզածը մեղի ալ շահաւոր է, այսինքն լատին եպիս-
„կոպոսին և գլերին. բայց ինչպէս որ կարծեմ՝ արդա-
„րութիւնը կը պահանջէ որ հոգւոց դարձին անխառն
„բարին գերազանց պիտի համարինք քան զբարին որ
„մեր օգտին և շահուն հետ խառն է „։

Հաւասիկ Գ՝եր. Գ՝ոլէսիին Մ՝խիթարեանց հետ
ունեցած բարեկամութիւնը առջինն ալ վերջինն ալ, ո-
րով կ՝ամացուի միանգամայն թէ դարուկէս կաթոլիկ
ազգերնուս մէջ եղած տարաձայնութեանցը և խռո-
վութեանցը ի՞նչ է եղեր բուն առաջին և վերջի պատ-
ճառը, և ոչ։

Ակնարկենք որ հիմակուան առաքելական Ալ ֆաբ Գ՝երպ-
Ամբրոյին ալ Մ՝խիթարեանց դէմ ունեցած հակառա-
կութեանը համար ալ, զորն որ անոր շինած գիրքովն ալ
կ՝ուզէ ցուցընել անանունը (սուտ իրաւ՝ մի՞ հարցըներ
հերիք է որ երեսի մը թիւ գրեր է), պէտք է մի խօսք
ընել, որովհետև ամենուն յայտնի է. բայց որպէս զի
չկարծէ թէ հիմայ ատ գրքին պատճառաւը նոր բարե-
կամ եղեր է Մ՝խիթարեանց, իրեն 1851 դեկտ. 13ին
գրած թղթին մէկ խօսքը բերենք հոս որ կ՝ըսէ.
“Ալենետիկեան Մ՝խիթարեանց “ միաբանութիւնը,
„իմ՝ կարծեացս կէօրէ սահմանուած է կաթոլիկէ-

„ զեցոյ և ամէն արևելեան քրիստոնէից մեծամեծ ծա-
„ ռայութիւններ ընելու համար „ :

Այսոնք են ահա առաքելական Այրարատեանց Մխի-
թարեանց դէմ ունեցած հակառակութիւնը , որով ան-
անունին զլխիվար տրամաբանութեանը կէօրէ հաստա-
տեր են Մխիթարեանց հերետիկոս , չար , խաբեբայ ,
խռովարար և ուղղափառութեան վնասակար ըլլալնին :

Դանք հիմայ աղգային փոխավիճաբանութիւն . տարա-
կոյս չկայ որ անոնցմէ ոմանք մանաւանդ վերջինները
անանունին ըսածին պէս շատ աշխատեր են շատ քրտներ
են . բայց գիտէ՞ս ինչու . — որպէս զի Մխիթարեանց
հիմը փորեն . անոր համար ալ ասուած չէ յաջողած ,
աշխատանքնին ընդունայն եղեր է . խեղճ Դեր . Աշգեր-
ան ալ առջի բերանը քիչ մը ատ ընդունայն աշխատութիւնը
ունեցեր է , բայց իր եղբայրակիցները վերջապէս պատ-
ճառ եղեր են աչքը բացեր են տեսնալու և ճանչնալու
ճշմարտութիւնը , և վկայելու Մխիթարեանց ուղղու-
թեանը և օգտակարութեանը , ինչպէս ուրիշ տեղ
պիտոր տեսնանք : Դակ առջի փոխավիճաբանները , Աթա-
նաս վարդապետը , Սահակ վարդապետը աղէկ կ՚ըլլայ
որ լռենք , չէ նէ անանունին բանը շատ գէշ է , կը վախ-
նամ՝ որ ամէնը երեսը վար չառնէն :

Հասանք առաջին նախագահ Դեր . Գրիգորնին .
ան խեղճն ալ առաջները սխալեր է , գիտեն ամէնքը
ինչպէս որ եռքի դարձին ալ՝ Սողոմէն Պողոս ըլլալուն
անանունն ալ ամէնն ալ կը վկայեն , յայտնապէս տե-
սած ըլլալով : Դակ Պողոսին նորէն Սողոս ըլլալուն կար-
ծեմ անանունէն զատ ուրիշ վկայող մը չկայ . իրեն մինչև
եռքի տարուան գրած թղթերն ալ հակառակը կը զը-
բուցեն . թերևս անանկ դարձի եկողներէն եղած պիտի
ըլլայ խեղճը , որոնք իրենց մեղքէն չեն կրցեր վազ
գալ :

Դակ ծերունի Դեր . Մարուշը թէ և թշնամի ալ
եղած ըլլայ Մխիթարեանց , թէ և իր այն մոլորիա-
վնասակար անուանեալ գրուածքով՝ անանունին ըսածին
պէս՝ մահացու հարուած մին ալ տուած ըլլայ անոնց ,
զորն որ իրենք չեն գիտեր , բայց կրցեր է գէթ չափաւո-
րել իր հակառակութիւնը . որ մինչև վերջը թէ սրտանց
ալ չէ նէ , բայց արտաքուստ սիրով և քաղցրութեամբ

վարուելով հետեւինին, զիրենք ալ ազգին ալ գոհ ըրեր է. և թէ ինքը ինքնիրեն մնալու որ ըլլար, ոչ գիտէ գեռ ինչ՞ը ալ կ'ընէր։ Իսկ որ օրէնքն քալած խօսքերուն նայինք, շատ բան կը զրուցուի՝ որ խեղճ ծերը զրուցած ըլլայ գանգատելով, բայց մենք անանկ խօսքերուն հաւատալ չենք ուզեր, և ոչ ամէն լսածնիս անանունին պէս իբրև սուտ մէջ բերել, ապա թէ ոչ իրեններէն կը պատմեն թէ յանկարծական մահուանը պատճառ իր մէկ խաբուիլը ու սխալելն եղեր է, զորն որ յուսա-հատաբար ձեռուընները գլխուն զարնելով խոստովաներ է, կ'ըսեն, տեսնող ու լսողները։

Շատ ցանկալի էր մեզի որ հոս կարդինք ըմբնցը-նեինք մեր խօսքը աս գլխուս վրայօք. բայց անանունը այնպէս խօսքերով կը սարսի ու կը բռնադատէ զմեզ, որ թէ պատասխան չտանք, Մ՝խիթարեանները յանցաւոր պիտոր համարի իր խելքովը. իսկ թէ շտկէ շիտակ պա-տասխանը տանք, դարձեալ յանցաւոր, վասն զի անանկ մարդու կրնայ դպչիլ խօսքին ծայրը, որուն դպչիլը մեծ յանցանք կը սեպէ։ Ի՞նչ պատճառաւ խեղճ Մ՝խիթա-րեանք դարձեալ երկու սրի մէջ են, խօսին՝ յանցաւոր, չխօսին՝ յանցաւոր։ Կ'ըսէ անանունը թէ Մ՝խիթա-րեանց Ջատագովութիւնը նոր աստիճանաւոր մը ըսե-լով Գ՝երպ. Հասուն նախագահը կ'իմանայ ու կը նա-խատէ, բայց կարծեմ որ նախատինքի շուք մէն ալ չի կայ հոն տեղը։ Ի՞նչ է վերջապէս Ջատագովութեան ըսածը (էջ 18) "Իսկ որ այս օրուան օրս, կ'ըսէ, մէկնոր պաշտօնակալ մը ուզենայ տարակոյս հանել Մ՝խիթա-րեանց հաւատքին և գործոցը վրայ, պէտք է որ ըսածը ցուցընէ անոնց գործքերէն ..." Ի՞նչ խօսքս կարծենք ա-նանկ երաւունք մէն է, որ մարդ մարդու բնաւ չկրնար զլանալ. բայց թէ որ պիտի ըսէ անանունը թէ ատ խօսքէն աս կ'ելլայ որ՝ ուրեմն նախագահը թշնամու-թեամբ կը զրպարտէ զՄ՝խիթարեանները ու դէմ է անոնց և թշնամի. բայց ասոր համար ալ անանունը պէտք չէր սրդողեր. վասն զի ինքը կ'ըսէ (էջ 227) որ ատ պաշտօնակալը Մ՝խիթարեան ամբարտակէն քար մը խլելը երեն պատիւ կը համարի. և (էջ 215) գա-ւառական Բարիզեանն տէր Մ՝խիթարեանց թշնամեացը կարդը իբրև մեծ ոսոխ մը կը հանէ զանի։ Հիմա ոչ

կընայ ըսել թէ այն պաշտօնակալը Մխիթարեաններ-ը իբրև աղէկ մարդիկ ճանչնալով կ'ատէ ու կը հալա-ծէ. հապա յայտնի է որ գէշ և վնասակար ըլլալուն համար. և այն մարդուն որ զմէկը չար և վնասակար կը ճանչնայ ու առաքինութեան համար կ'ատէ, պաշտօն մատուցանելով աստուծոյ, նախատինք մը պիտի չսե-պուի չարին ու վնասակարին թշնամի ու հակառակ ըսուիլը կամ ճանչցուիլը, չէ նէ հակառութեան մէջ կ'ինանք. վասն զի ըսել է թէ ըրածը հէմ աղէկ է հէմ գէշ. աղէկ է՝ որ կ'ընէ. իսկ գէշ, որ զրուցուիլը կամ իմացուիլը չուզեր։

Ուրեմն անանունին վկայութեամբը և խոստովա-նութեամբը Պերպ. Հասունը Մխիթարեանց ամ-բարտակը փլցընելու ջանացող հակառակորդ և թշնամի է եղեր. ասա աղէկ միտք պահէ անանունը որ եռքը պէտք է։

Հիմա նայինք թէ Մխիթարեանց յանցանքը ու գէշութիւնները ինչ են եղեր, որ անանունին ըսած այդ կատաղի հակառակութեան ու թշնամութեանը արժանի եղեր են։ Անանունը խեր մը շինծու՝ օդէն ժողվուած խօսքեր մէջ կը բերէ, զորոնք իրեն սովորական անժխտելի յուցմունքներովը, այսինքն շատ մը իր բերնին վայլած ածականներով միայն կը հաստատէ. բայց ես կարծեմ որ առջի յանցանքնին այն եղած պիտի ըլլայ, որ իրենց գլուխը՝ հիմկու աբբանին ամենայն սիրով ջանացեր է կրցածին չափ իրեն այն աստիճանը ելլալուն, ինչպէս դեռ կը խօսուի ազգին մէջ՝ չիյտեմ գովելով մի, որ Մխիթարեանները առանկ միամտաբար խաբուեր են ի նախատինս իւրեանց։

Բայց տեսնանք ինքը անանունը ինչ կ'ըսէ. Սոմալեան աբբահայրը խեր մը պարսաւելէն ու գեանէ գետին զարնելէն ետքը՝ յանկարծ դարձի գալով (էջ 134) կը սկսի գովութիւն մը ընել, որ անոր օրը Մխիթարեանք իրենց սկզբունքները չէին սերմներ և խաղաղութեամբ կ'անցնէին օրերը. որով ըսել կ'ուզէ, ինչպէս կ'ըսէ ալ յայտնի, որ Հիւրմիւզեան աբբային օրը նորէն խռովութիւնները սկսան։ Անանկ է նէ տեսնանք Սոմալեանին մեռնելէն ետև ինչ նոր բաներ ըրեր է, Հիւրմիւզեանը՝ որ ատ խռովութեանը պատճառ եղեր

է։ Վարժարաններուն բացումը պիտի ըլլայ անտա-
լակոյս. ուսկից այնչափ խռովարարներ կ'ելլեն կոր կ'ը-
սէ. բայց ամէնը գիտեն որ Սոմալեանին օրը բացուե-
ցան վարժարանները, և Սոմալեանին օրը մուրատեան
վարժարանն ալ Գրիգոր Պապին օրհնութեամբը Փա-
րիզ փոխադրուեցաւ։ Ան չէ նէ՝ Հ. Կերսեսին Հայ-
աստան պտըտիլն ու անանունին խելքին կէօրէ Հայոց
հետ ի հոգևորս հաղորդակցութիւն ընելը պիտի ըլ-
լայ։ Բայց զան ալ Սոմալեանը ինքը խաւրեց, և 1843
տարիէն մինչև 1847 կը պտըտէր խեղճը, և ոչ ոք լսեց
որ ուղղափառ մը մոլորեցուցած ու հերետիկոս ըրած
ըլլայ։ Ան ալ չէ նէ՝ Մ'ինասեանին՝ այն յայտնութեան
գրքին ըսած սոսկալի և այլանդակ ու կատաղի գազա-
նին Պօլիս գալը պիտի ըլլայ որ այնչափ վայ բերեր է
ազգին գլուխը։ Սակայն ան ալ 1845ին Սոմալեանէն
խաւրուեցաւ, որ մէկ երկու ամիս Պօլիս կեցած ժա-
մանակը Համազգեաց ընկերութեան աղաչանքովը կա-
նոնները գրեց, և ինքը ծերունի Գրիգոր. Մ'արուշին գի-
տութեամբը, Հաճութեամբը և յանձնարարական թղ-
թովը ելաւ գնաց Տրապիզոն դպրոցը բանալու, և սի-
րով ալ ընդունուեցաւ Գրիգոր. Սելլեան առաջնորդ
վարդապետէն, ինչպէս կը վկայէ իր մէկ թուղթն ալ
զոր 1846 ապրիլի 25ին իր մեծ բարութեամբը կը գրէ
առ Հիւրմիւզեանը, որ այն ժամանակը Պօլիս էր և
դեռ պատիւ ունէր անոր բարեկամութիւնը և սէրը
վայելելու, ուր կ'ըսէ այսպէս "։ Յանձն առնէք մեզ Հայ-
,, ցուածովք զՍ. Հ. Պետրոս միաբան և կրօնակից եղ-
,, բայր Ձեր եկեալ 'ի քաղաքն Տրապիզոն հաղորդս առ-
,, նել զՀայրենիս մեր բարեաց և օգտի Հնդկայնոյն բա-
,, րերարի և այլն. և Հայցեալ 'ի մէնջ տարածել զթեաս
,, խնամոց մերոց զնովաւ։ Ձեր այդ ինչ մեծ և ոչ օտար
,, 'ի փափաքանաց մերոց, առանց մանաւոր Հայցուածոց՝
,, մեք 'ի սէր միաբանութեանդ և 'ի շնորհս երեսաց
,, Ձերոց յօժարամիտ էաք մերոյսանն առաւել քան զոր
,, ինքն կարօտեր ցուցանել զսէր եղբայրութեան, զսը-
,, նամ և զձեռնտուութիւն, առ ի յանխափան յառա-
,, ջատութիւն այնպիսի փափաքելի բարեգործութեան.
,, քանի առաւել ապա այժմ զուն զործեմք նպաստել
,, նմա, զոր ոչ զուք եւեթ, այլ և Ամենաւորդ յանէն առ-

,, նէն մէջ. որոյ աղաղաւ անհոգ լերուք, զի յայսմ հետէ
,, մեք զոր մեզն պարտն էր առնել, ոչ հեղգանամք առ
,, 'ի բարգաւաճ ծաղկումն և 'ի պայծառութիւն վիճա-
,, կիս մերոյ ,, : Այս թղթիս խօսքերէն կ'իմացուի աղէկ
անանունին խեր մը ուրիշ ստերն ալ որ կը շինէ, թէ
առանց Ղեծերոն հրամանին, անձամբն գործէ մը համար
Մ'ինասեանը Տրապիզոն գացեր է եղեր :

Ինանկ է նէ ասոնք ամէնը Սումպէանին օրովը եղած
և Հիւրմիւզեանին աբբայ ըլլալէն ետքն ալ դեռ կ'եր-
թային կոր խաղաղութեամբ. ուրեմն իրմէն տրուած նոր
պատճառ մը չկայ այն փոփոխութեանը զոր ին որ կը
զրուցէ անանունը. անանկ է նէ պէտք է ուրիշ պատ-
ճառ մը փնտրուինք այդ փոփոխութեանը. և ահա կը
տեսնանք որ 1846 յուլիսին կը վախճանի յանկարծ Ծե-
ռունի Պ'երպ. Մ'արուշը, և անկէց ետքը կը սկսին ա-
մէն բան կերպարանափոխ ըլլալ : Հ. Կերսէսը 'ի Հայ-
աստան բաժանեալ Հայոց հետ մէկ եղած անտարբե-
րութիւն կը քարոզէ և ուղղափառները բոլոր կը մոլորցը-
նէ, (որոնց թէ որ մէկ հատը անուանելու ըլլայ անա-
նունը՝ մենք ալ բոլորը կ'աւտանք). նմանապէս զնոյնը
կը քարոզէ Հ. Մ'ինասեանը 'ի Տրապիզոն, և ապրս-
տամբութիւն ալ սորվեցընելով ժողովրդեանը իրենց
առաջնորդին դէմ, կը խռովէ բոլոր քաղաքը. և հոն
ալ Համագգեաց ընկերութիւն կը հաստատէ, որուն
սուտ ըլլալը բոլոր քաղքացին կը վկայէ : Պարժարան-
ներէն կը սկրսին անկրօն, անառակ, անզուսպ սրիկա-
ներու խումբեր գալ, և բոլոր Մ'խիթարեանները որ
քիչ շատ ազգին օգտակար և բարեք ընող կը Ճանչցը-
ւէին, և Յ.սայեան Հ. Կարապետ վարդապետին պա-
տրիարքութեան ժամանակը վայելած խաղաղութիւն-
ներնուն համար չէ թէ միայն Պոլսեցիք, այլ և Հռոմ
Սրբազանը կ'օրհնէր զիրենք, անկէց ետքը կ'ըլլան մէյ-
մէկ դև, խռովարարաց գլուխ, Հռովմայու դէմ դրօշակ
բացող, և տերութեան դէմ ապստամբութիւն սորվեցը-
նող : Այս աս յանկարծական փոփոխութեան պատճառը
ի՞նչ է կ'ըսես նէ՝ անանունին վերի ըսածը հոս հիմա
միտդ բեր թէ այն պաշտօնակալ անձը Մ'խիթարեան
ամբարտակին մէկ քար մին ալ խլելը իրեն պատիւ կը
համարէր, և կ'իմանաս որ հարկաւ պէտք էր ուրեմն որ

Մխիթարեանները փոխուէին անանկ դէշ ըլլային, որ պէս զի էն թէ միայն ամբարտակին մէկ քարը, հապա բոլոր ամբարտակն ալ կործանի իյնայ և հիմունքն ալ քանդուին. ասոնք իմ խօսքերս չէն, հապա անանուն ընծաներէն կ'ելլայ, և թէ որ յանցանք է ըսելնիս՝ պէտք է ներէ մեղի, վասն զի ինքն ստիպեց զմեզ որ գրուցենք։ Ի՞նչ զարմանք անանկ է նէ՝ որ ուր հակառակութիւն կայ և թշնամութիւն, հոն խռովութիւն ըլլայ, և ոչ խաղաղութիւն, որ միայն սիրոյ ծնունդ է։ Սիրը չէ՞ մի որ ամէն խռովութիւն կը հանդարտեցնէ, դէշը ևս աղէկի կը փոխէ, և մինչև ծածկէ զբաղմութիւն մեղայ։

Հիւրմիւզեանը սուտզրուց, կեղծաւոր, խաբեբայ և նենգաւոր ցուցընելու համար՝ անանունը Համազգեաց ընկերութեան պատմութեանը սկիզբը, մէջը և վերջը բոլոր մէկմէկու կը խառնէ և շատ մը թղթեր կը ձևացընէ որ Հիւրմիւզեանը ծածուկ գրած ըլլայ Համազգեաց ընկերութեանը, որոնցմով անանունը ինքն իր նենգաւոր խաբեբայութիւնը ամենուն յայտնի կ'ընէ։ Վասն զի Հիւրմիւզեանը մէկ թուղթէն զատ որ գրեր է 1847 տարւոյն յունուարի սկիզբը, ուրիշ գրած թուղթ չունի։

Այս ընծաներէս կ'իմացուին անանունին Համազգեաց ընկերութեան պատՀառաւ ալ Մխիթարեանց դէմ ըրած զրպարտութիւնները և նենգութիւնները, որոնց աւելորդ կը սեպենք մէկիկ մէկիկ պատասխան տալ. մանաւանդ որ անոնցմէ ալ կրնայ անանունը նոր զրպարտութեանց առիթ մը առնել իրեն, ընկերութիւնը պաշտպանել կ'ուզէն ըսելով. թէպէտ և Մխիթարեանք բերնով ալ գրով ալ քանի քանի հեղ բողոքեր են ըսելով, թէ ատ ընկերութիւնը մեզնէ դրուած չէ, մենք չենք խառնուիր, ինչ կ'ուզէք ըրէք, բայց բաւական չէ եղած։ Կարծէ թերևս անանունը որ աշխարհականները ինքիրեննուն բան մը չեն կրնար ընել կամ գրել, ոչ զգացմունք ունին, ոչ կամք, ոչ սիրտ, ոչ պատիւ և ոչ կիրք, և ոչ ալ խելք. զորն որ թէպէտ Մխիթարեանք ալ չունին, կ'ըսէ, բայց ասանկ իրեն պէտք եղած տեղուանքը՝ իրենինէն քիչ մը կ'ուզէ տալ անոնց, որ խրատտու և գրգռող ընէ զիրենք ժողովրդեան։

Այս իրեն յատուկ տրամաբանութիւնովն է որ այն

ծանր զրպարտութիւն ալ կ'ընէ Մխիթարեանց վրայ որպէս թէ եպիսկոպոսներու ըլլալը չուզենալով ժողովուրդը զրգռեր ոսք հաներ են սուրբ Պահոն հրամանացը դէմ դնելու և Հռովմայու մեծ նեղութիւն հասցնելու։ Բայց ծանր զրպարտութիւն մը մէկ կրօնաւորական ընկերութեան մը վրայ ընելու համար նայինք ինչ փաստ ինչ վկայներ ինչ ապացոյցներ մէջ կը բերէ։ Մտիկ ըրէք ըսածը, թէ որ կրնաք նէ. Մխիթարեանք կ'ըսէ (էջ 193) ետևէ էին ու կը ցանկային եպիսկոպոսութիւն և նախագահութիւնը ձեռք ձգելու որ իրենց վախճանին հասնին և բոլոր ուղղափառները միացընեն բաժանեալ Հայոց հետ, ի հարկէ բաժնելով Հռովմէական սուրբ եկեղեցիէն. չէ նէ ուղղափառները Հայոց հետ պիտի չըսեր, հապա Հայերը ուղղափառաց հետ, որ ատիկակ իր ալ իրեն ընկերներուն ալ պարտք պիտոր ըլլար՝ թէ որ աստուծոյ և եկեղեցւոյ ճշմարիտ նախանձը ունին նէ։ Այս որովհետև, կ'ըսէ, չյաջողեցաւ աս իրենց բաղձանքը, անոր համար կատղեցան ու ամէն ջանք հնարք բանեցուցին որ արգելեն տան։ Լսեցէք մի աս աղուոր փաստը, մտիկ ըրէք հիմայ (էջ 235) զրուցածն ալ. Մխիթարեանք, կ'ըսէ, քանի որ Լիմիածնայ կաթողիկոսութեան և Պոլսոյ պատրիարգութեան աթոռին վրայ կը նային նէ՝ բերներնուն ջրերը կը վազէ, անոր համար կ'ուզեն ուղղափառները Հայոց հետ միացընելու որ կարենան այն աթոռներուն հասնիլ։ Կ'ընդունի ուրեմն որ Մխիթարեանները Հայոց հետ միաբանելու որ ըլլան, այն աթոռներուն կրնան հասնելու։ Բնքը դարձեալ ուրիշ քանի տեղ ալ կը զրպարտէ, որ Մխիթարեանց ժողովուրդը անտարբեր է, խտրութիւն չի դներ. անանկ է նէ պատրաստ է իրենց ետևէն երթալու։ Ուրեմն ինչու համար կեցեր են ու չեն առներ իրենց ժողովուրդը ու երթար որ պատրիարգ ըլլան, կաթուղիկոս ըլլան, այլ և այլ քաղաքներու՝ չէ տասը տնուորցիի, հապա հազարաւոր տանց վրայ եպիսկոպոսներ ըլլան. և թէ որ աս ասանկ գիտնալով դարձեալ կեցեր են, ուրեմն անանունէն ալ, ու բոլոր իր եղբայրներէն ալ շատ եւելի ու շատ հաստատ ուղղափառ են եղեր, որ այնչափ իրենց ցանկալի փառքը պատիւը արհամարհելով կեցեր անանունէն

պէս մարդիկներու նախատինքը, թուքն ու մուրը կ'ընդունին ու կը հալածուին։ Եւ թէ որ ասանկ ապացոյցներով զրպարտութիւն ընելը իրաւունք է նէ՝ ինչ կ'ըսէ անանունը թէ որ մենք ալ իրեն ըսածին հակառակը դառնանք ըսենք՝ թէ ազգին միութիւնը չուզողներն ալ անոր համար չեն ուզեր, որ չըլլայ թէ իրենց նախագահութեան և եպիսկոպոսութեան յոյսը օդը ցնդի, որովհետև աղէկ գիտեն որ հայերէն քերականութիւնը, բառգիրքը և պատմութիւնը այնչափ նախատող մարդիկներուն այն աթոռներուն համնելու շատ յոյս չի կրնար ըլլալ։

Բայց անանունը վարպետորդի է, խօսք մը ըսած ատենը ետին առջին աղէկ կը մտածէ ու անանկ կ'ըսէ, անոր համար նայէ հոս ալ ինչ դուրս կը հանէ (էջ 233). կ'երթային կ'ըսէ, Հայոց կողմը, բայց կը վախնան որ սուրբ Պաղարու կղզին ձեռուընուն կ'ելլայ, վասն զի Պենետիկու Հասարակապետութիւնը զիրենք ուզղափառ Ճանչնալով տուեր է իրենց, և ինչպէս կրնան թողուլ զանի։ Օ արմ՛նք. հապա ինտրա երթալու ատենին ինչպէս պիտոր թողուին. հոս կ'երևնայ որ անանունը կրօնքի նախանձով սատիկ վառուած վերացեր է, ու ըսածը մոռցեր կամ չիմանար։

Բայց որո՞նք էին անանկ է նէ և ինչո՞ւ դէմ դրին եպիսկոպոսաց ըլլալուն։ Պտիկա անանունը ուրիշի հարցընելուն թող ինքնիրեն քիչ մը սկսի մտածել, ինչպէս խաչելութեան առջին և ձեռքը կուրծքին դրած քնոնէ աղէկ մը իր խիղճն ու դատէ զինքն անանկ՝ ինչպէս որ Պ՝խիթարեանները կը դատէ, և կարծեմ որ դիւրաւ կը գտնայ ան ատենը ինչուն ալ, որոնքն ալ։ Իսկ թէ որ դեռ չգտնայ, այն Յիսուսեանը՝ որ սուրբ Պաղարու վանքը կը խաւրէ, իրեն թող կանչէ, որ իրեն չէ ուղղուեայ, հապա քառասնօրեայ ու աւելի ալ կրթութիւն մը տայ, թերևս անիկայ կրնայ իմացընել տալ իրեն. միայն թէ Վարաւանի համար ըսուածը (էջ 243) իրեն վրայ չվախցուի։ Մողովուրդ ըսածդ ոչխարի սիւրիւ մին է, մանաւանդ մեր ժողովուրդը, ինչպէս օտարները միշտ վկայեր են, որն որ թէ որ քաղցրութեամբ ուղղելու ըլլաս, խելօքիկ և սիրով ետևէդ կու գան, իսկ թէ որ խրտեցընես, վախցընես ու պալթան ձեռքդ առնես վրա-

նին վազեմ՝ աչուընին կը դառնայ, մէյմէկ առուծ կ'ըլ-
լան ու լեռ, ձոր, վիհ, գետ չեն նայիր, չըլլուելու բա-
ներ կ'ընեն։ Մ'խիթարեանները շատ թղթեր կրնան
ցուցընել անանունին որ ժողովրդեան առ ըրածին չհաւ-
նելով՝ հակառակը գրեր յորդորեր ու հանդարտեցը-
նելու նայեր են. թող կրնայ նէ ինքը անոնց դէմ
մէկ գիր մը միայն ցուցընէ. իսկ թէ որ մէկ քանի բանս-
արկու մարդիկներու զրպարտութեամբ Մ'խիթարեան-
ները իբրև տներու մէջ ժողովրդեան ֆիթ տուող տէր
կ'ուզէ յանցաւոր սեպել նէ, գիտնայ որ անանկ օգու-
մէջէն ժողված խոսքեր Մ'խիթարեանք ալ, ուրիշ-
ներն ալ, շատ լսեր են. բայց առանց օգով լեցուն գը-
լուխները միայն կրնան հաւատալ։

Բայց անանունին բուն կռուոյ նիւթերը ասոնք չըլ-
լան պիտոր, ասոնք երկրորդական բաներ են. իրեն բուն
կռուոյ նիւթը որ իրեն առ նախանձայոյզ գիրքը գրե-
լու պատճառ եղեր է՝ թէ որ մինչև հիմա կարդացածէդ
աղէկ հասկըցար նէ, և ինչպէս ինքն ալ յայտնապէս
կ'ըսէ (էջ 15), այլ ուրիշ բան չէ, բայց աս իրեք կտոր
բանս։ Ով Հայք ասօրուան օրս հերձուածող և հե-
րետիկոս են մի. — Ով հրաման կայ անոնց եկեղե-
ցին երթալու. — Ով հրաման կայ անոնց հետ հա-
ղորդակցութիւն ընելու յաստուածայինս։ — Իսկ արդ
Մ'խիթարեանք բանիւ և գործով ոչ երբէք աս իրեք
խնդրոյս վրայ ուրիշ ուղղափառ վարդապետներէն զատ
և օտար կարծիք և վարդապետութիւն ունեցեր են
կամ ունին բոլոր ազգին խղճին վկայութեամբը, և ս
նոյն իսկ Հայոց ազգին ալ գրով և բանիւ անաչառ և
անկեղծ վկայութեամբը, ինչպէս որ ըսինք վերը, և
զուր կը զրպարտե անանունը փոշոտած ծակերէ չգիտեմ
ինչ սուտ չարախօսութիւններ դուրս քաշելով։ Օ՛ի
յայտմ Հայոց խոսքը և վկայութիւնը աւելի կը զօրէ,
քան այն ամենայն տգիտութեամբ կամ չարութեամբ
զրուցուած և գրուած ամբաստանութիւնները, որոնց
զրպարտութիւն ըլլալը՝ մէկալ յայտնի ստութիւններն
ալ կը խայտառակեն, և որոնց պատասխաններն ալ շա-
տոնց տրուեր է սուրբ Աթոռին և լմընցեր։ Այս ասօրուան
օրս ամէն Մ'խիթարեանք երդում կ'ընեն՝ առ իրեք
խնդրոյն վրայ իրենց սուրբ Աթոռին հետ միշտ և կա-

տարեալ միաբանութեանը, և աշխարհքիս վրայ անանունն զատ մէկը չկայ անոնց ստերդում ըսող։ Այս ասիրենց անկեղծութեանը մեծ և միակ հաւատարիմ վկայ են՝ իրենց դար ու կէսի մէջ տպած բոլոր գրեանքն ալ, և ասբանիս համար իրենց ալ՝ անիմաստ մէկալներոց հետ աքսորուիլն ու հալածուիլը 150 տարուան ամէն հալածանքներուն, ինչպէս եղբի 1828ին ալ։

Մէկ բանով մը միայն Մխիթարեանք կը տարբերին անանունեաններէն, այն է ազգասիրութեամբ, զորն որ իրենք ալ չեն ուրանար, կը սիրեն ազգերնին և անոր սէրը սրտերնուն մէջէն չկրնար ելլալ։ Ինչպէս ինքը անանունն ալ (էջ 21) "Սրտերնուն մէջ, կ'ըսէ, չիյտեմ ինչպիսի մէկ կարեկցութիւն մը կայ իրենց հերձեալ համազգեացը վրայ...։ Բայց զայս սէրը՝ կարծեմ որ Պօղոս առաքեալ կը սորվեցընէ, որ իր ազգայնոցը Հրէից սիրոյն համար "Ուխտիւք խնդրէի, կ'ըսէ, ես ինքն նզովք լինել ի Քրիստոսէ վասն եղբարց և ազգակցաց իմոց ըստ մարմնոյ, որ են Իսրայելացիքն...։ Ինչու ուրեմն կը կանչուրտան անանունը որ Մխիթարեանք իր թուքը մուրը, անէծքը ունայնութիւնը յանձն կ'առնուն, ու այն աստուածային սէրը, զորն որ Քրիստոս սորվեցուց, առաքեալները գործքով քարոզեցին, և եկեղեցին ոչ երբէք արգիլեր է կամ կ'արգելէ, սրտերնուն չեն հաներ, այլ կը խոստովանին համարձակ, որ՝ ինչպէս հաւատքով և վարդապետութեամբ հռոմէականք են, Հռոմայ ընդհանրական սուրբ եկեղեցւոյն և սուրբ Լուսաւորչայ որդիք, անանկ ալ ազգաւ Հայկայ որդիք են, ազգերնին կը սիրեն, լեզունին կը սորվին, ծէսերնին կը յարգեն, նախնիքնին կը պատուեն, պատմութիւններնին կը մեծարեն, ազգային քերականութիւնները և բառգիրքները չեն ծաղրեր. կարձ խօսքով Գէր. Քորէսիին ըսածին պէս "Հայազգի ուղղափառ են և կ'ուզեն ըլլալ...։ Ընդանկ է նէ մէկ իրաւացի պատճառ մը չկրնար ըլլալ ասպարսաւագիրը հանելու, բայց եթէ նախանձ և ատելութիւն և կռուի գրգիռ վնտռելը։

Այս աղետալի կռիւներէն և մանաւանդ ասդժոխային դրքին գայթակղութենէն բոլոր հաւատք օրէնք բարձաւ գայթակղած ազգին երիտասարդներէն. եղբը կ'ելլէ կ'ըսէ ու կը գրէ անանունը որ Մխիթարեանք

կ'աւրեն կոր ազգը, տղաքը գլխէ կը հանեն կոր՝ հոս խօսքով, վարն ալ վարժարաններով. և թէ ազգին մեծերը զանոնք վերնտելու և անանունին հետ տեսնուելու են եղեր, (էջ 111, 112), որ լուսաւորուին՝ Մխիթարեանց գեղջուկութիւնը, մոլորութիւնը և տգիտութիւնը հասկընան. ինչպէս որ կարծեմ՝ Փարիզու Ը. քեպիսկոպոսն ալ հասկըցեր է։

Այս ո՞վ տեսեր, ո՞վ ըսեր է թէ ազգին մենծերուն և յանուանէ ազնուական Տիւզեանց տունը՝ իրենց դէմ գոցուեր է, և միայն Մխիթարեանք չորս դինին առեր են (էջ 111). մեծ մասին խոստովանահայրը՝ լիբանանցի վարդապետ մին է, և ամէն կարգի քահանայիցմէ ով որ կ'ուզէ՝ կ'երթայ, և կ'երթան և կը մեծարին կոր անխտրաբար. աս գիրքը չելած՝ ալ աւելի կու գային. հիմայ չուզողը պատճառը իր վրան փնտռելու տեղը, Մխիթարեանց զուրցելիք մը կը գտնէ կոր։ Եւ երանի թէ միայն Մխիթարեանց. ան անպարտ և միշտ յամենայնի բարիանուն տունը՝ Մխիթարեանց հետ մէկ ջուր կը լուան կոր, անոնց յայլ գլխէ քանի մը յաչաղկոտ թշնամիներուն կողմնակից ըլլալով, Մխիթարեանց ամէն սուտ զրպարտութեանց գիրենք ալ մասնակից և կռնակ և թև թիկունք ըսելով. որոնց յատուկ ջատագովութիւնը մեզի պէս խեղճ գրչին կարօտ չէ, և իրենց թերևս նուաստութիւն ալ համարուի՝ մեր անոնց այսպիսի ծանր դատին խառնուիլը. Մխիթարեանները ջատագովելով, անոնք ալ ջատագոված կը համարինք մենք, և մեր սիրոյ պարտքը իրենց ալ հատուցած։

Ընդանունը, ինչպէս կ'երևի, զինքը Հռոմայ սուրբ Աթոռին կամ Սրբազան Պապին տեղ դնելով՝ վերջաբանութեանը մէջ գեղեցիկ և ամենայարմար ոտանաւորներով կը ծաղրաբանէ, մանաւանդ թէ կը զեվզեկաբանէ, թէ ան իր մէխանայէ ելած հրաշալի գրուածին ո՞վ ինչ կարող է պատասխան տալու. բայց միանգամայն կը վախցընէ ալ որ մէկը չտայ, ապա թէ ոչ՝ կայ որ զինքը յաւիտեան կը ըռեցընէ՝ կ'ըսէ (էջ 245)։ Ո՞վ է եղեր ատ իր կատաղի անկիրաւ ընկերը, որ ըռեցընէ պիտի եղեր Մխիթարեանները իրենք զիրենք արդարացընելէն. ասանկ առանց խօսեցընելու կտրող կախող

բոնաւոր հիմայ ալ դեռ կայ եղեր, չիյտեինք։ Սակայն մենք կը կարծենք որ հիմկուց հերիք ու հերիքէն շատ առաւ պատասխանը. ինք չառաւ ալ նէ, հասկըցող ու հասկընալ ուզող անպաշար հասարակութիւնը առաւ. չէ մէկ քանի կտոր բանին, ու մէկալներուն՝ առ ալ անոնց նման է ըսելով փախուստ տալով, այլ բոլորին ալ. և չէ թէ խեղկատակութիւն և ստութիւն և հայհոյանք, այլ ծանրախօս Աշմարտութիւն, որ թերևս անանունին եւել ծանր դայ. բայց որչափ ալ ծանր ըլլայ նէ, սուրբ Պետրոս Աղկանդարացիին գաւազանէն ալ ծանր չէ, որ ամէն նախատանքի համբերեց, իսկ իրեն հերետիկոս ըսողին՝ ամենայն ուժով գլխուն կոփեցուց ու պատռեց։ Կարծենք որ ալ հերիք համբերեցին Մխիթարեանք հարիւր յիսուն տարի։ Ու մեր պատասխանն ալ՝ սանկ կտոր մը բան է ռամկին համար հիմկուհիմայ՝ միայն գլուխ պատռելու չափ, մինչև որ տեղն ի տեղը լիագոյն և իմաստնագոյն հերքումը՝ ըսածներնուս վաւերական գրերովը և վկայութեամբը՝ ելլէ, թէ որ ասանկ խենթ գրուածքը՝ ասկէ եւել հերքում կ'արժէ նէ։

Մինա անարժան, անվայելուչ և անտեղի խօսքերուն՝ մեզ ալ պատասխան տալ չիվայլեր. ինչպէս վերը ըսինք մէկուն մենծ քիթը կը խածնէ կատղած, մէկալին շաշի աչքը, մէկալին ակռաները դուրս ինկած թուք ցատքեցընող բերանը, և այլն։ Սակայն մէկ հատը քիչ մը եւել հասկըցընենք, որուն մէջ քիչ մ'ալ աւելի կ'երևի գրողին հոգին, և մէկ երկու հետաքրքրական գիտելիք ալ կայ։

Մխիթարեանց մէկուն հօրենական մականունը դժբաղդաբար Բաղրատունի է եղեր, (որ իտալերէն Bagratuni կը գրուի, ոչ Pacraduni, ընտոր տգիտաբար կը գրէ անանունը չորս տեղ)։ Ինչ ըներ մարդը, երբոր իր հօրը գրերուն մէջէն մայրը գտեր ու իրեն գրեր է վանքը անոր անունը ասանկ. Բաղրատունցի Կոստանի որդի Համբարձում, Թովփիլիոս կողմերէն Մոսկոֆի հողէն հոս Ստամբոլ եկած, Ցիւղեան մեծ Մէքայել աղային ձեռքը արհեստով զարփխանէն մնած, տուն տեղ եղած Ինթիմոսեանց փեսայութեամբ. (որ աս անունս ալ սխալ կը գրէ տգէտ անանունը Հանթիմո-

սեան ըսելով) ։ Մխիթարեանները զրպարտելէն ուրիշ բանի ալ քիչ մը ատեն ունենար ու կարդար նէ անանունը, կը տեսնէր որ ան խեղճ Մխիթարեանը միայն չէ Բագրատունի հոն ան երկիրները Մոսկոֆի տակ, հապա այլ ևս շատեր՝ մանր ու խոշոր Բագրատիոններ կան ։ Եւ ասոր համար՝ Մոսկոֆի Ռուսիա քաղքէն դուռը՝ իր անցագիրը քննող պաշտօնեայն հարցուցեր է թէ մեր Բագրատիոն Ճենէռալին ցեղէն ես հրամանքդ ։ Բայց ինչ և իցէ, ասա ալ մեծ հարկաւոր նիւթն է եղեր հաւատոյ, ուղղափառութեան, և Մխիթարեանց յայտնի հերետիկոսութեան և ապստամբութեան, և անոնց ախոյեան անանունը՝ զան ալ փլցընելու է եղեր. ուստի առ քեզի իրեք ջորս տեղ աղուոր գիւտին զմայլած կատակներ ։ Մեր թագաւորաց երորդ հարստութեան կամ ցեղապետութեան Ճիւղէն կ'ինջնայ եղեր ան Մխիթարեանը ։ Ան ցեղին Հրէից սրբազան տոհմէն ըլլալը գիտնար կամ միտքը դար նէ, հոն ալ խեր մը հրաշալի աստուածաբանութիւններ կըրնար ընել. մեղք ։ Բայց հիմայ սոսկ իբրև Բագրատունի ամբարտաւաններ կոկոզացերնստեր է եղեր Պողաղ Լիչին. չի մտածեր որ պէտք է եղեր դուրս ելլալ սոխասներն ալ աւելը, ասա դիս ան դին եւեր պակաս խոսելով պօշաղաղութիւններ ընել, մէկուն մէկալին ալ կեղծաւորութիւն ։ Յուսանք որ ասա անանունին դիրքէն ասկէց ետև ինքն ալ իրեն ինկած դասը սորված կ'ըլլայ ։

Սկսէ՛ի զատ, անանունեանց ասա դրուածքովը քարոզած ու սորվեցուցած խոնարհութիւնը՝ քաղցրութիւնը՝ հեզութիւնը բաւական սորվեցան օրինակ առին Մխիթարեանք. այսուհետև իրենք ալ պարտական են ի գործ դնելու անոնց. այսինքն է կրօնաւոր քահանայից աստուծոյ և արքայից և արքեպիսկոպոսաց՝ և ոչ մէկ անգամ իրենց աշտիճանին ու պատուոյն անունը տալէն ի զատ, ասա սիրոյ պատուանունները տալու. հերձուածող, հերետիկոս, սուտգրուց, խաբեբայ, նենգաւոր, խուրամանկ, կեղծաւոր, գայլ գառնազգեստ, անօրէն, անզգամ, մատնիչ, հալածիչ, ստերդումն, ամբարտաւան, անխիղճ զրպարտող զուրիշ քահանաները՝ զիրենք բարձրացընելու համար, տգէտ, անմիտ, անպի-

տան, անձնապարծ, խենդ, շաղփաղփ, լիրբ աներես, ու-
նացող անասուն, ապերախտ, գոշաքաղ, դատարկապորտ
սրիկայ, դատարկաշրջիկ, խռովարար, որոմնացան,
քսու, շոգմոգ, բամբասող, առասպելախօս և առասպել-
ներով զբօսող մարդը, պատառաբոյծ հացկատակ, գար-
շելի աղտեղագործ, գայթակղութիւն ժողովրդոց, և
այլն։ Այսոքիվ որ չի հաւատար նէ գիրքը բանայ՝ աւե-
լին կը գտնէ։ Այս ամենը, իր ըսածին կէօրէ
(էջ 36), հիմակուան բարակ քաղաքավարութեան էն
կակուղ բառերն են եղեր...։

Բագրատունին իր անուանը խեղկատակութիւնը,
թշնամանքը և հալածանքը իր եղբարցը հետ Մխի-
թարեան անունին հետ իրեն պատիւ կը համարի։ Որ
(քերականութիւն շինելու պարապեալ՝) երօսուն քառ-
սուն օրը հեղ մը հաղիւ մնէն դուրս կ'ելլէ, և տարին
հեղ մը կամ երկուք հաղիւ Պէյօղլու կամ Պալաթիա
կ'երևնայ։ Ինչպէս, իւր իսկ անանունին ըսելովը՝ ա-
նանկ մէկ ամենաբարեպաշտ և ճշմարիտ ուղղափառ
տուն մը ընորհք ու պատիւ ունեցեր է նստելու անար-
ժանաբար, ուր ամեն տեսակ քահանայի բաց է դուռ-
ը, և ամեն աշխարհական և վանական դէրը սիրով
կը մտնէ կ'ելլէ, մանաւանդ Պերպ. Ղախազահը և
իւր եղբայր Փաթրիքը. և հոն ահա այն հպարտ ամ-
բարտաւանն ալ պատիւ ունի իւր ձեռքը պագնելու,
որ Եւրոպա և Հռոմ և՝ աշխարհական մ'ալ չունի ատ
պատիւը։ Ազգին խերուն, և ազգը Ղախազահ և
Փաթրիք ունենալու համար Մոսկոֆստանի գայլերուն
և Ռեթրպուրկի սառնամանեաց մէջ, 1829ին ցուրտ
ձմեռին, ոչ իբրև ազգային գործակալին թարգման,
հապա ողորմելի ծառայի մը պէս անվարձ տապալտրկած,
և հոն՝ ազգին հիւանդ և անկարող գործակալին տեղը
երկու հեղ միամինաւորիկ կայսերական մեծ վէզիրին
առջին եղած և ազգին դատը խօսած, և ազգին փա-
թրիքխանէն իրեք չորս տարի ձրի ծառայած, և փա-
թրիքութիւնը Յարգ. ԱլեքսէրՁեան վարդապետին
ետև յանձն առնելու ազգին մենծերին աղաչուած և
հրաժարած, ասանկ ծերու մը՝ հիմայ հատուցումը աս
է եղեր անանունին։ Այս մէկ մանաւորին ուրիշ շատերն
ալ հասկըցիր։

Բայսանկ և սաղ նման և ալ գեղ ցոփաբանութեանցը պատասխան տալ չվայլեր. ինչպես նաև պատմական անտարբեր և տգիտական միայն սխալմանցը, ինչուք իւր իսկ Ֆռէնկերէն լեզուին և օրինաց՝ քերականական և տիմարական սխալներուն. զոր օրինակ (էջ 51) insigni (նշանաւոր) բառը յայտնապէս famaին (համբաւին) վրայ հասկընալուն տեղը՝ sanctitatisին (սրբութեան) վրայ կ'առնէ, ու կը ծաղրաբանէ՝ ինք զինք ծաղր ընելու համար։ Այս հոն դարձեալ տգիտաբար ծաղր կ'ընէ թէ մէկ վկայականին հէմ վերը հէմ վարը անունը չիդրուիր, որ աշխարհքի բան գիտցողները զիտեն թէ սրչափ կ'ըլլայ ամենօրեայ վկայագիրներուն մէջ, և նոյն իսկ եպիսկոպոսաց մասունքի և այլ իրաց վկայականներուն հէմ վերը անունին դրած է հէմ վարը ստորագրած. և հոն դարձեալ in sedis choro թաղուած ըլլալը Մխիթարայ՝ չի հասկընար որ բեռն է, որ սարկաւագաց պզտիկ դասի մը պես է և աբքեպիսկոպոս աբբայնի աթոռն հոն է. յատուկ բառ չըլլալուն՝ անանկով հասկըցուցած է։ Այս (էջ 52) dunque (ուրեմն) շաղկապը՝ մակբայ կը կոչէ. և monsignor բառին յօդ կը դնէ il monsignore կ'ըսէ. քերականութեանց այնչափ թշնամի եղող մարդուն զարմանք չէ. բարձրագոյն բաներէն՝ անոր ատեն չէ ուսեցեր. խելքը ծաղր ընելու տուած՝ ինք ծաղր կ'ըլլայ դպրատան տղոց պես։ Այս (էջ 226, 237) հինգ անգամ լատինելէն calidus ջերմ ըսելու տեղը, callidus կ'ըսէ, որ խորամանգ ըսել է, և լատինի սոսկ առոգանութիւն գիտցող տղան ալ չըներ ատ սխալը. իրեն ամենաձանձրալի ըսած Փոռէթթին ալ իրեն օգուտ չէ ըրեր։ Այս երախտագէտ պիտի ըլլամ, կ'ըսէ, Յիսուսեան վարպետիս, որ ինձ խրատ կուտար Callidus (խորամանգ) ըլլալու։ Այս խրատը աղէկ սորվեր ու պահեր է, բայց վարպետին սորվեցուցածը չէ։

Այսպիսի տղայական և ծաղրական բաներուն, սողոմոնեան խրատին հետևելով, թէ Մի՛ տար պատասխանի անմտին ըստ նորա անզգամութեանն, զի մի՛ լիցիս նմանող նմա, պատասխան տալ չուզեցինք. զի հարկ կ'ըլլար իրեն հաւասար իյնալու նուաստանալու, թէ և իր օգտին՝ զինքը քիչ մը իրեն հասկըցնելու համար, որ

զինքը ուրիշէն եւեւ բան մը համարեր է (էջ 113)։ Բայց ինչ ընենք որ այդչափ եղբայրսիրութիւն չունինք իրէն, ու ինք ալ անմտութիւն կամ հշութիւն կը սեպէ (էջ 114) եղբայրսիրութեան համար էնողէն հեռ էնողը. Թէպէտ Աբրահամը Ինդ ամենայնի ամենայն եղէ, կ'ըսէ, զի զամենեսին շահեցայց. և ո՞ հիւանդանայ, և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթագղի, և ոչ ես տապանամ։ և Ուխտաւք խնդրէի ես իսկ ինքնին նզովեալ լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց։ Այս կ'ըսեր և կ'ըներ զայս Պօղոս՝ Քրիստոսի նմանելով, որ իր բարձրութենէն նետեց զինքը վար Մոսէեայ դանչն, ինչաւ խոնարհեցաւ ինչուք մեր ինկած բնութիւնը՝ մեզ վերցնելու համար։ Սիրոյ համար ինչալ ըսելը՝ աս ըսել է. Տէ՜ղէնէլէն պէ՜ղէլի կ'ըսէ տաճկի առակն ալ. բառի խմաստակութեանը զէվզէկութիւն կ'ըսենք և ամօթ է. իսկ ինչողին կռնակին վրան ինչալու է եղեր՝ զինք ձգմելու և ջախջախելու՝ ըսելը, կամ զուրիշը կամ աւելի ստոյգ՝ ինք զինքը խենթ ցուցընել է։

Բայց նայինք ո՞վ է խօսեր աստ իշական խօսքը։ — Ինչ փուճ կը հարցընես, յայտնի բան է. ուր որ մոլորական և տգիտական բան կայ, ամէնը Մ'խիթարեանք խօսեր են. աստ ալ նոյն հերետիկոս և ախմար Մ'խիթարեանը խօսեր է, թէ որ խօսեր է նէ. վասն զի սուտի մէջ կը ըզանք կը խղդուինք կոր, և անանունին հայերէն գիտնալը և շիտակ հասկընալը ևս հարիւր վկայի կարօտ է։ Ովը պէտք չէ, զի յայտնի է. ո՞ւր է խօսեր և ինչ առթի մէջ, դուն ան նայէ։ — Սուրբ Փրկիչ եկեղեցին բացուած առջի տարին՝ Լուրիճան առաջին նախագահ եպիսկոպոսապետին հրամանաւ՝ իր առջևը բոլոր գլերին առջին հոգևոր կրթութիւն ընելու ատենը։ — Դուն աս նայէ, վերքը հոս է, չկլլուելու և իրաւցընէ կատղելու ճաթելու պատառը աս է. մինչև աս օր տատնևութը տարուան մէջ դեռ չեն մարսեր անանունեանք, ըստամքնուն վրայ կեցեր է։

Այս ատկեց երկու տարի առաջ ուրիշ խենթութիւն մ'ալ Ոլրթագեղի ժամատունը խօսեր է նոյն տխմար հերետիկոսը, թէ՝ լատինացի և ուրիշ ամէն ազգաց սուրբերուն ալ ընենք ջերմեռանդութիւն, ինչպէս որ կ'ընենք և կը դոլեմ զձեզ. բայց միւնակ անունց չընենք ու

եաքը ելլենք ըսենք որ մեր սուրբերը հրաշք չեն ըներ։ քիչ մ՚ալ մեր աղգային տօնական սուրբերուն նայինք, անոնցմով ալ Թախանձենք զաստուած որ իր հրաշքը ցուցնէ։ Այս խենթ խօսքը՝ անանունն որ հոն էր՝ երկու կնիկ, մէկ երկու հայերէն չգիտցող մարապետնե՝ րէ լսած ըլլալով, իր իմաստութեան և արդարութեան ոգին կը դարձնէ, ու հայ սուրբերը ֆռէնկէն նախա՝ պատիւ բռնենքի կը փոխէ։ Այդ տեղն է հիմա հոս Սողոմոնին միւս խրատը բռնելու, Թէ Ցուր պատաս՝ խանի անդդամին ըստ անդդամութեան նորա, զի մի իմաստնադոյն երևեսցի յանձն իւր, և ըսելու անանու՝ նին երեսին, որ Թէ և ատանկ քու շինածիդ պէս ըսած ըլլար, Ինչ ՁԼաս կ՚ըլլայ եղեր։ հաւատքի որ բանին կը դպչի, որ աստուածաբանութեան դէմ է։ Մ՚անաւանդ Թէ իր հոն տեղի սորվեցուցած անխարութիւնն ու ան՝ տարբերութիւնն է ուղիղ վարդապետութեան դէմ։ Ամէն մարդ իր հայրը՝ իր ծնողքը՝ իր լուսաւորիչը ու՝ ուիշն առաջ պատուելու չէ՞ մի եղեր, երախտագիտու՝ թիւնն ալ, ուղիղ վարդապետութիւնն ալ, խելքն ալ ատ չի՞ պահանջեր մի։ կամ Լուսաւորչայ, Երեսեսի, Սա՝ հակայ և Մեսրոպայ, Գրիգորացւոյն, Շնորհալւոյն և Ամբրոնացւոյն վրայ ալ Մխիթարեանց պէս հերե՝ տիկոսութեան կասկածմի կայ արդեօք անանունին միտքը, որովհետև անոնք շատ կը սիրեն կը պաշտեն ատ սուրբերնին։ Մէկը խիստ կարօտ եղած պիտի ըլլայ խելքի կամ ամբաստանելու նիւթ գտնելու որ այդպիսի բան բերանն առնու։ Ընշուշտ ատանկ գիտ՝ ցած ըլլալու է ան ատենին Գ՚երպ։ Հասուն փոխա՝ նորդ վարդապետը, որ ատ ամէն բանին եաքն ալ նոյն հերետիկոս և տխմար քարոզչին խոսքերին Թուղթ մը ունի գրած, որով կ՚աղաչէ և կը ստիպէ որ յանձն առնու ինքն ալ երբեմն երբեմն քարոզ տալու։ Հիմայ հասկրցանք որ ինչ վտանգաւոր բան է եղեր։ Խելքով ըրաւ ան տխմարն ալ, որ անոր վրայ բոլորովին կորեց քարոզ տալը։ Սուրբ Յոհաննէսի վՀիռները խարդախող ու փոխող մարդը, ինչ զարմանք է որ Մխիթարեանի մը խօսքն ալ փոխէ աւրէ։

Մէկէ ի զատ, անանունին ամէն բանին իր աղդու ոգիով պատասխան տալու համար, իրեն պէս նախատա՝

կան և կրակ ձգող գրուած մը շինելու էր, որ չկրնանք ընել. չէ նէ՝ աղուոր բաներ շատ կայ։ Ասան զի Մխիթարեանք հերետիկոս են ըսէ տէ՝ ինչ կ'ուզես նէ ըրէ, ըսողներուն և ընողներուն մէջ ինչքա՞ր չիգտուիր։ Գիտնանք ալ նէ շինել, չենք կրնար ընել. զի ոչ աստուած, ոչ բնական օրէնք և խիղճ, ոչ քրիստոնէութիւն և ոչ կրթութիւնը կը ներ։ Այս մենք չունինք անանունին մեծահոգի սիրտը՝ որ գրքին գլուխը յայտնի ըրաւ. մենք մարդոցմէ կը նկատենք, աստուծմէ և տերութենէն կը վախնանք, և աստուծմէ չվախցողէն ալ։ Այսչափս ալ ըսինք նէ, յայտնի անմեղութեան ջատագովութեան համար՝ իրաւունք և պարտք սեպեցինք ըսել ատանկ այլանդակ անիրաւութեան դէմ։ Զի ոչ եթէ անանունը միայն իր պարտքը կ'ընէ, ինչպէս որ բերանն է անդադար, հապա ուրիշներն ալ։ Այց մենք աս ալ գիտենք, որ ամէն պարտքէ առաջ իրաւունք մը պէտք է. իրաւունքն է որ պարտք կը բերէ, չէ թէ պարտքը իրաւունք։

Սակայն աս ալ կայ որ հիմայ խօսքերնիս լրմընցընելէն ետև կը տեսնենք որ աւելորդ տեղը աշխատեր ենք. ինչու որ՝ անանունին գիրքը՝ խելք ունեցողին առջին՝ ինքնիրեն ոչ միայն Մխիթարեանց Ջատագովութիւնը չեղծաներ բնաւ, չի ալ տկարացներ, այլ և մէկ նոր զօրաւոր ջատագովութիւն մըն է անոնց, նա և մեծ պատիւ, որուն համար պէտք է մանաւանդ հնորհակալ ըլլան՝ աստուծմէ եւած Տօն Կասպարոյին։ Ասան զի իրենք հազար տարի աշխատէին, գրէին ու ծրէին, անանուանց հողին և ինչ ըլլալը ատանկ աղէկ չէին կրնար նկարագրել ու հասկցընել, ինչպէս Տօն Կասպարոն ատ իր գրքովը հասկցուց. գրով և արդարացուց Ջատագովութեան բաժը (էջ 16) թէ "Ով որ Մխիթարեանները արհամարհելի երևցընելու և Հայաստանի Աբաբելոյն շինքը ի հիմանց քակելու ատելի պաշտօնը վրան առած է նէ, իրեն դիտած նպատակին բոլորովին անյարմար ճամբաներ կը բռնէ..., և Մխիթարեանց յաղթանակը և պարծանքը աւելցուց բոլոր աշխարհքին առջին, ինքն ալ կը խոստովանի (էջ 243), որ ամենաչար դիտ մը թելադրիչ եղեր է իրեն աս կրակը ձգելու, ինչպէս Հերոստրատոսին՝ Եփեսոսի հրաշակերտ տաճարը էրելու։

Եվ դպիր սրամիտ կարդացողը՝ անանունին Մխիթարեանները հերետիկոս և անպիտան ազգ է և ապստամբ ցուցընելու բոլոր աղուոր տրամաբանութեանց շարքը հասկըցած կ'ըլլայ վերէն 'ի վար ըսածներնէս, բայց ամէնը մէկէն ալ աչքի առջև տեսնելու համար լաւ կ'ըլլայ հոս համառօտ ետևէ ետև շարենք։

Մխիթար աբբան ազգին սխալմունքները ճանչցաւ, մէջերնուն առաւ քալեց, հալածանք կրեց ի Պոլիս, փախաւ Ֆրանկաց ուղղափառ երկիր վանք շինեց, քարոզեց, ամբաստանուեցաւ նախանձոտներէն՝ Հռոմ գնաց զինքն արդարացուց, և հոն անունցմէ Աբբահայր անուամբ պատուեցաւ. անանկ է նէ հերետիկոս է և հերետիկոսապետ։

Մխիթար աբբան յաւիտենական փրկութեան հասեր է, վասն զի ի ծոց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ մեռեր է իր ձեռնատուն վարդապետներէն իր վանքին մէջ վերջին խորհուրդներն առնելով, և գէշ պէտք չէ ըսել իրեն. անանկ է նէ ինքն հերետիկոսապետ և իրենները հերետիկոս են։

Մխիթարեանք սուրբ Աթոռէն, քսան Պապէ, կոնդակներ ունին, որոնց մէջ կ'ըսէ որ հաւատար իր սուրբ Աթոռին քարոզչացը իրենք ալ հրաման ունենան առաքելութեան և քարոզութեան երթալու, և ետքը ընդհակալ ալ կ'ըլլայ պտղաւէտ աշխատանքներնուն. անանկ է նէ հերետիկոս են։

Մխիթարեանք, ըստ այն հրամանին, հարիւր յիսուն տարի առաքելական Վիքարներէն, ազգային Վիքարներէն և իրեք Աթոռակալ Եպիսկոպոսապետներէն հաւատար Բոլէձոյ իշխանութիւն կ'ունենան հովուելու զժողովուրդը քահանայութեամբ և վարդապետութեամբ և խոստովանահայրութեամբ, և անանկ ալ կը ճանչցուին ազգէն և ազգային և օտար գլուխներէն. անանկ է նէ հերետիկոս են։

Մխիթարեանք քանի մը հեղ կը չարախօսուին Հռոմ, սուրբ Աթոռը կը քննէ, կ'արդարացընէ և սուտ զրպարտութիւն են եղածները կը վճռէ. անանկ է նէ հերետիկոս են։

Մխիթարեանց թշնամիները, ամենաուղղափառ սուրբերը, կ'ըսեն և կը գրեն և կը տպեն որ սուրբ Աթոռը

չէ կրցեր աղէկ քննել հասկընալ, խաբուեր է սխալեր է զանոնք ուղղափառ Ճանչնալուն և չի ջնջելուն. անանկ է նէ ջնջուելու հերետիկոս են։

Մ՝խիթարեանք տպած և ձեռագիր գրքերով հերձուածոց մոլորութեան դէմ կը զինին և ուղղափառութիւնը կը պաշտպանեն ի սկզբանէ մինչև ցայսօր. որոնց մէջէն տող մը բան չի գտներ անանուանը իրենց հերետիկոսութիւնը ցուցընելու. անանկ է նէ հերետիկոս են։

Մ՝խիթարեանք, երբոր հերձուածոց ձայնը կը բարձրանայ ու մէյտան կը կարդայ, կ՝երթան ուղղափառ Ճշմարտութիւնը աներկիւղ կը քարոզեն առաջի ուղղափառ վկայի որ դեռ ողջ է. անանկ է նէ հերետիկոս են։

Մ՝խիթարեանք, ան քարոզիչներն ալ մէկ տեղ, հաւասար այլոց քահանայից և ժողովրդոց կը հալածուին ու կ՝աքսորուին դեռ նոր նոր 1828ին, և հիչ մէկը Հայոց ժամ չերթար, այլ մնաւանդ իրենցմէ երկու վարդապետ ամենայն իշխանութեամբ սուրբ Գրոնէն կը խաւրուին առաքելական կոնդակով որ յաքսորս եղողներուն հոգիները հոգան. անանկ է նէ հերետիկոս են։

Մ՝խիթարեանք քշուելէն ետքը, իրենց և այլոց քահանայից ժողովրդէն որ և իցէ պատճառաւ այն հալածանքին ատենը հերձուածոց հետ հաղորդակցութիւն ընող ազգականներնուն, բարեկամներնուն և ծանօթներնուն ծանր ծանր յանդիմանողական և կշտամբողական թղթեր կը գրեն սաստելով անոնց ըրածին վրայ, որ դեռ ան թղթերն ալ անձինքն ալ շատը կեցած են. անանկ է նէ հերետիկոս են և անխտրութիւն սորվեցընող։

Մ՝խիթարեանք ազգերնին, լեզուներնին կը սիրեն, հնութիւնները կը փնտռեն՝ կը սորվեցընեն, հին ծէսերնին արարողութիւններնին՝ որ Հռոմ ալ կը յարգէ կոնդակով՝ կը պաշտպանեն. անանկ է նէ հերետիկոս են և ապրստամբ տերութենէն։

Մ՝խիթարեանք միայն աս վերջի 27 տարուանս մէջ մեծ 90 տեսակ, 120 հատորէն եւել գրքեր կը հանեն պէսպէս գիտութեանց և ուսմանց վրայ, որոնց քառասունէն եւել տեսակը՝ հոգևոր, բարոյական և աստուածաբանական և հաւատքի և ուղղափառութեան ջատագովութեան գրքեր են, անանկ է նէ անպիտան տգէտ և հերետիկոս են։

Մխիթարեանք իրենց կրթութեամբ, ծանրակայութեամբ, աւետարանական նեղողամիտ սիրով և խաղաղութեամբ, ազգասիրութեամբ և գիտութեամբ սիրելի են ազգին և յարգելի. ազգը անոնց դպչողին կը բարկանայ և իրենց տէր կը կայնի. անանկ է նէ անպիտան տգէտ խռովարար և հերետիկոս են։

Մխիթարեանք դեռ հակառակութիւն կրող Հայմաղդեայց ընկերութիւնը մերը չէ, չենք Ճանչնար կը գրեն Հռոմ. իսկ Գ. Դերպ. Հայսունը կ'ընդունի յատենի, որով և կը հաստատէ, և մեծ Պապ Պիոս մ'ալ կը կարդայ գլխընուն. անանկ է նէ Մխիթարեանք հերետիկոս են և ապստամբ։

Մխիթարեանք Հայոց մանր տխմար տղաքը վարժարանին կ'առնեն Լ. աղարիսթներուն պէս, աս դաշամբ որ հոն ուղղափառութիւն պիտի սորվին, և անանկ ալ կը սորվեցընեն, կը կրթեն, որ գոնէ պզտիկուց լսեն տոգորուին, անանկ է նէ հերետիկոս են և անխտիր հաղորդող։

Մխիթարեանց՝ լուսահոգի Գրիգոր ԺԴ. Սրբազան Պապը իւր սէրը և յարգը ցուցընելու համար իրենց և բոլոր աշխարհքի, իր փառաւոր մարմարիոնեայ արձանը պարգև կը խաւրէ Սուրբ Պ. աղարու վանքը. Ա. Հնետիկու կարդինալ պատրիարքն ալ փառաւոր Ճառ մը կը խօսի անոր վրայ և ի գովեստ Մխիթարեանց. անանկ է նէ հերետիկոս և տգէտ են։

Հիմակուան Պիոս Թ. Սրբազան քահանայապետն ալ Ա. այզմէն Ինկիլիզ արքեպիսկոպոս կարդինալին բերնով, բոլոր Մխիթարեանց առջևն իր սէրը և վարկումը և յարգը պատգամաւորութեամբ յայտնել կուտայ, կը մխիթարէ, կը քաջալերէ զիրենք Ճշմարիտ հօր պէս. բան մը՝ որ որչափ լրբանայ մէկը՝ չուրացուիր, վասն զի ատ բանդ առաջ Ա. այզմէնը պատրիարքին զուրցած ըլլալով, ան ալ թղթով առջի իրիկուընէ վանքը գրեր խմնց տուեր է. և աս թուղթը կեցած է. անանկ է նէ Մխիթարեանք հերետիկոս են։

Մխիթարեանցմէ (թող իրեք արքեպիսկոպոս աբբաները) երկու հոգի ալ սուրբ Լ. թոռը արքեպիսկոպոս կ'ընէ, և Ֆրոբականտայի սանտերուն ձեռնադրիչ ի Հռոմ. այս ինքն է Ա. Հ. Փափազեան Հայր Ոգնա-

տիոսը, և Հիւրմիւզեան Հայր Յդուարդը. անանկ է նէ հերետիկոս էն։

Մխիթարեանը առանձին կամ բոլոր միաբանութեամբը աղէկ բան մը ըրեր է, մոլորութիւն մը մերժեր՝ ուղղափառ վարդապետութիւն քարոզեր, գրեր, տպեր է. սուտ է, խաբեբայ է, կեղծաւոր է. իսկ մարդ է, յանկարծ մէկը տգիտութեամբ կամ կրիւք մը սխալեցաւ, խաբուեցաւ, չվայլած բան մը ըսաւ ըրաւ, հահ բոլոր միաբանութեան ֆոյեան դուրս ելաւ, բոլոր սուրբ Պ աղաղը նոյն յանցաւորն է, հերետիկոս է, տգէտ է։ Հետևութիւն յիրաւի՝ հիչ որ չէ նէ՝ խեղճ ողորմելի, ինչպէս ինքնին անանունն ալ աղէկ կ'ըսէ (էջ 71)։ Հերետիկոս բառին նշանակութիւնը մի չէյ տեսնք կոր արդեօք կամ մենք կամ անանունը, չէնէ մի փոխուեր հիմայ սուրբ եղեր է. իրաւունքներուն ինչ կանչելու է ասկէ ետքը։ Մ՝ օնթէսքիէօ մենծ օրէնսդէտին ըսածին պէս գիտէինք որ հին առենը՝ գիտնոյ կախարդ կ'ըսէին, հիմայ հերետիկոս. բայց հիմայ գիտունէն եւել բարի բան մը նշանակելու է առ բառդ անանունին գիրքը կարդացողներուն առջին։ — Ցեսա՞ր մի կարգաւ աղուոր տրամաբանութեանց շարք մը. խելք չունիս նէ՝ որդիդ անանունին քով դպրոց խաւրէ, որ ուղղախոհութիւն և ուղղադատութիւն սորվի. ինչ պէտք է այսուհետև Ս՝ բիստոտէլ Լ՝ ը, Հ՝ ոնտիլէաք Ն՝ էնուլէզի։

Մխիթարեանց հարիւր յիսուն տարի՝ այսչափ տպած և ձեռագիր գրքերով և քարոզութեամբ հերձուածոց մոլորութեան դէմ կռուելէն, և Հռոմայ սուրբ եկեղեցւոյն այսչափ դարու կէս ծառայութիւն ընելէն և անոր համար հալածանք և աքսորանք քաշելէն ետքը, ասանկ ան անանունին գրքին պէս մէկ փառաւոր պլսակ մը պէտք էր իրենց՝ արդարութեան փոխարէն հատուցումն. թէպէտ և սուրբ գիրքը կ'ըսէ որ Խարկութիւն մարդոյ զարդարութիւն ատուածոյ ոչ գործէ։ Մէկուն ըսեր էն որ սա մարդը քեզ կը բամբասէ և կը զրպարտէ կոր. Օ՝ արմ՝նք, ըսեր է, ես դեռ անոր աղէկութիւն մը ըրած չունիմ։

Այս ամէնը աղէկ, հասկըցանք, պիտի ըսէ Թերևս մէկը, բայց աղէկ մը չեմ իմանար որոնց դէմ է աս գրուա-

ծրա։ — Որո՞ւ, Լիսիոնոս տպած անանուն գրքին։ — Ո՞վ է ան գիրքը շինողը, Մխիթարեանց այսպիսի հռ զեով կատաղի թշնամին։ — Բա՛ շատ դժար բան հարցուցիր. որը կ'ըսէ Տօն Անթոնիո Օ՚ օրզովիչն է. որը Տօն Կասպարս Ալուչչինոն, որ սուտ ալ ըսաւ ու գրեց թէ ես եմ, ու հինգ հազար ղուրուշն ալ առաւ փախաւ. որը ուրիշ այլ և այլ անուններ կու տայ, որ անունցմէ ալ ոմանք կը փախչէին կոր, ոմանք ալ մէկ մէ կու վրայ կը ձգէին յանցանքը՝ ես չեմ ան է ըսելով, որն ալ վերջապէս անանկ անուններ կու տայ որ չըսուիր։ Մ՚էնք անանկ յանգուշն դատողութիւն ընել չենք ու զեր. այլ գրքին մէջ յայտնի տեսածնիս և կարդացածնիս կրնանք վկայել որ Տօն Կասպարս Ալուչչինոն չէ ատ գրքին շինողը, հեղինակը։ Ալ ասն զի

Նախ՝ Տօն Կասպարսն որ գիրքը դուրս ելլալէն մէկ քանի օր ետքը յանձն առաւ թուղթ գիր տալու որ զինքը ան գրքին հեղինակ շինեն. թէ որ իրաւցընէ ինքը ըլլար հեղինակը նէ ինչու քանի մը օր առաջ գրքին Ճակատը չի դներ պիտի իր անունը, ու պարապ տեղը ասանկ մէկ ծանր ու դայթակղական բամբասանքի տակ ձգեր այն մարդիկը զորոնք գիրքը մինչև երկինքը կ'ուզէ հանել։ Թող որ ինքը Տօն Կասպարսն իր միայն մեծաւորին ալ ուրիշ վաւերական թուղթ գիր տուեր է ~~ինքը շինողն։~~ Ինանկ է նէ Տօն Կասպարսն ատ գրքին հեղինակը չէ և չկրնար ըլլալ։

Երկրորդ՝ (էջ 80) հայերենէ ի թալեան բառ առ բառ թուղթ թարգմանեցի կ'ըսէ. (ան թուղթը որ շատ փնտրռելով հազիւ գտեր է, յայտնի է որ Բրոբական տայի դիւանը չէ. վասն զի հոն չկայ ան թուղթը, և թէ որ ըլլար՝ հազիւ չէր գտներ)։ Բա՛ զիս ան դին ալ հայու բառերու՝ թէ և սխալ ու տգիտական՝ քննութիւն կ'ընէ, և (էջ 43) շատ հեղու Հայոց քարոզնեերը ըսեր եմ, ինչ ըլլալնին աղէկ գիտեմ կ'ըսէ. որոնցմով հայազգի ըլլալը կ'իմացընէ. իսկ լատին և թալեան լեզուի խիստ յայտնի բաներու մէջ տգիտանալով ու սխալելով՝ իտալացի ըլլալը կը յայտնէ, ուրեմն Տօն Կասպարսն որ հայ չէ և իտալացի է, ատ գրքին հեղինակը չէ և չկրնար ըլլալ։

Երրորդ՝ Մ՚ելգոնեան Աբբահօր առ Գարասիպէտ

բժիշկը գրած թղթին բնագիրը տեսեր եմ կ'ըսէ (էջ 57), և աս բնագիրը ըսածը ինչ որ է նէ՝ Պրոբականտայի գիւանն է, հոն կը պահուի. նմանապէս (էջ 214) առ Պրոբականտա գրուած թղթերէն խապար կու տայ որ նոյն գիւանին մէջն են։ Հիմա գիտենք որ այն գիւանը գաղտուկ ու պահծու տեղ է, ուր՝ հոն տեղի պաշտօնատէրներէն զատ տէյմէ մարդ չկրնար մտնալ։ Իսկ Յօն Կասպարոյին վրայ լրագիրները խեր մը բաներ ըսին. ուրեմն անանկ մարդու մի պիտոր բացուած ըլլայ այն գիւանը։ Անանկ է նէ Յօն Կասպարոն ատ գրքին հեղինակը չէ և չկրնար ըլլալ։

Չորրորդ՝ (էջ 216) կը խոստանայ անանունը հրատարակելու այլ և այլ ամբաստանական թղթեր Մը-խիթարեանց դէմ, Անտանայէն Աքտերեան եպիսկոպոսէն դեռ նոր գրուած. ասանկ գաղտուկ թղթերը հարկաւ եպիսկոպոս մը ազգային եպիսկոպոսի կը գրէ՝ չէ թէ Ս ուչչինոյին պէս օտարազգի անծանօթ մարդու մը։ Դարձեալ՝ (էջ 194) կ'ըսէ թէ Հիւրմիւզեան աբբահայրը Համազգեաց ընկերութեան վրայօք երբ ուր և որսն գրած թղթերը գիտէ. իսկ արդ Հիւրմիւզեան աբբան Համազգեաց ընկերութեան վրայօք երկու թուղթ ունի գրած՝ մէկը Պրոբականտային և մէկալը Դերպ. Հասունին, որոնց երկուքն ալ չէր կրնար գիտնալ Յօն Կասպարոն. անանկ է նէ Յօն Կասպարոն ատ գրքին հեղինակը չէ և չկրնար ըլլալ։

Հինգերորդ՝ գրքին հեղինակը Մխիթարեանց հիմկու աբբային Դերպ. Գէորգ արքեպիսկոպոսին հետ խօսելով (էջ 160) կ'ըսէ, թէ "Այս քեզ անձամբ Ճանչցեր եմ, շատ տեղ և շատ հեղ տեսեր եմ. խօսեր եմ հետդ, սեր և համարում ունիմ վրադ,,։ Այտ աբբան վեց տարիէն ետեղ է որ աբբայ է վանքը, երեկուան Յօն Կասպարոն ուր և երբ տեսեր է զինքը։ Պիտի ըսէ որ՝ ուր որ է նէ՝ տեսեր եմ։ — Աբբան ալ կ'ըսէ կոր որ ամենեւին քնաւ չեմ Ճանչնար, չեմ տեսած, չեմ խօսած ատանկ մարդու հետ, որուն անունը ևս մինչև ատ գրքին ելլալը լսած չէի։ Ուրու հաւատանք հիմա. Դերպ. Իշխոյին ըսածին պէս՝ բոլոր աշխարհք խաբող Յօն Կասպարոյին, որ իր օրինաւոր մեծաւորին գրով և ստորագրութեամբ վաւերական վկայագիր

տուաւ գրքին հեղինակը ինքը չըլլալուն, չէ նէ մի Գէորգ արքեպիսկոպոսին որ Ա ենեւտիկէն չէր կրնար Ստամբոլ տեսած ըլլալ գինքը։ Ուրեմն ատ գրքին հեղինակը Յօն Կասպարօն չէ և չկրնար ըլլալ։

Ա եցերորդ՝ գիտեն ամենքը, նաև բարոյական չկարդացող անուս մարդիկ ալ՝ որ կիրք ըսած բանդ մէկ պատճառէ մը առաջ կու գայ. և ինչպէս սէրը ու բարեկամութիւնը, անանկ ալ ատելութիւնը և թշնամութիւնը, մարդ մարդու հետ չկրնար ունենալ մինչև որ մէկմէկու հետ ճանչցողութիւն մը, վերաբերութիւն մը ունեցած չըլլան, բան մը անցած չըլլայ մէջերնին։ Իսկ արդ Յօն Կասպարօն մինչև ատ գիրքը շինած ժամանակը Մխիթարեան միաբանութեանը հետ ոչ վերաբերութիւն մը ունեցեր է, ոչ ճանչցողութիւն, ոչ վէճ մը կամ կռիւ մը, ոչ հակառակութիւն և ոչ մէկ պզտիկ վնաս մը տեսեր է Մխիթարեանցմէ, և ոչ Մխիթարեանը իրեն շահուն դպեր կամ արգելք եղեր են և կամ կրնային ըլլալու. և թէ որ անոնցմէ մէկու մը հետ ալ քիչ մը ճանչցողութիւն ունեցեր է նէ՝ ան ալ սիրով ու բարեկամութեամբ է եղեր մինչև եռքը։ Հիմայ ասանկ մէկ օտար մարդ մը ինչպէս կրնար այն աստիճան դժոխային թշնամութիւն, և կատաղութիւն ունենալ որ ատ գիրքը կարենար գրելու և Մխիթարեանները այնչափ նախատելէն ու զրպարտելէն ետև դեռ սիրտը չպաղըշարկելով՝ զանոնք քշէ, վարէ, ողջ ողջ երէ, և հիմերնին քանդէ։ Մէկ օտար ու անտարբեր սիրտ մը չկրնար ընել ատիկայ։ Ընանկ է նէ ատ գրքին հեղինակը Յօն Կասպարօն չէ և չկրնար ըլլալ։

Լ օթներորդ և եռքի սունթուռլու ապացոյցը ան է որ, Մխիթարեանը իրենց Ջ ատագովութեան 13 էջը ըսեր են որ՝ «Լ թէ Գէորգ. Հուրիճան և Մարուշ նախագահներէն ետև հիմայ եկող մէկ Դաշտծնակալ մը՝ անոնց՝ և այսչափ Սրբազան Պապերուն և առաքելական Ա իքարներուն Մխիթարեանց վրայ ունեցած բարի համարումը սուտ հանել ուզէ նէ, շատ ծանր ծանր փաստեր և վկաներ պէտք է մէջ բերէ.,.։ Ընչ խօսքս ատ գրքին անանուն հեղինակը յայտնապէս իր վրայ կ'առնէ, ու (էջ 54) կը պոռայ, որ՝ եթէ Մխիթարեանք խեղջ տեղերնին նստէին և Դաշտծնակալ

ըսածը նախատէին նէ՝ ես ալ էլի գրիչս ձեռք առներ ու գրեր։

Այս (էջ 89, 91) դարձեալ նոյն Պաղծոնակն յիշելով ու ինք զինքն խմանալով կ'ըսէ յայտնի՝ թէ զիս կը գրգռեն։ Այ, հիմա Պետրոս Լուրիճան և Պարուշին եռևէն թէ որ Յօն Կաստարօն եղաւ նէ Պաղծոնակ՝ կ'աւտանք որ ատ գրքին հեղինակն ալ ինքն էր. թէ որ էր՝ Յօն Կաստարօն ուրիշին նախատուելէն այնչափ էր կրնար գրգռուիլ և ատ գրքին հեղինակն ալ ինքը էր և էլրնար ըլլալ։

Ընանկ է նէ ոմ է. թէ որ մինչև հիմա չկրցար տեսնալու զինքը այն Քաքասէնոյին մաղին ետևէն, պարապ տեղը մեզի մի՛ հարցներ. մենք խօսքերնուս ըակիզբէն ըսինք որ ատ մաղը վերցնել չենք ուզեր, և անանունին տուած պոլմոչին քաղաքավարութեանը կանոնին դէմ ընել. երանի՛ թէ ուրիշներն ալ չհարկաւորէին պատուելու վերցնելու ատ դիմակը։

Բայց ով ալ ըլլայ աս սոսկալի ծանր գայթակղութիւնը ազգին տուողը, աստուծոյ մեծ վայրն արժանի է։ Այս պէտք է մտածել որ արդար դատաւորն Քրիստոս կ'ըսէ որ ոտքդ կամ ձեռքդ քեզ գայթակղեցընէ նէ, կտրէ նետէ. աչքդ՝ նոյնպէս հանէ նետէ։— Հապա գլուխդ որ գայթակղեցընէ նէ, ինչ ընելու է։ — Այսր վրայ բան մըն չըսեր....

Փառք յաւիտեանս, ամէն։

Պետրոս Պողոսեան
ՍԵՐԵՐԱԳԵՏՆՈՑ
Ասարան

«Ազգային գրադարան»
NL0127284